«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի (այսուհետ՝ ԵՄՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 14

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 18

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 21

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 21

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 26

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 37

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 47

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 55

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 66

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 72

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 78

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 83

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 89

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 97

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 98

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 98

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 100

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 103

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 107

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵՄՀ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 108

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 109

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Եվրասիա միջազգային համալսարանի (ԵՄՀ) ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ համալսարանը երրորդ անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց: Փորձաքննության ընթացքում դիտարկվել են նախորդ գործընթացներից հետո հաստատության ունեցած առաջընթացը, Թերությունների վերացման ծրագրով նախատեսված բարելավումների ազդեցությունը համալսարանի գործունեության տիրույթների վրա:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ ԵՄՀ-ն իր տեսլականն է համարում. «Լինել տարածաշրջանում ճկուն կառավարում ունեցող առաջատար կրթական հաստատություն՝ միտված աշխատաշուկայի անընդհատ զարգացող պահանջներին համապատասխան գործնական հմտություններով ու կարողություններով, տեսական և կիրառական գիտելիքներով օժտված բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստմանը»:

Նախորդ հավատարմագրումից հետո ԵՄՀ-ն վերանայել է կրթական ծրագրերի վերջնարդյունքները՝ փորձելով ապահովել նմանատիպ այլ կրթական ծրագրերի հետ համահունչությունը, ինչպես նաև դրանց համապատասխանությունը Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին: Կրթական ծրագրերի իրականացման հիմքում դնելով շարունակաբար դրանք բարելավելու միտումը՝ բուհը 2019-2020 ուսումնական տարվանից սկսած մեկնարկել է կրթական գործընթացների բարելավման հերթական շրջափուլը, որի արդյունքում վերանայել են կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման և կրթական ու առարկայական ծրագրերի ձևաչափերը: Բուհը աշխատանքներ է իրականացրել նաև դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման ուղղությամբ: Փորձագիտական խումբը կարևորում է բուհի կողմից իրականացվող բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի վերջնարդյունքների դիտարկումը՝ դրանք հստակորեն տարանջատելու տեսանկյունից: Կարևոր հանգամանք է նաև կամընտրական դասընթացների տեղաբաշխման և դրանց ընտրության մեխանիզմների հստակեցումը կրթական ծրագրերի նպատակներին հասնելու համար:

ՄԿԾ-ների կարիքների և ՊԴ կազմի որակավորումների միջև փոխկապակցվածության ապահովման նպատակով բուհը վերաձևակերպել է որակավորման նկարագրիչները՝ ըստ մասնագիտությունների և ուղղությունների, սահմանել ՊԴ կազմի ընտրության չափանիշները,

վերանայել է պաշտոնի անձնագրերը՝ հստակեցնելով պրոֆեսորին, դոցենտին, ասիստենտին և դասախոսին ներկայացվող ընդհանուր պահանջները: Կարևորելով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումը՝ բուհը շարունակաբար իր ՊԴ կազմը համալրում է ոլորտային գործատու դասավանդողներով: Կրթական ծրագրերի նպատակների իրականացման համար բուհն ունի նաև անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և ենթակառուցվածքներ, Էրազմուս+ ծրագրերի միջոցով ևս շարունակաբար համալրում է իր ռեսուրսները, համագործակցում է ոլորտային ինստիտուտների և գիտական կազմակերպությունների հետ ռեսուրսների համատեղ օգտագործման և պրակտիկաների կազմակերպման նպատակով: Այսուհանդերձ, բուհի գրադարանային ռեսուրսները և «Ֆարմացիա» կրթական ծրագրի իրականացման համար նախատեսված լաբորատորիաները դեռևս վերազինման կարիք ունեն՝ բավարարելու միջազգային չափանիշներին և ապահովելու կրթական ծրագրերում սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը:

Ուսումնասիրելով բուհի կրթական ծրագրերը և դիտարկելով դրանց իրականացման համար համապատասխան դասախոսական կազմի առկայությունը, ենթակառուցվածքների շարունակաբար բարելավումը՝ փորձագիտական խմբի դիտարկմամբ բուհն ապահովում է շնորհվող որակավորումների արժանահավատությունը:

Անդրադառնալով բուհի ռազմավարական կառավարմանը՝ կարելի է նշել, որ համալսարանի առաքելությունն ընկալելի է շահակիցների համար: Բուհը հընթացս բարելավում է ռազմավարական պլանավորման և գնահատման գործիքակազմը՝ ըստ ոլորտների սահմանելով գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ: Բուհը անհրաժեշտություն ունի նաև լավարկելու ֆինանսական ռեսուրսների պլանավորման մեխանիզմները՝ համադրելով դրանք ՌԾ նպատակների հետ:

Համալսարանում կառավարումն իրականացվում է կոլեգիալ և միանձնյա կառավարման մարմինների գործունեության զուգակցմամբ: Փորձագիտական խումբը կարևորում է շահակիցների ընտրության, խորհուրդներում նրանց ներգրավման մեխանիզմների լավարկումը, ինչը մեծապես կնպաստի կայացված որոշումների հիմքում շահակիցների կարիքների արտացոլմանը և դրանց վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Կարևոր հանգամանք է նաև ռիսկերի կառավարման գործիքակազմի ներդրումը՝ հաշվի առնելով ՀՀ մարտահրավերները, բուհի միտումները շարունակաբար միջազգային ուսանողների թվի ավելացման և նոր կրթական ծրագրերի ներդրման ուղղությամբ: Կառավարման գործընթացների բարելավմանը որոշակիորեն օգնում է նաև Որակի ապահովման համակարգը՝ հաստատության ռազմավարական ուղղությունների վերաբերյալ տվյալներ տրամադրելու և իրականացվող գործընթացների աջակցման միջոցով, իսկ դրանց համակողմանի և պարբերական վերլուծությունն էականորեն կնպաստի կայացված որոշումների արդյունավետության բարձրացմանը:

Բուհը շարունակաբար բարելավում է կրթական միջավայրը, ընդլայնում ուսանողներին մատուցվող ծառայությունները: Իր յուրահատկություններին համապատասխան՝ բազմամշակույթ միջավայրում բուհն ապահովում է նաև միջազգային

ուսանողների ինտեգրումը ուսանողական միջավայրին՝ ներգրավելով նրանց բուհի կառավարման և ուսանողական մարմիններում:

Կարևորելով իր իրականացրած գործունեության վերաբերյալ հաշվետվողականությունը և թափանցիկությունը՝ բուհը իր փաստաթղթային հենքը, միջոցառումները, ուսանողների ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է դարձնում իր պաշտոնական կայքում և սոցիալական հարթակներում: Սոցիալական բարձր պատասխանատվություն ունենալով՝ բուհը մի շարք միջոցառումներ է իրականացնում սոցիալական տարբեր շերտերի, ապագա ուսանողների համար:

Բուհն իր ռազմավարությամբ կարևոր է համարում նաև կիրառական և գիտական հետազոտությունների խթանումը: Այս ուղղությամբ նախորդ հավատարմագրումից հետո բուհը որոշ քայլեր է իրականացրել՝ փորձելով նոր խթաններ ստեղծել, ձևավորել համապատասխան ենթակառուցվածք հետազոտության իրականացման և խրախուսման համար: Այդուհանդերձ, այս ուղղության համար սահմանված նպատակներին հասնելու համար բուհը դեռևս կարիք ունի իր հնարավորությունների գնահատման, հետազոտական գործընթացներում դասախոսական կազմի ներգրավվածության ընդլայնման, կրթություն-հետազոտություն կապերի ամրապնդման համար:

ԵՄՀ-ն խրախուսում է փորձի փոխանակումը և միջազգայնացումը՝ ներգրավվելով տարբեր միջազգային ծրագրերում, որոնք դասախոսական և ուսանողական համակազմի կարողությունների զարգացման հնարավորություն են տալիս: Բուհը համագործակցում է նաև ոլորտային տեղական և միջազգային կազմակերպությունների հետ ուսանողների պրակտիկաների կազմակերպման և գործնական հմտությունների փոխանցման համար: Այսպիսով, կարելի է նշել, որ բուհը շարունակաբար ջանքեր է գործադրում ու ռեսուրսներ տրամադրում իր երկարաժամկետ զարգացումն ապահովելու համար:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ռազմավարական պլանավորման գործիքակազմի առկայությունը,
2. հաստատության առաքելությունից բխող և ՀՀ ՈԱՇ-ին համապատասխան կրթական ծրագրերի իրականացումը,
3. կրթական ծրագրերի բենչմարքինգի և լավագույն փորձի տեղայնացման մեխանիզմների կիրառումը,
4. ուսանողների կրթական կարիքներին համահունչ ուսումնական միջավայրի շարունակական լավարկումը,
5. մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսական կազմով համալրվածությունը,
6. ենթակառուցվածքների ու ռեսուրսների շարունակաբար բարելավումը՝ հաշվի առնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներին,
7. բուհի գործունեության մասին հաշվետվողականության ապահովումը ներքին և արտաքին շահակիցների համար,

8. բուհի սոցիալական պատասխանատվությունը հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման համատեքստում,
9. միջազգային ծրագրերում բուհի ներգրավվածության շարունակաբար ավելացումը՝ միտված անձնակազմի և ուսանողների կարողությունների զարգացմանը,
10. որակի ապահովման համակարգի ազդեցությունը բուհում ընթացող գործընթացների վրա։

Հաստատության թույլ կողմերն են.

1. ֆինանսական պլանավորման և ՌԾ նպատակների միջև առկա թույլ կապը,
2. ռիսկերի կառավարման մեխանիզմների անկատարությունը,
3. կամընտրական դասընթացների բաշխման և դրանց ընտրության մեխանիզմների անկատարությունը,
4. կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման գործընթացներում շահակիցների ոչ ամբողջական շրջանակի ներգրավումը,
5. կրթություն-հետազոտություն կապի ոչ լիարժեք արտահայտումը,
6. դասախոսական կազմի՝ հետազոտական գործընթացներում ներգրավվածության ոչ բավարար մակարդակը,
7. հետազոտական դրամաշնորհային ծրագրերում և միջազգային հետազոտական շտեմարաններում բուհի ներգրավվածության ցածր ցուցանիշները,
8. ֆինանսների բազմազանեցման մեխանիզմների սակավությունը,
9. բուհի կողմից հավաքագրված տվյալների համակողմանի և ամբողջական վերլուծության գործիքակազմի անկատարությունը։

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ներդնել ֆինանսական ռեսուրսների պլանավորման և ՌԾ գործողությունների նպատակների համահնչեցման մեխանիզմներ։
2. Գնահատել բուհի սահմանած ռազմավարական նպատակների իրագործելիությունը՝ կապակցելով դրանք սահմանված ԳԱՑ-երի և բուհի ռեսուրսների հետ։

Կառավարումն ու վարչարարությունը

3. Ապահովել ռազմավարական հստակ պլանավորում՝ իրագործելիության երաշխիքներով, պլանավորմանը համապատասխան կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ իրականացում՝ պատասխանատվությունների հստակ բաշխմամբ, մշտադիտարկում՝ համակողմանի վերլուծական հիմքով։
4. Մշակել և ներդնել բուհի ռազմավարական պլանավորման ռիսկերի նվազեցման մեխանիզմներ։

5. Կատարելագործել կառավարման համակարգում կոլեգիալության գործուն մոտեցումները՝ բուհի գործունեության վրա ազդող գործոնների առավել համակողմանի վերուծական հենքով։
6. Ապահովել փաստաթղթերի գնահատման, քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության իրականացման համար որակի կառավարման սկզբունքի լիարժեք կիրառումը։
7. Կատարելագործել ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակումների և դրանց գնահատման մեխանիզմները։
8. Բարելավել ռազմավարական նպատակներով պայմանավորված գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման մեխանիզմները՝ հենված համակողմանի գնահատումների վրա։

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Ապահովել կրթական ծրագրերի բարելավման գործընթաց՝ ուղղված աշխատաշուկայի պահանջները բավարարող շրջանավարտների պատաստմանը և ԵՄՀ կրթական ծրագրերի տեսանելությունը համանման ծրագրերի շրջանում բարձրացնելուն։
10. ՄԿԾ վերջնարդյունքների երաշխավորման նպատակով ապահովել ուսումնառության վերջնարդյունքների և հանձնարարականների, ուսուցման, ուսումնառության ու գնահատման մեթոդների փոխկապակցվածությունը՝ հատուկ ուշադրություն հատկացնելով պրակտիկ կարողություններին և հմտություններին։
11. Հստակեցնել կամընտրական դասընթացների բաշխման և ընտրության մեխանիզմները։
12. Դիտարկել բակալավրիատում և մագիստրատուրայում իրականացվող դասընթացները՝ դրանց բովանդակային կրկնություններից խուսափելու նպատակով։
13. Ապահովել միջազգային ուսանողների անգլերենի իմացության համապատասխան մակարդակ ընդունվելիս՝ երաշխավորելով ուսումնական գործընթացում արդյունավետ ներգրավվածության հնարավորություն։

Ուսանողները

14. Ներդնել միջազգային ուսանողների՝ մասնագիտական հետազիծն ուսումնասիրելու և տվյալների հավաքագրման գործուն մեխանիզմներ։
15. Քայլեր ձեռնարկել Ուսանողական խորհրդի դերի հստակեցման ուղղությամբ՝ կարևորելով բոլոր մակարդակներում ուսանողների ներգրավվածությունը և նրանց կարիքների վերհանումը։
16. Ներդնել ուսանողների կողմից իրականացվող հետազոտությունների և ՄԿԾ նպատակների փոխկապակցման, ծրագրերում հետազոտական առաջադրանքների արտացոլման հստակ գործիքակազմ։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

17. Հստակեցնել ՄԿԾ-ներում՝ «Դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները»՝ սահմանելով նվազագույն շեմեր, որոնք դասախոսը պետք է ունենա աշխատանքի ընդունվելիս:
18. Բարելավել դասալսումների գնահատման ձևաչափը՝ կարևորելով համապատասխան դասախոսի դիտարկումները և դրա հիման վրա բարելավման գործընթացների պլանավորումը:

Հետազոտությունը և զարգացումը

19. Հստակեցնել հետազոտական կենտրոնի դերը բուհի սահմանած նպատակների իրագործմանը հասնելու համար:
20. Ներդնել դասախոսական կազմի՝ հետազոտական դրամաշնորհային ծրագրերին դիմելու կարողությունների զարգացման մեխանիզմներ:
21. Միջոցներ ձեռնարկել տարբեր համալսարանների միջազգային վարկանիշավորման ցանկերում բուհի ներկայացվածությունն ապահովելու համար:
22. Բարելավել ԵՄՀ դասավանդողներին տրվող խրախուսման մեխանիզմները հետազոտության ոլորտում արձանագրած հաջողությունների համար՝ սահմանելով հստակ չափանիշներ:
23. Ներդնել ուսումնական գործընթացի և հետազոտության փոխկապակցման ինստիտուցիոնալ մեխանիզմներ:
24. Ձևավորել հետազոտական գործընթացի իրականացման և դրա արդյունքների միջազգայնացման գործիքակազմ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

25. Մշակել և ներդնել ֆինանսական աղբյուրների բազմազանեցման մեխանիզմներ՝ օգտագործելով նաև հաստատության կառավարման խորհրդի ամբողջական ներուժը:
26. Համապատասխան միջոցներ ձեռնարկել «Ֆարմացիա» կրթական ծրագրի համար նախատեսված ենթակառուցվածքները բարելավելու համար:
27. Հաշվարկել ըստ կրթական ծրագրերի ուսանողների համար նախատեսված ռեսուրսների տրամադրումը՝ երաշխավորելու կրթական ծրագրերի իրականացման կայունությունը:
28. Ներդնել լաբորատորիաներում անվտանգության կանոնների պահպանման համակարգ ուսանողների անվտանգ ուսումնառությունն ապահովելու համար:

Հասարակական պատասխանատվությունը

29. Հաշվետվողականության գործընթացում ապահովել գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներին համապատասխանության գնահատումը՝ այն դնելով հետագա պլանավորման հիմքում:

30. Ապահովել ԵՄՀ կայքէջում առկա հայալեզու տարբերակի և օտարալեզու տարբերակների նույնականությունը՝ հաշվի առնելով ԵՄՀ միջազգայնացման միտումները։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

31. Համապատասխանեցնել ՄՈՒՀ-ի ուսանողների՝ անգլերենի մակարդակը կրթական ծրագրերով նախատեսված անգլերենով առաջարկվող դասընթացներին։

Որակի ներքին ապահովման համակարգը

32. Ապահովել որակի ամբիոնային մասնագետների, որակի գործակալ ուսանողների առավել համակարգված և հստակեցված գործունեության՝ միտված որակի ապահովման գործընթացների ապակենտրոնացմանը։

33. Իրականացնել ՈԱԿ-ի և այլ օղակների կողմից առավել համակողմանի վերլուծություններ (այդ թվում՝ որակի ապահովման համակարգի)՝ հիմնված բազմակողմանի տվյալների, ներքին ու արտաքին շահակիցների շրջանում ուսումնասիրությունների արդյունքների դիտարկման և համադրման վրա։

34. Ապահովել տարեկան հաշվետվությունների շրջանակում ինքնավերլուծության համար համապատասխան տեղեկատվության հավաքագրում ու վերլուծություն՝ միաժամանակ այդ հենքով համապատասխան պարբերականությամբ հիմնավորված SWOT վերլուծության իրականցմամբ։

Կարեն Թոչունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

18-ը սեպտեմբերի, 2023 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Բարձրագույն կրթական տարածքին ԵՄՀ ինտեգրումը դիտարկելիս գնահատման ուշադրության կենտրոնում են եղել հետևյալ թեմաները՝ ուսումնական պլանների որակի չափանիշները, անձնակազմը և ռեսուրսները, գիտական հետազոտությունները և միջազգայնացումը:

Կարելի է արձանագրել, որ Եվրասիա միջազգային համալսարանի և եվրոպական բուհերի միջև կան որոշակի տարբերություններ, բայց առաջարկությունների և բարելավումների շնորհիվ դրանք կարելի է հասցնել նվազագույնի:

Ծրագրերի, անձնակազմի և ռեսուրսների որակի չափանիշներ

Եվրոպական բարձրագույն կրթության տարածքն ապահովում է Եվրոպայում բարձրագույն կրթության ավելի համադրելի, համատեղելի և համահունչ համակարգեր: Դեղագործության ոլորտում նոր ծրագրով ԵՄՀ-ն հետևում է այս չափանիշներին, բացառությամբ 4-ամյա ուսումնական ծրագրի՝ հաշվի առնելով Հայաստանում հատուկ մասնագիտական կրթության առանձնահատկությունները:

Եվրասիա միջազգային համալսարանի ծրագրերը, բովանդակությունը և կրեդիտային միավորները համադրելի են, համատեղելի և համահունչ Եվրոպական բարձրագույն կրթության հետ:

Բուհն ունի Որակի ապահովման կենտրոն՝ կրթական ծրագրերի որակը բարձրացնելու և ուսանողների ու ղեկավարության տարբեր մակարդակների հետ զարգացումը քննարկելու համար:

Այնուամենայնիվ, խնդիրներ են առաջանում լաբորատոր սարքավորումների պարագայում, որոնք չեն համապատասխանում եվրոպական չափանիշներին: Դեղագործության ծրագիրը համեմատաբար նոր է և փոխկապակցված չէ բնական գիտությունների այլ ծրագրերին, ինչպիսիք են քիմիան, ֆիզիկան, կենսաբանությունը և բժշկությունը, քանի որ Դեղագործությունը ԵՄՀ միակ բնագիտական ծրագիրն է: Ամբողջ ծրագրի ներդրումը շատ թանկ արժե հատկապես սահմանափակ բյուջե ունեցող մասնավոր համալսարանի համար: Մեծ ջանքեր են պահանջվում դեղագործական ծրագիրը շարունակաբար կատարելագործելու համար, հատկապես նոր և ժամանակակից լաբորատոր սարքավորումներով համալրման հարցում:

Դեղագործության ոլորտում մագիստրոսական ծրագիր պատրաստելու և ներդնելու գաղափարը գովելի է և ապագայի համար բացարձակապես անհրաժեշտ, բայց այս հատուկ հանգամանքներում շատ դժվար խնդիր է:

Այցի ընթացքում իրականացված քննակումները ցույց են տալիս որակի մշակույթի և որակի ներքին ապահովման համակարգի մասին լավ տեղեկացվածությունը շահակիցների շրջանում: Ծրագրերի ղեկավարները և դասախոսները բաց են ապագայում ծրագրերի քննարկումների, գնահատման և կատարելագործման համար:

Հետազոտություն

Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրերով համալսարանում գիտական հետազոտությունը հիմնարար նշանակություն ունի կրթության որակի համար, սակայն ԵՄՀ-ում գիտական հետազոտությունները սահմանափակ են, իսկ հրապարակումների քանակը՝ քիչ, այդ թվում՝ գրախոսվող միջազգային ամսագրերում: Մյուս կողմից, կազմակերպվել են մի քանի ազգային և միջազգային գիտաժողովներ, և համալսարանի անձնակազմը մասնակցել է ազգային աղբյուրներից ֆինանսավորվող ծրագրերի իրականացմանը:

Բայց այս գործունեությունը սահմանափակվում է համալսարանի դասախոսների մի փոքր խմբով: Գերիշխող խումբը կա՛մ ակադեմիապես ակտիվ չէ, կա՛մ իր աշխատանքները հրապարակում է տեղական հանդեսներում:

Փորձագիտական այցը ցույց է տվել, որ դասախոսների շրջանում կա անգլերենի գերազանց տիրապետող ներկայացուցիչների մեծ խումբ, որոնք ակտիվ համագործակցում են արտասահմանյան բուհերի հետ, սակայն այդ համագործակցությունն անհատական նախաձեռնությունների արդյունք է, այլ ոչ թե ԵՄՀ-ում գիտական հետազոտությունների խթանման համակարգի արդյունք:

Միջազգայնացում

Բարձրագույն կրթական ծրագրերի միջազգայնացումը մեծացրել է միջազգային ուսանողների շարժունությունը ամբողջ աշխարհի ՄՈՒՀ-երում: Միջազգայնացումը համաշխարհային համալսարանների վարկանիշի հիմնարար ցուցանիշն է: Ակնհայտ է, որ ներգնա և արտագնա միջազգային ուսանողները շատ ՄՈՒՀ-երի համար հեղինակության և որակի նշան են: ԵՄՀ-ն համեմատաբար լավ կապեր ունի Ասիայի և Եվրոպայի համալսարանների հետ: Էրազմուս+ ծրագրի շրջանակներում փոխանակումն իրականացվում է Իտալիա, Իսպանիա և Գերմանիա ասպիրանտների փոխանակմամբ:

Դեղագործական ծրագրի ուսանողների մեծ մասը գալիս է արտասահմանից, մասնավորապես՝ Իրաքից: Այս տեսանկյունից բուհը պետք է մեծ ջանքեր գործադրի՝ ընդլայնելու ներհոսքն օտարերկրյա ուսանողների ավելի շատ դիմումներներ ստանալով:

Խորհրդատվություններ

- Վերլուծել ՄԿԾ-ների և ուսումնական պլանների բովանդակությունը արդիական գիտելիքով և բովանդակությամբ հագեցվածության տեսանկյունից:
- Ապահովել ժամանակակից լաբորատոր սարքավորումների առակայությունը՝ հատկապես Դեղագործության մագիստրոսական ծրագրի մեկնարկի նպատակով:
- Մեծացնել ուսանողների և դասախոսների մասնակցությունը որակի բարելավման իրականացմանը՝ քննարկումներով և ծրագրերի մշտական գնահատականներով:

- Խթաններ ստեղծել գիտական հետազոտությունների ակտիվացման և դրանց արդյունքները միջազգային գրախոսական ամսագրերում հրապարակելու համար:
- Առաջարկել անգլերենով դասավանդվող ավելի շատ դասախոսություններ և ավելացնել օտար լեզուներով դասավանդվող դասընթացների թիվը միջազգայնացման արդյունավետության բարձրացման առումով:
- Վերլուծել միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և ամրապնդել համագործակցությունը նմանատիպ ուղղության բուհերի հետ:
- Բարձրացնել ԵՄՀ-ի տեսանելիությունը հատկապես օտարերկրյա ուսանողների և գործընկերների համար՝ կայքի անգլերեն և ռուսերեն տարբերակների շարունակաբար համալրմամբ:
- Ամրապնդել բոլոր՝ հատկապես արտաքին շահակիցների մասնակցությունը ծրագրերի նախագծման, մշտադիտարկման և գնահատման, գիտական հետազոտությունների և ակադեմիական միջավայրի կառավարման գործում:
- Ջանքեր գործադրել՝ ավելացնելու և զարգացնելու օտարերկրյա ուսանողների փոխանակումը:

Հանս-Յուրգեն Դուխշտայն
ԵՄՀ միջազգային փորձագետ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Եվրասիա միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

1. **Կարեն Թոչունյան՝** կենսաբանական գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարանի Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Արմենուհի Սարգսյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շիրակի պետական համալսարանի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, փորձագիտական խմբի անդամ:
3. **Աիդա Թադևոսյան՝** իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայաստանի Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Հանս-Յուրգեն Դուխշտայն՝** Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, փորձագիտական խմբի միջազգային անդամ:
5. **Սերգեյ Աբրահամյան՝** Հայաստանի եվրոպական համալսարանի «Կառավարում» կրթական ծրագրի մագիտրանտ, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը:**

Թարգմանությունը կատարել են **Վարդանուշ Բաղդասարյանը** և **Քրիստինե Օհանյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, թարգմանիչներն ու համակարգողները ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Եվրասիա միջազգային համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծությունը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան ու տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև դասալսումներ, մասնակցել քննություններին: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[1]:

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախապատրաստական այց

2023 թվականի մայիսի 18-ին Եվրասիա միջազգային համալսարանում տեղի է ունեցել հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը[2], ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. հունիսի 13-ից 16-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպմամբ և ավարտվել հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր պարտադիր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և ռեսուրսների դիտարկում[4]:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ բավարար և անբավարար:

---

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է համալսարանին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 21.08.2023թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: 28.08.2023թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է հաստատության և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են ներկայացված դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ:

Հաշվի առնելով հաստատության դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը:



Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

18-ը սեպտեմբերի, 2023 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Եվրասիա միջազգային համալսարանը ավելի քան 25 տարվա պատմություն ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություն է: Համալսարանը ներկայանում է որպես դինամիկ զարգացող, միջազգային ուսանողների զգալի համակազմ ունեցող, կրթության որակը և նորարարությունը արժևորող հանրապետությունում հայտնի կրթագիտական հաստատություն:

Համալսարանի տեսլականն է. «Լինել տարածաշրջանում ճկուն կառավարում ունեցող առաջատար կրթական հաստատություն՝ միտված աշխատաշուկայի անընդհատ զարգացող պահանջներին համապատասխան գործնական հմտություններով ու կարողություններով, տեսական և կիրառական գիտելիքներով օժտված բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստմանը»:

Համալսարանն իր առքելությունը նախանշում է երեք մակարդակներում՝ուսուցում, հետազոտություն և հանրային ծառայություն՝ առաջնային դերակատարություն տալով արդյունավետ ուսուցման և ուսումնառության կազմակերպմանը:

Կրթություն. ԵՄՀ-ն կրթական հնարավորություններ է ապահովում Հայաստանի Հանրապետության որակավորման ազգային շրջանակի 6-րդ՝ բակալավր, 7-րդ՝ մագիստրոս, 8-րդ՝ հետազոտող (գիտական աստիճանը՝ գիտությունների թեկնածու) աստիճաններում: Համալսարանի հիմնական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերն են՝ «Կառավարում», «Իրավագիտություն», «Օտար լեզուներ», «Ֆարմացիա», «Տեղեկատվական համակարգեր», «Լրագրություն», «Տարրական մանկավարժություն» և «Ֆինանսներ»:

Մագիստրոսական աստիճանը ներառում է «Սահմանադրական իրավունք», «Քաղաքացիական իրավունք և դատավարություն», «Քրեական իրավունք և դատավարություն», «Միջազգային և եվրոպական իրավունք», «Կառավարում», «Նախագծերի կառավարում», «Էլեկտրոնային բիզնեսի կառավարում», «Հյուրընկալության կառավարում», «Անգլերեն լեզու և գրականություն (TEFL)», «Տեղեկատվական համակարգեր (ՏՀ)» և այլ մասնագիտացումներ:

Համալսարանը շարունակաբար համադրում է ԵՄ գործընկեր համալսարանների կրթական ծրագրերը՝ ապահովելու կրթական ծրագրերի համադրելիությունն ու ներդաշնակեցումը, ինչպես նաև խթանելու անձնակազմի և ուսանողների շարժունությունը: ԵՄՀ-ն ընդունել է կրեդիտների ամբողջական ճանաչման քաղաքականություն և մշակել համապատասխան մեխանիզմներ՝ ապահովելու այդ քաղաքականության իրագործումը:

Հետազոտություն. ԵՄՀ 2019-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրում որակյալ հետազոտությունների խթանումը, որպես բուհի զարգացման առանցքային

ուղղություն, ներկայացվել է համապատասխան նպատակի շեշտադրմամբ՝ «Բուհի զարգացմանն ուղղված կիրառական և գիտական հետազոտությունների խթանում»:

Որպես ԵՄՀ համահամալսարանական առաջնահերթություններ, առաջնորդվելով ԵՄՀ ռազմավարական ծրագրով, ԵՄՀ ԳԽ կողմից ընտրվել են ՄԱԿ-ի 2030 Կայուն զարգացման օրակարգի 9 նպատակները:

Հետազոտությունների իրականացումը և դրանց որակի բարձրացումը ունենալով որպես ռազմավարական առաջնահերթություն ՌԾ 2019-2025թթ. Ռազմավարության համատեքստում վերանայում է իրականացվել նաև ԵՄՀ կազմակերպական կառուցվածքում. մասնավորապես բուհի գիտական աշխատանքների համակարգումը վերապահվել է Ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորին՝ դիտարկելով որպես թիրախային ռազմավարական ուղղություն, կազմալուծվել է «Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնը»՝ առանձին Միջազգային կապերի կենտրոնի և Հետազոտական կենտրոնի, համապատասխանաբար համալրվել է նաև Հետազոտական կենտրոնի ղեկավարի հաստիքը:

Միջազգայնացում. Եվրասիա միջազգային համալսարանը 2014թ.՝ համալսարանի ռազմավարության նախագծի վերափոխումից ի վեր, որդեգրել է համապարփակ միջազգայնացման տեսլական: Այդ ընթացքում բուհը միջազգայնացումը համարել է որպես առանձին ռազմավարական նպատակ և թիրախային ոլորտ՝ մշակելով վերջինիս շուրջ կոնկրետ գործողություններ և նպատակներ: Ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքում համալսարանն ընդլայնել է միջազգային համագործակցության շրջանակները: Ներկայումս համալսարանի ղեկավարությունը փորձում է նոր մոտեցում գտնել համալսարանի բոլոր մակարդակներում միջազգայնացումը տարածելու և արմատավորելու ուղղությամբ, ինչն ամբողջությամբ կփոխի ոչ միայն ուսանողի գործնական որակները, այլև կառավարման պրակտիկան, կրթական ծրագրերը, հետազոտությունները և այլն:

Համալսարանը միտված է միջազգայնացման ուղղությամբ առավել ինտենսիվ նախաձեռնությունների իրականացմանը՝ հաշվի առնելով նաև փոփոխվող ազգային քաղաքականությունը և առաջնահերթությունները, բարեփոխված մեխանիզմները, որոնք ապահովելու են նախատեսված գործողությունների ավելի հարթ իրականացումը:

Որակի ապահովում. Որակի ապահովումը որպես առանձին գործառույթ համալսարանում իրականացվել է դեռևս 2007թ.-ից, երբ ԵՄՀ-ում ստեղծվել է Որակի ապահովման և ակադեմիական գնահատման կենտրոնը՝ որպես կառուցվածքային նոր ստորաբաժանում: Ստորաբաժանման հիմնական գործառույթներից էր կազմել և հրապարակել Կրեդիտային համակարգով ուսուցման տեղեկագիրքը, գրանցել և հսկել ուսանողների դասահաճախումները, ապահովել քննությունների արդյունքների մուտ-քագրումն ուսանողների ակադեմիական տվյալների միասնական (էլեկտրոնային) բազայում, հաշվարկել և վերահսկել ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշները

(ՄՈԳ և կուտակած կրեդիտների քանակ), պատրաստել և պարբերաբար թարմացնել ուսանող-ների ակադեմիական տեղեկագրերը, համապատասխան ուսումնական ստորաբաժանումներին տրամադրել տեղեկատվություն ուսանողների առաջադիմության և դասահաճախումների վերաբերյալ և այլն:

Որակի ապահովման մշակույթի տարածման և գործընթացների առավել կանոնակարգման նպատակով բուհում մշակվել են ԵՄՀ որակի ապահովման քաղաքականությունը և ուղեցույցը, որով առավել հստակ սահմանվում են որակի ապահովման գործընթացներն ու մեխանիզմները։ ԵՄՀ որակի ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում և կատարելագործվում է, բուհն իրականացնում է նաև որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատում և մշակում բարելավման գործողությունների ծրագիր:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր. ՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Եվրասիա միջազգային համալսարանի (ԵՄՀ) առաքելությունն ամրագրված է համալսարանի 2019-2025 թթ. ռազմավարական ծրագրում, համաձայն որի՝ համալսարանն իր առաքելությունը նախանշում է երեք ուղղություններով՝ ուսուցում, հետազոտություն, հանրային ծառայություն:

<u>Ուսուցման</u> ուղղությամբ ԵՄՀ -ն սահմանել է հետևյալ նպատակները.

- Ուսուցանել որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշներին համապատասխան:
- Իրականացնել բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն սոցիալական, հումանիտար գիտությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների և դեղագիտության ոլորտներում՝ նպատակաուղղված աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին:
- Ապահովել կայուն միջազգային համագործակցություն՝ տեղայնացնելով լավագույն փորձը ուսուցման և որակի ապահովման ոլորտներում, միջազգայնացնելով կրթական բովանդակությունը:
- Ստեղծել համագործակցային միջավայր կրթության շահառուների համար՝ նպաստելով արդիական գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցմանն ու տարածմանը:
- Համագործակցային մեթոդների միջոցով ուսանողների մեջ զարգացնել սովորելու հմտություններ, ինչպես նաև պատրաստակամություն ընդունելու նորը և անընդհատ կատարելագործվելու, նպաստելով հարափոփոխ միջավայրում նրանց մրցունակության ապահովմանը:

<u>Հետազոտության</u> ուղղությամբ ԵՄՀ սահմանել է հետևյալ նպատակները.

- Իրականացնել հետազոտություններ՝ ուղղված կրթության բովանդակության արդիականացմանը, միջազգայնացմանը, ինչպես նաև համալսարանի անընդհատ զարգացմանը:
- Իրականացնել ՀՀ սոցիալ-տնտեսական առաջընթացին և միջազգայնացմանը միտված կիրառական հետազոտություններ:

<u>Հանրային ծառայության</u> ուղղությամբ ԵՄՀ սահմանել է հետևյալ նպատակները.

- Ուսուցման և հետազոտության ոլորտներում ստացված արդյունքներին հաղորդակից դարձնել հասարակության լայն շրջանակների՝ տարածելով ձեռք բերված դրական փորձն ու գիտելիքը:
- Խորացնել համայնքային հաստատությունների հետ համագործակցությունը, ուսանողների պրակտիկաների, ավարտական աշխատանքների հետազոտական բնույթի թեմաներում ընդգրկել նաև համայնքային նշանակության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ:

ԵՄՀ-ն կրթական ծառայություններ է մատուցում բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակներում, որոնք համապատասխանում են ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին: Բացի այդ, համալսարանն արժևորում է ՄԱԿ-ի կայուն զարգացման օրակարգը և բուհի գործունեության տարբեր փաստաթղթերում հաշվի են առնված վերոնշյալ ՄԱԿ-ի ԿԶՆ մինչև 2030 դրույթները: Ավելին, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բուհը հաշվի է առնում նաև ՄԱԿ-ի մինչև 2030 թ. օրակարգը կրթական ծրագրերի բարելավման գործընթացներում, ինչպես նաև կարողությունների զարգացման ծրագրերի մշակման ժամանակ:

Հարկ է նշել, որ գործող ռազմավարությունն ընդունվել է 2019թ., և փոփոխման չի ենթարկվել տարբեր իրադարձությունների ի հայտ գալուց հետո՝ մասնավորապես համավարակը և պատերազմը: Առկա է ՌԾ-ի տարեկան գործողությունների ծրագիր և սահմանված են ըստ ուղղությունների և նպատակների ԳԱՑ-եր: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ սահմանված ԳԱՑ-երի և իրականացվելիք գործողությունների վերաբերյալ կա պատկերացում ղեկավար կազմի շրջանակներում, սակայն ավելի ցածր մակարդակներում այդ ընկալումը լիովին արմատավորված չէ՝ ապահովելու սահմանված նպատակներ-գործողություններ-ԳԱՑ-եր շղթայի անխափան իրականացումը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նոր ձևավորված կառավարման խորհրդի հետ տեղի են ունենում տարբեր հանդիպումներ բուհի սահմանած ռազմավարական ծրագրի իրականացման ուղիների քննարկման նպատակով՝ հնարավորություն տալով խորհրդի անդամներին իրենց առաջարկներն անել բուհի գործունեության ուղղությունների վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառավարման խորհուրդը նոր կրթական ծրագրերի ներդրման անհրաժեշտության և դրանց՝ բուհի առաքելության փոփոխության կամ հստակեցման առաջարկներ չի ներկայացրել, ինչը որոշակիորեն պայմանավորված է նաև կառավարման այս մոդելի նոր լինելու հանգամանքով:

Փորձագիտական խմբի կողմից տեղի ունեցած ուսումնասիրությունները, շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ բուհը, իր սահմանած նպատակները հիմք ընդունելով, քայլեր է իրականացրել կրթական ծրագրերը համապատասխանեցնելու նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված Որակավորումների ոլորտային շրջանակներին, մասանվորապես կարելի է նշել «Իրավագիտություն» կրթական ծրագիրը: Բուհն ընդլայնել է նաև համագործակցային շրջանակը տեղական և միջազգային կառույցների ու ուսումնական հաստատությունների հետ, ինչը հնարավորություններ է տվել լավագույն փորձի տեղայնացման համար, ինչպես նաև բարձրացել է բուհի տեսանելիությունը

հանրային տարաբնույթ ծառայությունների մատուցման շնորհիվ: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ սահմանված որոշ նպատակներ բավական հավակնոտ են ներկայիս ռազմավարությամբ ու առկա ռեսուրսներով կյանքի կոչելու համար: Մասնավորապես՝ հետազոտության ուղղությամբ սահմանված նպատակների, իրականացված գործողությունների ու տրամադրված ռեսուրսների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ բուհը դեռևս անելիքներ ունի իր կողմից առաջադրված ուղղություններին հասնելու ուղղությամբ՝ խթանելու իր զարգացմանն ուղղված կիրառական և գիտական հետազոտությունների իրականացումը, դրանց արդյունքների միջազգայնացումը:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Համալսարանը, ըստ ինքնավերլուծության, մշտապես իրականցնում է արտաքին և ներքին շահակիցների հետ հանդիպումներ կարիքները վերհանելու նպատակով: Ռազմավարական պլանավորման մշտադիտարկումն ու վերանայումն իրակացվում է՝ ըստ համալսարանի որակի ապահովման ուղեցույցի: Գործող ռազմավարությունը մշակելու նպատակով 2017թ. ռեկտորի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է վերլուծեր արտաքին և ներքին շահակիցների կարիքները՝ հետագայում դրանք նոր ընդունվող ռազմավարական ծրագրում արտացոլելու համար: Համալսարանի ներքին շահակիցներն են ուսանողները, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմը: Համալսարանը պարբերաբար կազմակերպում է հարցումներ ներքին շահակիցների կարիքների վերհանման համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհն իր արտաքին շահակիցների շրջանակում է ներառում հասարակությանը, պետությանը, գործընկեր կառույցներին ու գործատուներին: Արտաքին միջավայրի վերլուծությունը կատարվել է PEST գործիքի միջոցով, մասնավորապես ուսումնասիրվել են քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային և դեմոգրաֆիական, տեխնոլոգիական գործոնները:

Համալսարանը մշտապես համագործակցում է գործատուների հետ՝ ներգրավելով նրանց կառավարման խորհրդում, պրոֆեսորադասախոսական կազմում, ինչպես նաև կազմակերպում է աշխատաշուկայի պահանջներից ելնելով գործատուների պարբերաբար հանդիպումներ՝ հստակեցնելու համալսարանի առաքելության, ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացումը: Ավելին, քանի որ համալսարանը մասնավոր է և չի գտնվում նույն օրենսդրական դաշտում, ինչ պետական բուհերը իրավակազմակերպական տեսանկյունից, ապա մրցակցային միջավայրում տեղ զբաղեցնելու նպատակով արտաքին շահակիցներին ավելի շատ է ներգրավում համալսարանի գործունեությանը, ինչը հնարավորություն է տալիս գործատուներին, համագործակից կառույցների ներկայացուցիչներին իրենց առաջարկներն անել կրթական ծրագրերի իրականացման, նոր համագործակցությունների հաստատման բուհի համար ռազմավարական հանդիսացող ուղղություններով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ արտաքին և ներքին շահակիցները որոշակի առումով կիսում են բուհի կողմից ԳԱՑ-երի սահմանման կարևորությունը, սակայն դրանց արտացոլումը դեռևս տեսանելի չէ բուհի գործունեության բոլոր ոլորտներում (որոշ ստորաբաժանումների օրինակով)։ Բացի ՀՀ աշխատաշուկայի պահանջներից համալսարանը դիտարկում է հատկապես եվրոպական աշխատաշուկան և փորձում արդյունքները ևս արտացոլել ինչպես կրթական ծրագրերի բարելավման, այնպես էլ ռազմավարական նպատակների իրագործման ընթացքում, քանի որ համալսարանն ունի արտասահմանցի ուսանողներ։

Փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ հետազոտությանն ու դրա միջազգայանացմանն ուղղված գործընթացների իրականացման համար առկա չէ պատշաճ պլանավորում և համապատասխան ֆինանսավորում։

1.3.ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԵՄՀ-ում ՌԾ մշակման, դրա նպատակների իրականացման և բարելավման համար մշակվել և գործարկվում են ՌԾ նպատակների իրականացման առաջընթացի գնահատման մի շարք մեխանիզմներ, որոնք նախատեսվում են ՈԱ ուղեցույցով՝ ըստ ՊԻԳԲ շրջափուլի տրամաբանության: ԵՄՀ գործող ՌԾ-ում և դրա գործողությունների ծրագրում յուրաքանչյուր ռազմավարական նպատակի իրականացման ցուցիչներ և թիրախներ են սահմանված՝ յուրաքանչյուր տարվա կատարողականը գնահատելու նպատակով: Կան ռազմավարական նպատակներ, օրինակ նպատակ 2՝ բուհի զարգացմանն ուղղված կիրառական և գիտական հետազոտությունների խթանում, որտեղ սահմանված են ցուցիչներ՝ գիտական աստիճան կամ կոչում ունեցող աշխատակիցների տոկոս (տարեկան առնվազն 50%), որն ավելի շատ կրթական ծրագրերի լիցենզիայի պայմաններին է համահունչ, ավելին այս ԳԱՑ-ին հասնելու համար հստակ մեխանիզմներ և գործողություններ սահմանված չեն։ Գիտական հրապարակումների մասով սահմանված են լրավճարներ ԲՈԿ-ի կողմից ընդունված և միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում առկա ամսագրերում տպագրությունների համար, սակայն պրոֆեսորադասախոսական կազմից շատերը խրախուսվել են հենց համալսարանում գործող ամսագրում տպագրությունների համար, իսկ միջազգային ամսագրերում տպագրությունների աջակցության գնահատման մեխանիզմներ առկա են, բայց օգնելու հասնելու դրան՝ դեռևս ոչ։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նաև տեղական և միջազգային հետազոտական դրամաշնորհներին դիմելիության մակարդակը շատ ցածր է: ՌԾ-ի ցուցանիշների հավասարակշված համակարգի տարբեր նպատակների և գործողությունների ԳԱՑ-երը որոշ ուղղություններով գրեթե նույն են, և ըստ տարիների բացակայում է դրանց դինամիկան։

Այսպիսով, հարկ է նշել, որ բուհի ռազմավարական ծրագրերի համեմատական ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ ռազմավարական պլանավորման փորձառությունը բուհում հանգեցրել է ԳԱՑ-երի որոշակի հստակեցման և ռազմավարական պլանավորման

գործընթացների լավարկման ու դրանց կարևորության ընկալման բուհի շահակիցների շրջանում։

Ըստ կատարված ինքավերլուծության՝ որակի կառավարման համակարգի կիրառման արդյունավետության գնահատման ցուցանիշները տատանվում են 80-90% շրջանակներում, իսկ ամենացածր տոկոսը (67%) ստացվել է Փաստաթղթաշրջանառություն և փաստաթղթերի կառավարում, Կարիերայի զարգացում բաժիններում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Եվրասիա միջազգային համալսարանի առաքելությունը միարժեքորեն արտահայտում է իր կրթական ծրագրերի ու գործունեության ուղղությունների բովանդակությունը։ Դրական հանգամանք է նաև կրթական ծրագրերի՝ որակավորումների ազգային շրջանակին համապատասխանեցման և դրանից բխող որակավորումների ոլորտային շրջանակին անհրաժեշտ մեթոդական գործիքների առկայությունը, ինչը շնորհած որակավորումների արժանահավատության կարևոր պայման է։

Փորձագիտական խումբը կարևորում է նաև շահակիցների ներգրավվածության ավելացումը ռազմավարական պլանավորման գործընթացներում, ինչը հանգեցրել է նրանց կարիքների արտացոլմանը և շահակիցների շրջանում բուհի առաքելության միասնական ընկալմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում բուհը բարելավում է ռազմավարական պլանավորումը՝ իր մշակման ու գնահատման գործիքներով։ Այսպես, ռազմավարական պլանավորման երրորդ շրջափուլը նախորդից դրականորեն տարբերվել է առաջին հերթին նրանով, որ առկա է եղել ռազմավարական նպատակների գնահատման ԳԱՑ լրակազմ և որ երրորդ շրջափուլն ամփոփվել է՝ հիմքում ունենալով այդ լրակազմը։

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է ֆինանսական ռեսուրսների պլանավորման և ՌԾ նպատակների իրականացման կապի ապահովման կարևորությունը, ինչը կնպաստի բուհի երկարաժամկետ կայուն զարգացմանը։

Դրական է ԳԱՑ-երի կիրառումը ռազմավարական նպատակների իրականացման և հետագայում ԳԱՑ-երով գնահատումն իրականացնելու համար։ Այս առնչությամբ փորձագիտական խումբը գտնում է, որ մեծամասամբ ԳԱՑ-երի դինամիկայի բացակայությունը պետք է լինի բուհի ուշադրության կենտրոնում՝ ռազմավարական պլանավորման հաջորդ շրջափուլերում հստակեցման և ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու անհրաժեշտությամբ։ Փորձագիտական խմբի դիտարկմամբ այս մոտեցումը կապահովի բուհի համաչափ զարգացումը ռազմավարական հանդիսացող ուղղություններով։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՄՀ-ն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որն արտացոլում է բուհի գործունեության հիմնական ուղղությունները, նախորդ հավատարմագրումից հետո նկատելիորեն բարելավվել է ռազմավարական պլանավորման գործիքակազմը, առկա են բուհի ռազմավարական նպատակների գնահատման առավել

արժանահավատ ցուցիչներ սահմանելու միտումներ, ռազմավարական պլանավորումն ընդգրկում է շահակիցների լայն շրջանակի մոտեցումներն ու կարիքները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունները համապատասխանում են չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Ըստ ԵՄՀ կանոնադրության՝ ԵՄՀ-ի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և ԵՄՀ կանոնադրությանը համապատասխան՝ հիմնադիրների խորհրդի (մասնակիցների ընդհանուր ժողով), համալսարանի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացման միջոցով: ԵՄՀ կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվել է 2022 թ.-ին:

2023 թ.-ից վերանայել են Կառավարման խորհրդի կազմը՝ ներգրավելով ուսանողների և դասավանդողների և վերանայելով գործառութային շրջանակը: Դեռևս Կառավարման խորհրդի նոր կարգ առկա չէ, առկա է 2009 թ.-ին Գիտական խորհրդի կողմից հաստատված Կառավարման խորհրդի գործունեության կարգը:

Բուհը 2014 թ.-ին հաստատել է Էթիկայի հանձնաժողովի գործունեության կանոնակարգ: Համալսարանի կանոնադրությամբ աշխատողների և սովորողների պարտականությունների շարքում ամրագրված է էթիկայի կանոնների պահպանման պահանջը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ առկա է նաև էթիկայի հանձնաժողովում քննարկման դեպք՝ պայմանավորված գրագողության դեպքի բացահայտմամբ: Փորձագիտական այցը և ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ, չնայած կայքում հասանելի են փաստաթղթերը, որոնք ներառում են կառավարման խորհրդի գործունեության դրույթները և դրա շրջանակը, սակայն շահակիցները մեծապես իրազեկ չեն դրանցից:

ԵՄՀ-ում առկա կառուցվածքային ստորաբաժանումներն ունեն համապատասխան գործունեության կարգեր, ընդհանուր առմամբ առկա են պաշտոնների անձնագրեր, միայն որոշներն են բացակայում (Ծրագրի համակարգողի պաշտոնի նկարագիր, Ծրագրի համակարգողի օգնականի պաշտոնի նկարագիր): Նախորդ իստիտուցիոնալ

հավատարմագրման արդյունքում, ըստ բարելավման պլանի, բուհը նախատեսել էր կառուցվածքի վերանայում իրականացնել՝ ստորաբաժանումների գործառույթների հստակեցմամբ, ինչպես նաև կառուցվածքային միավորների աստիճանակարգության և պատասխանատվության լիազորությունների վերանայմամբ: Սակայն բուհում դեռևս նույն գործառութային շրջանակի համար առկա են տարբեր անուններով հաստիքներ (կրթական ծրագրի համակարգող, կրթական ծրագրի պատասխանատու, կրթական ծրագրի համակարգողի օգնական, կրթական ծրագրի համակարգողի գործավար), այս տեսանկյունից կառուցվածքային հստակեցում տեղի չի ունեցել: Բացի այդ, մասնավորաբար, կարևորելով հետազոտության զարգացումը, կազմալուծվել է «Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնը»՝ առանձին Միջազգային կապերի բաժնի և Հետազոտական կենտրոնի, բացվել են նոր կառուցվածքային միավորներ ՝ Ուսումնական հարցերի գրասենյակ, Դասընթացների կենտրոն, Նախապատրաստական բաժին և այլն, ներդրվել են ՌԾ-ով նախատեսվող այլ թիրախային հաստիքներ՝ ռեգիստրար, ՏՏ մասնագիտության կրթական ծրագրերի պատասխանատու, դասընթացների կենտրոնի պատասխանատու և այլն: Փորձագիտական այցից պարզվեց, որ Հետազոտական կենտրոնում բացի ղեկավարից այլ աշխատակիցներ չկան, գիտական աշխատանքների համակարգումը դրվել է Ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի վրա, չնայած, որ այդ ուղղությունը դիտարկվում է՝ որպես թիրախային ռազմավարական զարգացման ուղղություն, և նախատեսված են հավակնոտ նպատակներ: Փորձագիտական այցի ընթացքում Որակի ապահովման կենտրոնի միայն ղեկավարի հաստիքն էր զբաղեցված, այն պարագայում, երբ ստորաբաժանումը բավականին լայն գործառութային շրջանակ ունի:

Միաժամանակ հարկ է նշել, որ բուհն ունի կազմակերպական կառուցվածքի սխեմա, որում ոչ բոլոր կապերն են արտահայտված, մասնավորաբար չի երևում, որ Ռազմավարական զարգացման և գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը և Որակի ապահովման կենտրոնը համագործակցում են ամբիոնների հետ, մինչդեռ, փորձագիտական այցից պարզվեց, որ համագործակցությունն առկա է բուհում ընթացող գործընթացների պլանավորման և բարելավման տարբեր մակարդակներում:

Համալսարանում գործում է ՈւԽ-ն իր կանոնադրության համաձայն, որը հաստատվել է 2009 թ.-ին և վերանայվել 2022 թ.-ին: Վերանայումը պայմանավորված է այն հանգամանքով, որ միավորվել են 3 կառույցներ՝ ՈւԽ, ՈւԳԸ, Ուսանողների իրավունքների պաշտպան, ինչպես նաև ՈւԽ-ի կառավարման մարմինները, վերջիններիս լիազորություններն ու ընտրության կարգը:

Հարկ է նշել, որ ՌԾ-ում ֆինանսական պլանավորում համապատասխան նպատակներին հասնելու տեսանկյունից առկա չէ: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՌԾ-ի իրականացման համար պահանջվող բյուջեի մոտավոր հաշվարկ ևս չի իրականացվել, նաև յուրաքանչյուր ստորաբաժանման համար անհրաժեշտ ֆինանսական և այլ ռեսուրսների պահանջի ուսումնասիրություն՝ միտված ՌԾ-ի իրականացման ապահովմանը, չի իրականացվում: Նախահաշիվների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ֆինանսական ռեսուրսների մեծ մասը տրամադրվում է աշխատավարձերի վճարմանը (շուրջ

70 %), կրթաթոշակների և արտոնությունների ծախսեր (շուրջ 3 %), գրասենյակային և կոմունալ ծախսեր (շուրջ 5 %), ապրանքանյութական պաշարների և ծառայությունների ձեռքբերման ծախսեր (շուրջ 6,5 %), ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր (շուրջ 6,5 %): Համալսարանի, վարժարանի և հյուրատան ֆինանսական պլանավորումն ու կառավարումն իրականացվում է առանձնացված: Համասարանում եկամուտների շուրջ 95%-ը պայմանավորված է վարձավճարներով:

Ըստ ՌԾ-ի բուհն ունի սահմանած ԳԱՑ՝ շահութաբերության մակարդակ (տարեկան նվազագույնը 15%), բյուջեի նախահաշվի կազմում և կատարում՝ նվազագույն բացասական շեղումով (առավելագույնը 20 %): Բուհը նախատեսել էր մինչև 2021 թ.-ը ոչ շահութաբեր և ինքնածախսածածկում չապահովող ամբիոնների միավորում, գործունեության վերափոխում կամ դադարեցում, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ դեռևս նման հաշվարկ առկա չէ:

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական ուսումնասիրությունների՝ ԵՄՀ-ում կիրառում են նաև նախագծահենք կառավարման մոտեցումը, երբ կոնկրետ ծրագրի պատասխանատու նշանակվում է որևէ աշխատակից կամ հրավիրվում է դրսից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս մոտեցմամբ բուհը կարողանում է տարբեր միջազգային ծրագրեր արդյունավետորեն կառավարել:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ԵՄՀ կառավարման և գիտական խորհուրդներում ներգրավված են ինչպես դասախոսական, այնպես էլ ուսանողական կազմի ներկայացուցիչներ՝ 25-ական տոկոս ընդհանուր կազմից: Փորձագիտական այցից պարզվեց, որ կառավարման մարմիններում ներգրավված ուսանողները գլխավորապես խորամուխ չեն քննարկվող հարցերը ուսումնասիրելու, միաժամանակ պարզվեց, որ կառավարման մարմիններում չներգրավված դասախսներն ու ուսանողները հիմնականում իրազեկ չեն քննարկված հարցերի վերաբերյալ և իրենց հետ քննարկումներ հիմնականում չեն եղել՝ պարզելու իրենց կարծիքն իրենց վերաբերող հարցերի մասին: Մինչդեռ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության նպատակով իրականացվող հարցման արդյունքներին համապատասխան աշխատակազմի (ներառյալ վարչական և դասախոսական կազմ) 78%-ը և ուսանողների 79%-ը փաստում են, որ ունեն բավարար հնարավորություններ մասնակցելու համալսարանի կառավարմանը և որոշումների կայացման գործընթացներին: Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ կառավարման մարմիններում ներգրավված դասախոսների և ուսանողների մոտ մոտիվացիայի պակաս կա մասնակցելու որոշումների կայացմանը, մինչ որոշման կայացումը քննարկելու դասախոսների և ուսանողների լայն շրջանակի հետ՝ խորհուրդներում նրանց համընդհանուր կարծիքը արտահայտելու նպատակով, կամ կայացված որոշման մասին իրազեկման աշխատանքներ իրականացնելու: Միաժամանակ փորձագիտական այցից պարզվեց, որ կառավարման մարմիններում

ուսանողների ներգրավման ընտրության մեխանիզմներն հստակ և ընկալելի չեն ուսանողների համար։

Ըստ ինքնավերլուծության՝ շահակիցների մասնակցությունը բուհի կառավարմանն անուղղակիորեն իրականացվում է նաև ՈԱ կենտրոնի կողմից կազմակերպվող քանակական և որակական հետազոտությունների, ուսանողների կողմից դասախոսների գնահատման միջոցներով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նման գնահատումների և իրականացվող հարցումների միջոցով ներքին շահակիցները կարողանում են իրենց կարիքները վեր հանել իրականացվող կրթական ծրագրերի, ենթակառուցվածքների ու ռեսուրսների բարելավման շարունակականությունն ապահովելով։

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԵՄՀ-ն իր երկարաժամկետ պլանավորումն իրականացնում է 2019-2025 թթ.-ի Ռազմավարական ծրագրով: Նախորդ Ռազմավարական ծրագրի վերլուծության նպատակով բուհը իրականացրել է ԵՄՀ ներքին և արտաքին միջավայրերի վերլուծություն: Ռազմավարական ծրագրում նշվում են նպատակներ և նպատակների իրականացման համար համար առանձնացվում են ԳԱՑ-եր: Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին, որ առկա են ԳԱՑ-եր, որոնց համար սահմանել են թվային ցուցանիշներ՝ կամ յուրաքանչյուր տարվա համար, կամ որոշակի վերջնաժամկետում, ընդ որում որոշ դեպքերում վերջնաժամկետը տարբերվում է ՌԾ վերջնաժամկետից։ Հարկ է նշել, որ այդ վերջնաժամկետից մինչ ՌԾ վերջնաժամկետը միջանկյալ ժամանակահատվածի համար այլ ցուցանիշ սահմանված չէ, ուստի տեսանելի չէ նշյալ գործընթացների հետագա զարգազման ընթացքը մինչև ՌԾ վերջնաժամկետը (օրինակ՝ Աշխատակազմի անգլերեն լեզվի մակարդակ (մինչև 2022 թվականը առնվազն 50%-ը տիրապետում է B1 մակարդակով), Ուսանողների և աշխատակազմի թվային հմտությունների բարելավում (անկախ օգտագործողի մակարդակ (Independent user)) (մինչև 2023 թվականը առնվազն 50%-ը տիրապետում է), Հետազոտությանն ուղղված ֆինանսական միջոցների տոկոս (մինչև 2021 թ. առնվազն 10%) և այլն): Առկա են այնպիսի ԳԱՑ-եր, որոնք ենթադրում են թվային ցուցանիշ, սակայն սահմանված չէ, թե ինչպիսի ցուցանիշն է որպես նպատակ դիտարկվում (Օտար լեզուներով դասավանդող (եվրոպական չափանիշներով առնվազն B2/C1/C2 մակարդակներով) դասախոսների թիվ, Հետազոտական կարողությունների բարելավմանն ուղղված վերապատրաստումների քանակ, Հետազոտական ծրագրերի և հրապարակումների քանակ և այլն): Փորձագիտական խումբը հարկ է համարում նշել նաև, որ առկա են ԳԱՑ-եր, որոնց համար սահմանված թվային ցուցանիշը դինամիկա չի ենթադրում (մասնավորաբար՝ Գիտական աստիճան կամ կոչում ունեցող աշխատակիցների տոկոս (տարեկան առնվազն 50%), Աշխատանքային պայմաններից գոհունակության ցուցանիշ (տարեկան առնվազն 75%) և այլն):

Ռազմավարական ծրագիրը հաստատվել է կառավարման խորհրդի կողմից, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ կառավարման խորհրդի անդամները հիմնականում

առաջարկություններ չեն ներկայացնում ռազմավարական գործընթացների իրականացման, պլանավորման կամ լավարկման վերաբերյալ:

Բուհն ունի նաև 2019-2025 թթ.-ի ՌԾ-ին կից գործողությունների ծրագիր: Յուրաքանչյուր նպատակի համար նշվում է ռազմավարական գործողություն, ընթացիկ գործողություն, պատասխանատու, վերջնաժամկետ: Փորձագիտական խումբը նշում է, որ գործողությունների համար սահմանված չեն արդյունքներ և նախատեսված չէ բյուջե: Փորձագիտական այցից պարզվեց, որ հաշվարկ չի իրականացվել, թե ՌԾ-ի իրականացման համար ինչպիսի բյուջե պիտի պահանջվեր, չեն դիտարկել նաև, թե որչափով է իրականցված ՌԾ-ն կամ արդյո՞ք երաշխիքներ ունեն, որ ամբողջությամբ կիրականացվի: Շատ դեպքերում գործողությունների համար որպես ժամկետ նշվում է ընթացիկ կամ գործողությունների ժամկետներն ավարտվում են 2019, 2020 թթ.-ին, իսկ դրանից հետո մինչև ՌԾ ավարտ այլ արդյունքների ապահովում սահմանված չէ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՌԾ-ի՝ ըստ ուստարիների մշակված պլաններում գործողությունները նույնն են, ինչ որ 2019-2025 թթ.-ի ՌԾ-ին կից գործողությունների ծրագրում, առանձին գործողությունների համար կրկին առկա չէ բյուջեի և նախատեվող արդյունքի սահմանում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չնայած որ ՌԾ-ում նշված գործողությունների համար սահմանված են պատասխանատուներ, սակայն քանի որ պատասխանատուներն առանձնացված են համընդհանուր ձևով՝ առանց նշելու, թե նրանից յուրաքանչյուրը արդյունքի ձեռքբերման որ մասի համար է պատասխանատու (դրանց արտացոլումը տեսանելի չէ նաև ստորաբաժանումների տարեկան պլաններում), հնարավոր չի լինում այնուհետև որոշել պատասխատատվության չափը արդյունքին չհասնելու կամ նախանշված ԳԱՑ-ը չապահովելու դեպքում:

Ստորաբաժանումներն ունեն տարեկան աշխատանքային պլաններ, որոնցում կարելի է տեսնել նաև ՌԾ-ում նշված գործողությունները նույն կերպ ինչպես ՌԾ-ում է, չի առանձնացվում այդ գործողությամբ կոնկրետ տվյալ ստորաբաժանման համար նախատեսված գործողությունը: Տարեկան պլաններում ևս բյուջեի պլանավորում առկա չէ: Յուրաքանչյուր գործողության համար նշվում են արդյունքներ, որոնք ՌԾ-ի գործողությունների ծրագրում ապահովվում են մի շարք գործողությունների արդյունքում: Ըստ ուսումնական տարիների պլաններում եռամսյակային ցուցիչներ առկա չեն, չնայած որ ստորաբաժանումները եռամսյակային հաշվետվություններ են ներկայացնում, որտեղ նկարագրական կերպով ներկայացնում են նախատեսված գործողության շրջանակում իրականցված գործընթացները:

Առկա են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ըստ ՌԾ ցուցանիշների հաշվետվություններ և ռեկտորի հաշվետվությունները՝ ըստ ռազմավարական նպատակների: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առկա են ՌԾ թերի իրականացված ցուցանիշներ, սակայն դրանք որոշակի հետևանքների չեն հանգեցրել՝ թե՛ վերապլանավորումների և թե՛ պատասխանատվությունների տեսանկյունից:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

2019-2025 թթ.-ի ՌԾ-ի հիմքում դրվել է նախորդ ՌԾ-ի իրականացման՝ 2019 թ.-ին իրականացված ԵՄՀ Ներքին և արտաքին միջավայրերի վերլուծությունը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ այստեղ ներկայացված են տվյալներ նաև նախորդող 3 ուսումնական տարիների վերաբերյալ, ինչը բուհի ներկայացմամբ համարվում է իր գործունեության վրա ազդող գործոնների համապարփակ վերլուծություն: Այսպիսով, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ չնայած փաստաթղթում նշվում են ըստ 2014-2018 թթ.-ի ՌԾ-ի յուրաքանչյուր նպատակի ձեռքբերումներն ու բացթողումները, սակայն առկա չեն հիմնավորումներ, եզրահանգումներ և անդրադարձ ազդող գործոններին, որոնք կհանգեցնեն վերհանված տվյալների հիման վրա որոշումների կայացմանը:

ԵՄՀ-ի ՈԱԿ-ը իրականացնում է հարցումներ ուսանողների և աշխատակիցների շրջանում: Սա թույլ է տալիս ճշտել տարբեր հարցերի վերաբերյալ նրանց բավարարվածությունը, որոնցից որոշները նաև որպես ՌԾ ԳԱՑ-եր են դիտարկում: Սակայն փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզվեց, որ հարցումների միջոցով բուհի գործունեության վրա ազդող գործոններ չեն բացահայտվում, միայն շահակիցների բավարարվածություն է ուսումնասիրվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում առկա է նախադեպ, երբ ուսանողը ավարտական աշխատանքի շրջանակներում ուսումնասիրել է ՀՀ աշխատաշուկայի արդի իրավիճակը և զարգացման միտումները, որը բուհի կողմից դիտարկվում է՝ որպես աշխատաշուկայի վերլուծության հիմք: Այս տեսանկյունից այլ հիմնարար և համապարփակ վերլուծություն բուհը դեռևս չի իրականացրել, որը հիմք կհանդիսարար կրթական ծրագրերի ներդրմանը կամ բարելավմանը, ռազմավարական ծրագրի ուղղությունների վերանայմանը նվիրված որոշումներ կայացնելու համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են դեպքեր, երբ առանձին հարցերի վերաբերյալ կարևորել են գործատուների մոտեցումները, մասնավորաբար դասավանդող գործատուների կարծիքները դասընթացների բովանդակությունների վերաբերյալ՝ նկատի ունենալով աշխատաշուկայի պահանջները:

Փորձագիտական այցից պարզվեց, որ ռիսկերի կառավարման մոտեցումներ չեն գործում:

ԵՄՀ-ն ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների SWOT վերլուծություն է իրականացրել 2021 թ.-ին՝ UNESCO-ի կողմից ֆինանսավորվող «Որակի ներքին ապահովման կարողությունների զարգացում ՀՀ բուհերում» ծրագրի շրջանակներում, որը հետագայում կիրառվել է նաև ինքնավերլուծության իրականացման ժամանակ:

Բուհն ունի միջազգային ուսանողներ, սակայն միջազգային աշխատաշուկայի հստակ վերլուծություններ առկա չեն: Նաև առկա չեն ուսումնասիրություններ, թե միջազգային ուսանողները ավարտելուց հետո աշխատաշուկայում տեղ զբաղեցնում են, թե՝ ոչ: Միայն Ֆարմացիա մասնագիտության պարագայում Իրանի Իսլամական Հանրապետության

քաղաքացիները, ԵՄՀ-ում ուսումնառությունից հետո վերադառնալով, հանձնում են քննություն և ստանում վկայական, սա բուհի կողմից դիտարկվում է որպես կարևոր ազդակ։

Բուհի գրավչության տեսանկյունից ղեկավար կազմը կարևորվում է բուհի տարածքը ուսանողների գտնվելու համար հարմարեցնելը և այս ուղղությամբ բավականին աշխատանքներ են իրականացվում՝ դիտարկելով հարցումների միջոցով բարձրացված խնդիրները։

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ բուհը կարևորում է որակի կատավարման սկզբունքի կիրառումը և փորձում քաղաքականությունների վարչարարությունն իրականացնել ՊԻԳԲ շրջափուլի սկզբունքներին համահունչ; Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս սկզբունքը վարչարարության իրականացման տարբեր փուլերում դեռևս ոչ ամբողջական կիրառում չի գտել։ Փաստաթղթերը վերանայելիս դրանց սկզբնական հատվածում նշվում է, թե երբ է վերանայումն իրականացվել և ընդհանուր կերպով նշվում է, թե ինչն է փոխվել վերանայման արդյունքում։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մի շարք փաստաթղթեր մշակվել են դեռևս վաղուց, և բարելավումներ չեն եղել։ Մասնավորաբար, Որակի ապահովման քաղաքականություն փաստաթուղթը հաստատվել է 2012 թ.-ին, որում նշվում է, որ յուրաքանչյուր տարի պետք է կառավարման խորհրդում գնահատում իրականացված լինի, ինչը պետք է վերանայումների համար հիմք ծառայեր, սակայն նկատելի չեն յուրաքանչյուր տարվա գնահատումներ, առկա է միայն 2022 թ.-ի գնահատումը։ Առավել քան 5 տարի չեն վերանայվել մի շարք փաստաթղթեր, այնպես ինչպես Գործավարության կանոնակարգը, Ուսանողների կողմից դասախոսի գնահատման կարգը, Հետազոտությունների հրատարակման և հրապարակայնեցման կարգը և այլն, ինչը ըստ ՈԱԿ-ի վերլուծությունների պայմանավորված է դրանց ոչ ամբողջական կիրառմամբ։

Բուհում առկա է 2022 թ.-ին կազմված Որակի կառավարման համակարգի կիրառման արդյունավետության գնահատում (ներքին ստուգման հաշվետվություն), որտեղ ներկայացվում են Կառավարչական գործընթացների արդյունավետության գնահատման և Ծառայությունների մատուցման գործընթացների արդյունավետության գնահատման արդյունքներ, ներկայացված տվյալները սահմանափակվում են 2020-2021 ուստարով։ Շատ պարագաներում, երբ նշվում են անհամապատասխանություններ, և շեղումներ չկան, հիմնավորումներ ներկայացված չեն։ Փորձագիտական այցից պարզվեց, որ ՈԱԿ-ը հաշվի է առնում շահակիցների կարծիքները, սակայն չի երևում, թե տվյալ գործընթացի գնահատման համար արդյո՞ք բազմակողմ մոտեցում ապահովվել է, հաշվի առնվել են բոլոր հանգամանքները, թե՝ ոչ։ Գնահատման արդյունքում ներկայացնում են եզրահանգումներ և առաջարկություններ։ Փորձագիտական այցից պարզվեց, որ այս վերլուծությունների հենքով դեռևս էական փոփոխություններ չեն իրականացվել։

Որոշ գործընթացների (օրինակ ՄԿԾ-ների իրականացում) համար պլանավորման մեջ ունեն խնդիր, որոշ գործընթացների համար գնահատում-բարելավում կապը չի երևում:

Առկա են փաստաթղթեր, որոնց ներդրումը պայմանավորված է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներով (մասնավորաբար՝ Ուսանողների համապարփակ հարցման վերլուծություն, Աշխատակազմի համապարփակ հարցման վերլուծություն, ՈԿՀ կիրառման արդյունավետության գնահատում, Որակի կառավարման համակարգի ներքին ստուգման կարգ):

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծման նպատակով բուհում տեղի են ունենում գնահատումներ, կրթական ծրագրերի մշտադիտարկումներ, ինչպես նաև հարցումներ: Կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգը մշակվել է 2014 թ.-ին և վերանայվել 2016 թ.-ին՝ ավելացնելով դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման ընթացակարգ և Բենչմարքինգի իրականացման մեթոդաբանություն, այդուհետ լրամշակման չի ենթարկվել: Փաստաթղթերի ուսումնասիրման և փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ ՄԿԾ-ների և ՌԾ այլ ուղղություններով գործընթացներ դեռևս լիարժեք շրջափուլով չեն իրականացվել: Բուհը կարևոր մեխանիզմ է համարում ՈԱԿ-ի կողմից իրականացված Որակի կառավարման համակարգի կիրառման արդյունավետության գնահատումը, որի հիման վրա քայլեր դեռևս չեն իրականացվել: Բուհը այս տեսանկյունից կարևորում է նաև հարցումների պարբերաբար իրականացումը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հարցարաններում առկա են հարցեր, որ թույլ չեն տալիս բացահայտել որոշակի խնդիր (մասնավորաբար՝ ուսանողների բավարարվածությունը տարբեր ստորաբաժանումների գործունեությունից, ուսանողների կամ աշխատակիցների կողմից ռեսուրսների և ենթակառուցվածքների գնահատումը): Փորձագիտական այցից պարզվեց, որ որոշ պարագաներում (ռեսուրսներից բավարարվածություն, ՊԴ կազմի գնահատում և այլն) բուհը հետևողական է մտահոգիչ ցուցանիշի պատճառները բացահայտելու ուղղությամբ՝ կիրառելով ֆոկուս-խմբային քննարկումների մոտեցումներ, սակայն այս գործընթացներով պայմանավորված հստակ վերլուծություններ նկատելի չեն:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ԵՄՀ-ն գործընթացների վերաբերյալ հրապարակումներ է իրականացնում պաշտոնական կայքի, սոցիալական ցանցերի միջոցով, որոնք մեծապես գովազդային բնույթ ունեն: Կայքում տեղադրված են կարգեր, կանոնադրություններ, կանոնակարգեր, ընթացակարգեր, ռեկտորի հաշվետվությունները, առկա չեն ԿԽ և ԳԽ արձանագրություններ,

հարցումների վերլուծություններ, այլ հետազոտությունների արդյունքներ: Հրապարակում են նաև Էրազմուսի հաջողության պատմություններ, լավագույն ուսանողի մրցանակին արժանացած ուսանողների մասին տեղեկատվություն:

Հրապարակված փաստաթղթերը, հաշվետվությունները և այլ բնույթի հրապարակումները հիմնականում հայերենով են, բացառությամբ՝ որոշների:

Ուսումնասիրություններից և փորձագիտական այցից պարզվեց, որ, չնայած բուհն ունի հաջողությունների հասած շրջանավարտներ, նաև միջազգային ուսանողներ Իրաքից, ովքեր լիցենզիաներ են ստացել մասնագիտական գործունեություն ծավալելու համար, սակայն այս մասին հրապարակումներ առկա չեն կայքում:

Ուսումնասիրություններից և փորձագիտական այցից պարզվեց նաև, որ, չնայած ունեն հարցումներ հրապարակումների վերաբերյալ (ուսանողներն ու աշխատակազմը գնահատում են կայքի կառուցվածքն ու նյութերի որակը), սակայն դրանք թույլ չեն տալիս վերոնշյալ հրապարակումները գնահատելու:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԵՄՀ-ում կանոնակարգված է կառավարման մարմինների և ստորաբաժանումների գործունեությունը, ինչին մեծապես նպաստել է գործառութային շրջանակի սահմանումը՝ ըստ համապատասխան կանոնադրությունների և կանոնակարգերի: Չնայած կառավարման համակարգում իրականացված որոշ փոփոխություններին, կառավարման գործընթացները դեռևս շահակիցների բավարար ներգրավվածությամբ և մասնակցայնությամբ չեն իրականացվում, և կոլեգիալ կառավարումը բավարար չափով արտահայտված չէ բուհում: Այս պարագայում, չնայած դասախոսների և ուսանողների՝ իրենց վերաբերող որոշումների կայացմանը ներգրավվելու մեխանիզմն առկա է ֆորմալ առումով, սակայն գործընթացային առումով, դա արտահայտված չէ: Այս հանգամանքը, փորձագիտական խմբի գնահատմամբ, կարող է խոչընդոտել ներքին շահակիցների՝ կարիքների ամբողջական վերհանմանը և դրանց հիմքով որոշումների կայացմանը: Այս տեսանկյունից բուհը պետք է ուշադրություն դարձնի ուսանողների և դասախոսների ընտրության մեխանիզմների թափանցիկության և իրազեկվածության ապահովմանը, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա ուսանողների և դասախոսների գործուն ներգրավվածության կառավարման գործընթացներում:

Փորձագիտական խումբը դրական է համարում բուհում բարեվարքության կանոնների սահմանման և պահպանման ուղղությամբ ձևավորված մեխանիզմների առկայությունը և կարևորում շահակիցների՝ գործող փաստաթղթերի վերաբերյալ իրազեկվածության ավելացումը՝ մեծացնելու նշյալ գործընթացների արդյունավետությունը և նպաստելու կառավարման էթիկայի դրույթների պահպանմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհում գործող հաստիքների համար հիմնականում սահմանված են պաշտոնների անձնագրեր, և գնահատելի է բուհի ձգտումը ՌԾ-ի իրականացման համար առավել արդյունավետ և նպատակահարմար կառուցվածք ունենալուն ուղղված: Սակայն, փորձագիտական խումբը կարևորում է, որ կազմակերպական սխեման հստակորեն արտացոլի ուղղաձիգ և հորիզոնական կապերը,

միաժամանակ ուշադրություն դարձվի, որ տարբեր հաստիքների համար ապահովվեն որոշակիացված տարբեր գործառույթներ: Այս տեսանկյունից փորձագիտական խմբի կողմից հատուկ ուշադրության է արժանանում այն հանգամանքը, որ ստորաբաժանումները մարդկային և այլ ռեսուրսների առումով համահունչ լինեն սահմանված ռազմավարական նպատակներին և նախատեսված գործառութային շրջանակին: Փորձագիտական խմբի դիտարկմամբ նշված խնդիրները կարող են խոչընդոտել ռազմավարական նպատակների իրագործումը և բուհի զարգացումը իր առանձնացրած ռազմավարական ուղղություններով:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը ներդնում է «Ebuh» բուհերի ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգը, քանի որ վերջինս կարող է նպաստել փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպմանը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ ըստ երկարաժամկետ և կարճաժամկետ ռազմավարական պլանավորման ֆինանսական ռեսուրսների բաշխման բացակայությունը և բյուջեի մուտքերի բազմազանեցման հետ կապված խնդիրների առկայությունը վտանգում է ամբողջ պլանավորման իրատեսականությունը և իրականացման երաշխիքները, հատկապես, որ ըստ կրթական ծրագրերի պլանավորումներ և ֆինանսական առումով իրականացման արդյունավետության վերլուծություններ ևս առկա չեն:

Փորձագիտական խումբը դրական է համարում ԵՄՀ-ում նախագծահենք կառավարման փորձը, ինչը նպաստում է առանձին գործընթացների արդյունավետ կառավարմանը:

Փորձագիտական խմբի համար գնահատելի է, որ ներքին շահակիցների մոտեցումները կարող են ներկայացվել ՈԱԿ-ի կողմից իրականացված հարցումների արդյունքների միջոցով, սակայն նկատելի չեն դրանց միջոցով վերհանված էական խնդիրներ, ինչը պայմանավորված է նաև շահակիցների թույլ մոտիվացիայով: Սա ևս վկայում է, որ մասնակցային կառավարման գործընթացները տուժում են՝ պայմանավորված թույլ իրազեկվածությամբ:

Փորձագիտական խմբի համար գնահատելի է, որ բուհն ունի 2019-2025 թթ.-ի ՌԾ, ունի առաքելություն, սահմանված նպատակներ, նաև փորձել են ներդնել ԳԱՑ-երի սահմանման մեխանիզմը և ըստ դրանց հաշվետվողականություն ունենալն են կարևորել: Սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում պլանավորման գործընթացում առկա խնդիրները (բյուջեի պլանավորման բացակայություն, ԳԱՑ-երի անհստակություն, գործողություններով նախատեսված արդյունքների բացակայություն), ուստի երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներն ունեն անհստակություններ և դրանց ամբողջությունը չի վերածվել ռազմավարական նպատակներին հասնելու հստակ ճանապարհի՝ ըստ հստակ պատասխանատվությունների և ժամկետների: Այս առումով պետք է փաստել, որ տուժում են երկարաժամկետ և կաճաժամկետ ռազմավարական կառավարման գործընթացները թե՛ պլանավորման և իրականացման, թե՛ մշտադիտարկման և նպատակկների հասանելիության երաշխավորման տեսանկյունից:

Փորձագիտական խմբի համար տեսանելի են նաև ըստ ՌԾ-ի հաշվետվողականության ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքները, սակայն

մշտադիտարկման գործընթացը հստակ չէ, թերակատարումները չեն հանգեցնում խորը վերլուծությունների, վերապլանավորումների կամ պատասխանատվությունների ենթարկման: Առկա են սահմանված ցուցանիշներ, որոնք միջնաժամկետ կամ երկարաժամկետ են և ընթացիկ միջանկյալարդյունքներ սահմանված չեն, ինչը խոչընդոտում է դրանց ընթացիկ գնահատումը:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ ԵՄՀ-ն ունի որոշ մեխանիզմներ, որոնց միջոցով որոշակիորեն իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություններ է իրականացնում, և դրանք ազդում են որոշումների կայացման վրա: Փորձագիտական խումբը կարևորում է նաև ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրումը, ինչպես նաև առավել խորը վերլուծությունների իրականացումը ռազմավարական նշանակության հարցերի կամ կառավարչական կարևորագույն հարցերի հետ կապված որոշումներ կայացնելիս, ինչը մեծապես կբարձրացնի կայացվող որոշումների արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհում ներդրվել է Որակի կառավարման համակարգի կիրառման արդյունավետության գնահատման մեխանիզմ, որը դեռևս նոր է գործածվում, և քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության իրականացման համար որակի կառավարման սկզբունքի առանձին փուլեր կիրառվում են, սակայն ամբողջական շրջափուլի կիրառումը ընդհանուր մշակույթի մաս չի դարձել դեռևս:

Փորձագիտական խմբի համար տեսանելի է, որ առանձին դեպքերում բարելավվել են որոշ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման մեխանիզմները, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ արժանահավատ վերլուծությունների ապահովման համար կարևոր է հավաքագրվող տեղեկատվության համակողմանիությունը:

ԵՄՀ-ն ունի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին որոշ հրապարակումներ, սակայն փորձագիտական խմբի դիտարկմամբ այս տեսանկյունից հրապարակումները համալրման անհրաժեշտություն ունեն, ինչը կնպաստի առավելապես թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվություն ապահովելուն: Դրա հետ մեկտեղ փորձագիտական խումբը նշում է, որ կարևոր է ուշադրություն դարձնել այդ հրապարակումների գնահատման մեխանիզմների կատարելագործմանը, ինչը կարող է նպաստել վերոնշյալ գործընթացների հետագա զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ԵՄՀ-ում կառավարման գործընթացներում կոլեգիալության մոտեցումների ոչ ամբողջական կիրառումը, ռազմավարական կառավարման գործընթացների անկատարությունը, որոշումների կայացման համար օբյեկտիվ և համակողմանի տվյալների սակավությունը, ռիսկերի կառավարման մեխանիզմների բացակայությունը, քաղաքականությունների և ընթացակարգերի վաչարարության նկատմամբ որակի կառավարման սկզբունքի ոչ ամբողջական գործածումը, ՄԿԾ-ների և որոշ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմների անկատարությունը, ՄԿԾ-ների և

շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումների սակավությունն ու դրանց գնահատող մեխանիզմների անկատարությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԵՄՀ-ում կրթական ծրագրեր են իրականացվում ՈԱՇ-ի երեք մակարդակներում՝ 6-րդ, 7-րդ և 8-րդ: 2022-2023 ուսումնական տարվա դրությամբ իրականացվում է 23 կրթական ծրագիր, որոնցից 9-ը՝ բակալավրի, 11-ը՝ մագիստրոսի և 3-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում: Ընդ որում՝ Իրավագիտություն, Ֆարմացիա և Կառավարում մասնագիտություններով ուսումնառություն են կազմակերպում նաև միջազգային ուսանողների համար: Վերջին տարիներին միջազգային ուսանողների թիվը ավելացել է, և բուհը շարունակաբար աշխատանքներ է իրականացնում այն ավելացնելու ուղղությամբ:

Ըստ ԵՄՀ 2019-2025 թթ.-ի ՌԾ-ի՝ բուհը նախատեսում է իրականացնել բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն սոցիալական, հումանիտար գիտությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների և դեղագիտության ոլորտներում՝ նպատակաուղղված աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին:

ԵՄՀ-ն որպես աշխատաշուկայի արդի պահանջների ուսումնասիրություն դիտարկում է Ազգային վիճակագրական ծառայության վերլուծությունները: Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին, որ ԵՄՀ-ն աշխատաշուկայի առանձին համապարփակ վերլուծություններ չունի: Փորձագիտական այցից պարզվեց, որ միջազգային ուսանողների համար առանձին ուսումնասիրություն չեն իրականացնում, միջազգային աշխատաշուկայի վերլուծություն ևս դեռևս չի իրականացվել:

Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ ԵՄՀ-ն արժևորում է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, և, ըստ այդմ, կարևորում է այն, որ նախորդ հավատարմագրման գործընթացում փորձագիտական խմբի կողմից «վերանայված՝ վերջնարդյունքների սահմանմամբ ՄԿԾ-ների առկայությունը» և «ՄԿԾ-ների վերջնարդյունքների համահունչությունը նմանատիպ այլ կրթական ծրագրերին» սահմանվել

են որպես ԵՄՀ ուժեղ կողմեր: Սակայն դրա հետ մեկտեղ նշվում է, որ ԵՄՀ-ն գիտակցում է ՄԿԾ-ների բարելավման գործընթացի շարունակականությունը և ըստ «Կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգի»՝ յուրաքանչյուր տարի լրամշակում և բարելավում է կրթական ծրագրերը՝ արձագանքելով աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխություններին և գլոբալ միտումներին: Այս միտումով ԵՄՀ-ն 2019-2020 ուսումնական տարվանից սկսած մեկնարկել է ծրագրային և կրթական գործընթացների բարելավման հերթական խոշոր շրջափուլը, որի արդյունքում մասնավորաբար 2020 թ.-ին վերանայել են կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման ձևաչափը, 2022 թ.-ին՝ կրթական և առարկայական ծրագրերի ձևաչափերը: Փորձագիտական այցից պարզվեց, որ կրթական ծրագրերի վերջին բարելավումների ժամանակ հաշվի են առնվել նաև ՈՈՇ-ները: Փորձագիտական այցից պարզվեց, որ կրթական ծրագրերը վերանայելիս նկատի են ունեցել 2020 թ.-ի համավարակով պայմանավորված ձեռք բերված փորձը և որպես հնարավորություն հավելյալ ավելացրել են դասընթացի որոշակի մասը, իսկ մագիստրատուրայի դեպքում ամբողջությամբ հեռավար անցկացնելը, ինչը կատարվում է դասախոսի կողմից այս հնարավորության կիրառման ներկայացմամբ և ամբիոնի հատուկ թույլտվությամբ: Այս տեսանկյունից ԵՄՀ-ն աշխատանքներ է իրականացրել՝ ստեղծելով Microsoft Teams-ի հարթակ, որտեղ դասախոսները տեղադրում են համապատասխան փաթեթները, հանձնարարականները և դասերի գրառումները:

Կրթական ծրագրերն ուսումնասիրելով՝ փորձագիտական խումբը փաստում է, որ յուրաքանչյուր կրթական ծրագրում նշվում է ծրագրի նպատակը, ընդունելության և ավարտելու պահանջները, շրջանավարտների հետագա ուսման և կարիերայի հնարավորությունները: Առանձնացված են ուսումնառության ընդհանրական և մասնագիտական վերջնարդյունքներ, նշվում են ուսումնական անհրաժեշտ ռեսուրսներ: Կրթական ծրագրի փաթեթում առկա է նաև կրթական ծրագրի վերջնարդյունքների և ՈԱՇ-ի համադրելիության քարտեզագրում, ինչպես նաև կրթական ծրագրի և դասընթացների վերջնարդյունքների համադրելիության քարտեզագրում: Կրթական ծրագրերի դասընթացների նկարագրերում որպես դասավանդման լեզու նշվում է հայերենը: Փորձագիտական այցից պարզվեց, որ, չնայած գործնական և պրակտիկ ժամերի ավելացման ուղղությամբ աշխատանքներ են կատարվել, այնուամենայնիվ, դրանք դեռևս ավելացնելու անհրաժեշտություն են տեսնում բուհում:

Ուսումնական պլաններում ներկայացված են ընտրովի դասընթացներ, սակայն առկա են դեպքեր, երբ նույն ցանկում առկա ընտրովի դասընթացների ընտրության արդյունքում, ըստ նախատեսվածի ձևավորվելու են տարբեր վերջնարդյունքներ, տարբերություններն արտահայտվում են նաև գլխավորապես ընդհանրական կամ մասնագիտական վերջնարդյունքներին միտված լինելու հանգամանքով (մասնավորաբար՝ Սոցիոլոգիա և Բիզնես հաղորդակցության հմտություններ): Փորձագիտական այցից պարզվեց, որ կազմակերպվում են այն դասընթացները, որոնք ընտրվում են ուսանողների մեծամասնության կողմից: Միաժամանակ պարզվեց, որ ընտրովի դասընթացներից միայն մեկն է անգլերենով անցկացվում, և դասընթացի ընտրության հնարավորություն միջազգային ուսանողները չեն

ունենում: Փորձագիտական այցից պարզվեց, որ մագիստրատուրայում հայազգի ուսանողները միջազգային ուսանողների հետ նույն խմբում անգլերենով են ուսումնառում: Բակալավրիատում միջազգային ուսանողների համար ուսումնառությունն առանձնացված խմբերով է իրականացվում: Սակայն դրա հետ մեկտեղ, փորձագիտական այցից պարզվեց, որ առանձին դեպքերում միջազգային ուսանողները նաև անգլերենի իմացության խնդիր ունեն:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ հեռակա համակարգում ուսումնառությունը կազմակերպվում է միայն շաբաթ օրերին, ինչը նպատակահարմար է ուսանողների համար, ովքեր նաև աշխատում են: Մագիստրատուրայում ուսումնառությունը առավելապես հեռավար կերպով է անցկացվում՝ Microsoft Teams-ի հնարավորությունների կիրառմամբ:

Կրթական ծրագրերի ուսումնասիրման և համեմատության արդյունքում նկատելի են բակալավրիատում և մագիստրատուրայում նույնանուն դասընթացներ, որոնք հիմնականում կրկնվում են բովանդակությամբ (մասնավորաբար՝ Կառավարում ՄԿԾ-ում՝ Ռազմավարական կառավարում, Նախագծերի կառավարում դասընթացները):

Առկա են դեպքեր, երբ դասընթացների նկարագրերում ներկայացված գրականության ցանկերում բացակայում են անգլերենով աղբյուրները (մասնավորաբար՝ Կառավարում ՄԿԾ-ում՝ Հաշվապահական հաշվառում, Միջազգային մենեջմենթ, Ինֆորմատիկա, Տնտեսագիտության տեսություն դասընթացներում, Իրավագիտություն ծրագրում՝ Եվրոպական իրավունք դասընթացում):

Համեմատական վերլուծություն իրականացնելու արդյունքում փոփոխություններ են իրականացվել մագիստրատուրայի կրթական ծրագրերում՝ ուսումնառության տարիները դարձնելով 1,5 տարի, ինչպես նաև վերանայելով դասընթացների ցանկն ու որոշակիորեն նաև բովանդակությունը: Սակայն դրանով հանդերձ կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքները փոփոխության չեն ենթարկվել:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Բակալավրիատի կրթական ծրագրերում առկա է «Դասավանդման և ուսումնառության մեթոդներ» բաժին, իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրերում՝ «Ուսուցման և ուսումնառության մեթոդներ» բաժին: Դրանցում առանձնացված են ուսուցման և ուսումնառության մեթոդները կրթական ծրագրի համար: Կրթական ծրագրում առկա յուրաքանչյուր դասընթացի համար բուհն ունի Դասընթացի առարկայական ծրագիր, որում ընդհանուր նշվում են ուսուցման և ուսումնառության առաջարկվող ձևերն ու մեթոդները:

Նախորդ հավատարմագրումից հետո մեկնարկած վերանայումների շրջանակներում ամբիոներում անդրադարձ են կատարել վերջնարդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների, ինչպես նաև գնահատման մեթոդների փոխկակցվածության ապահովման հարցին՝ նկատի ունենալով փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվությունը: Փորձագիտական այցից պարզվեց, որ դասախոսներն ազատ են

ուսուցման և ուսումնառության մեթոդների ընտրության հարցում: Հարկ է նշել, որ լսարաններում առկա են համակարգիչներ և պրոյեկտորներ կամ էկրաններ, որոնք դասավանդողները գործածում են դասավանդման գործընթացում: Դասալսումների և փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ դասավանդողները բավականին քայլեր են կատարել դասավանդման և ուսումնառության առավել փոխգործուն մեթոդների կիրառման հարցում, ինչը հատկանշական կերպով նկատելի է նաև ուսանողների համար, և ուսանողների համար դա գրավիչ կողմ է դիտվում: Մասնավորաբար, սեմինարներ են անում, որտեղ ուսանողները հանդես են գալիս ներկայացումներով, և ծավալվում է քննարկում:

Փորձագիտական այցից պարզվեց, որ երբ ուսանողները «Կառավարում», «Իրավագիտություն» մասնագիտության մագիտրատուրան ընդունվելիս փոխում են բազային մասնագիտության ուղղվածությունը, խնդիրներ են առաջանում մասնագիտական կարողությունների լիարժեք ապահովման տեսանկյունից, և այս պարագայում դասավանդողները փորձում են անհատապես աշխատել ուսանողների հետ անկնկալվող արդյունքներին հասնելու համար:

Փորձագիտական այցից և դասալսումներից պարզվեց, որ անհատական աշխատանքների իրականացումը դիտվում է՝ որպես կարևոր բաղադրիչ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ ուսանողի ծանրաբեռնվածության հիմնական մասը արտահայտվում է ինքնուրույն աշխատանքի բաղադրիչի միջոցով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առկա են դեպքեր, երբ ինքնուրույն աշխատանքների թեմաները նույնն են, ինչ որ դասընթացի շրջանակում նախատեված թեմաները և չի նշվում, թե որպես հանձնարարություն ինքնուրույն աշխատանքի շրջանակում ինչպիսի պահանջ է դրվում ուսանողի առջև: Դասընթացների նկարագրերում յուրաքանչյուր թեմայի համար առկա են նախատեսված առաջադրանքներ: Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին, որ կան դեպքեր, երբ «Առաջադրանքներ» բաժնում միայն գրականություն է նշվում կամ հանձնարարականները հիմնականում ուղղված են տեսական գիտելիքների ձևավորմանը (մասնավորաբար՝ Միջազգային մենեջմենթ, Տնտեսագիտության տեսություն), մինչդեռ կրթական ծրագրերում առկա են նաև կարողություններին միտված վերջնարդյունքներ:

Ուսումնական պլանները վերանայելիս բուհը կարևորել է գործնական բաղադրիչի ավելացումը և պրակտիկաների կազմակերպումը: Կազմակերպում և իրականացնում են համապատասխան ոլորտի պրակտիկ մասնագետների կողմից վարվող վարպետության դասեր և արտագնա դասեր՝ արտադրություններում և գործատուների աշխատավայրերում ուսանողների գործնական հմտությունների ձևավորման համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԵՄՀ-ն «Այդի Բանկ» ՓԲԸ-ի հետ համագործակցության արդյունքում համալսարանի դասախոսների հեղինակությամբ հրապարակվել է «Այդի Բանկ. բանկային նոր մշակույթ» գիրքը (case study), որում առկա դեպքերը կիրառում են դասավանդման գործընթացում «Կառավարում» ՄԿԾ-ի շրջանակում:

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական այցի արդյունքների՝ պարզվեց, որ պրակտիկաների իրականացման ընթացակարգն ու մեթոդաբանությունը վերանայվել է՝ հիմք

ընդունելով ՈԱ կենտրոնի կողմից իրականացված ներքին ստուգման արդյունքները: Բուհն ունի 2014 թ.-ին հաստատված Պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարգ, որը վերոնշյալի արդյունքում վերանայվել է 2022 թ.-ին: Այդ վերանայման արդյունքում, օրինակ՝ ուսումնական պրակտիկաները ինտեգրվել են հիմնական մասնագիտական դասընթացներում, ընդ որում նպատակ է եղել ամրապնդելու ու խորացնելու ուսումնառության ընթացքում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները, ինչպես նաև նպաստել մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ պրակտիկաները առավելապես հետազոտական և վերլուծական կարողությունների զարգացմանն են ուղղված և չեն արտահայտվում մասնագիտական այլ կարողությունների ձևավորումը: Ուսումնական պլաններում և դասընթացների նկարագրերում առկա չեն պրակտիկայի համար առանձին հատկացվող ժամեր: Ուսումնական պլանով առանձին արտահայտված միայն նախաավարտական պրակտիկան է նախատեսված բակալավրիատի կրթական ծրագրով, իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրով՝ մասնագիտական/հետազոտական պրակտիկա:

ԵՄՀ ՈԱԿ-ը հարցումներ է անցկացնում, որի արդյունքներով ուսանողները հիմնականում գոհ են պարտադիր դասընթացների որակից և կիրառվող դասավանդման մեթոդներից, սակայն ընտրովի դասընթացների որակից գոհունակության ցուցանիշը բարձր չէ:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Բուհում գործում է ԵՄՀ-ի Ուսանողի գիտելիքի, հմտությունների և կարողությունների գնահատման կարգը, որի վերջին վերանայումը եղել է 2022 թ.-ին: Մասնավորաբար, ավելացվել է կետ, որ եթե 30%-ից ավելի /հեռական՝ 40/ բացակայություններ կան կիսամյակում, ապա ուսանողը հեռացվում է Գիտխորհրդի որոշմամբ: 2022 թ.-ին Քննությունների կազմակերպման և անցկացման կարգի վերանայման արդյունքում պարտադիր են դարձել գնահատման ռուբրիկները, ավելացվել է համակցված և այլընտրանքային քննությունների իրականացումը՝ առցանց գրավոր, առցանց բանավոր: Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կան դասընթացներ, որոնց շրջանակում առկա են հանձնարարականներ, որոնք առավելապես վերլուծական կարողություններին են միտված, առանձին դեպքերում՝ նաև գործնական կարողություններին (մասնավորաբար՝ Հաշվապահական հաշվառում): Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հանձնարարությունների կապը դասընթացի վերջնարդյունքների և ՄԿԾ վերջնարդյունքների հետ հստակ արտահայտված չէ (մասնավորաբար՝ Միջազգային մենեջմենթ, Մենեջմենթ): Փորձագիտական այցից պարզվեց, որ բիոքիմիա, միկրոբիոլոգիա դասընթացների համար երբեմն ուսանողները չեն կարողանում լաբորատոր փորձեր իրականացնել: Ֆարմացիայի մասնագիտությամբ ուսանողների քանակը քիչ է, ուսանողները կարողանում են փորձեր շատ անգամներ իրականացնել վերջնական

արդյունքին հասնելու համար: Փորձագիտական այցից նաև պարզվեց, որ վերջնարդյունքին հասնելու համար գնահատման չափանիշները հստակ արտահայտված չեն:

Բուհն ունի բողոքարկման կարգ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արձանագրված բողոքարկման դեպքեր հիմնականում չկան:

Պրակտիկայի գնահատումը բուհում իրականացվում է ըստ պրակտիկայի պաշտպանության ձևաչափի, որտեղ առանձնացնում են հետևյալ բաղադրիչները. ներկայություն՝ 15%, կազմակերպությունում պրակտիկայի համակարգողի գնահատական՝ 15%, պրակտիկայի հաշվետվություն՝ 30%, պրակտիկայի պաշտպանություն՝ 40%: Փորձագիտական այցից պարզվեց, որ պրակտիկայի պլանավորումը հստակ չէ, ուսանողներին տրվող հանձնարարությունները գլխավորապես կախված են գործատուի պահանջներից: Պրակտիկայի արդյունքները գնահատվում են ամբիոնի կողմից հաշվետվության և կարծիքի հիման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախաավարտական պրակտիկան ուղղված է ավարտական աշխատանքի իրականացմանը, որի թեման բուհը փորձում է կապակցել պրակտիկայի վայրի ուղղվածության և գործունեության հետ:

Բուհն ունի 2014 թ.-ին հաստատված Բակալավրի հետազոտական աշխատանքի և մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշպանության ուղեցույց, որը վերանայվել է 2021 թ.-ին: Փաստաթղթում ներկայացված է ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի համար գիտելիք, հմտություն և կարողունակություն՝ ըստ բակալավրիատի և մագիստատուրայի կրթական ծրագրերի համեմատական աղյուսակով: Փորձագիտական այցից և ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի ուսումնասիրությունից պարզվեց, որ գնահատումն իրականացրել են ըստ փաստաթղթով պահանջվող ձևաչափի, սակայն միշտ չէ որ այդ փաստաթղթով ներկայացվող պահանջների կիրառումը տեսանելի է աշխատանքներում:

Փորձագիտական այցից պարզվեց, որ ավարտական աշխատանքների և մագիստոսական թեզերի գրագողության դեպքերի բացահայտման համար բուհը կիրառում է համապատասխան ծրագիր, որի գործածման պարագայում դեռևս առկա է խնդիր հայալեզու տեքստերի պարագայում:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ԵՄՀ-ն համագործակից բուհերի բավականին լայն շրջանակ ունի, և 2017 թ.-ին կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն է իրականացրել այդ բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ: Այս վերլուծությունները հիմք են հանդիսացել կրթական ծրագրերի վերանայման համար: Բուհի համար վերանայումների հիմք են հանդիսացել նաև, որ վերամասնագիտացման և նոր մասնագիտություն ձեռք բերելու նպատակ ունեցող ու աշխատանքով ապահովված դիմորդները մագիստրոսական մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված որակավորման վերջնարդյունքները ավելի արագ յուրացնելու պահանջ են առաջադրել, նույնպիսի անհրաժեշտության մասին նաև

գործատուներն են նշել: Այս հանգամանքը, ինչպես նաև հիբրիդային ուսուցմանն անցում կատարելը որպես նպատակներ ունենալով՝ 2020 թ.-ին ձեռնարկել և իրականացրել են համեմատական վերլուծության իրականացման գործընթաց: Վերլուծության արդյունքում որոշ դասընթացներ կրել են բովանդակային փոփոխություններ, որոշները՝ դուրս են բերվել ցանկից («Կառավարում» ՄԿԾ):

Փորձագիտական այցից պարզվեց, որ բոլոր համագործակից բուհերն են դիտարկվել համեմատական վերլուծություն իրականացնելիս, սակայն այդ բուհերի կրթական ծրագրերի վերջնարդյունքների հստակ համեմատական չի իրականացվել, միաժամանակ շատ պարագաներում առաջնորդվել են համացանցում հասանելի տեղեկատվությամբ, դրա հետ մեկտեղ ուսումնասիրվել են նաև շարժունության ծրագրերով այդ բուհերում եղած աշխատակիցների դիտարկման արդյունքները: Վերջիններս հիմք են հանդիսացել նաև առանձին դասընթացների բովանդակության վերանայման համար:

Համեմատական վերլուծության արդյունքում նաև կրեդիտների խոշորացմանն ուղղված գործընթացներ են իրականացվել, սակայն դասընթացներին կրեդիտների հատկացման գործընթացը միշտ չէ, որ համապատասխան հիմնավորմամբ է իրականացվել: Առկա են դեպքեր, երբ որոշակի դասընթացի կրեդիտ հատկացնելիս առաջնորդվել են ուսումնասիրման արդյունքում եղած կրեդիտների մեխանիկական միջինացմամբ: Ուսումնասիրություններից և փորձագիտական այցից պարզվեց, որ կան դասընթացներ, որոնք բովանդակությամբ համապատասխանեցված չեն միջազգային պահանջներին և նպատակահարմար չեն միջազգային ուսանողների համար (մասնավորաբար՝ Հաշվապահական հաշվառում 1, Հաշվապահական հաշվառում 2):

Իրավագիտության, կառավարման և SS մասնագիտությունների գծով իրականացնում են կրկնակի դիպլոմի ծրագրեր:

Բուհում 2019 թ.-ին հաստատվել են «Ուսանողների ակադեմիական շարժունության և արդյունքների ճանաչման քաղաքականությունը» և «Կրեդիտային շարժունության արդյունքների ճանաչման ընթացակարգը»: Արդյունքում, նախապես կնքված պայմանագրի հիման վրա ուսանողը կարող է կուտակել կրեդիտներ համագործակից արտերկրյա բուհերից, ինչպես նաև ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած Հայաստանյան այլ բուհերից, սակայն ՀՀ տարբեր բուհերի հետ ուսանողների շարժունության և կրեդիտների ճանաչման փորձ դեռևս առկա չէ:

Ուսանողների՝ շարժունությամբ արտահոսքի տվյալներն ուսումնասիրելիս կարելի է փաստել, որ դրանք վերջին 5 տարիների ընթացքում դինամիկ աճ չեն գրանցել, մինչդեռ դասավանդողների պարագայում այդ ցուցանիշը վերջին երկու ուսումնական տարիների համար աճել է 2018-2019 և 2019-2020 ուսումնական տարիների նկատմամբ: Դասավանդողների ներհոսքի ցուցանիշները նվազել են, իսկ ուսանողների ներհոսքի ցուցանիշներն ընդհանուր առմամբ բավականին ցածր են:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԵՄՀ-ն մշակել է Կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգ: Փաստաթղթի համաձայն՝ ենթադրվում է տարեկան և երկարաժամկետ ուսումնասիրություններ և դրանց հիման վրա իրականացվող փոփոխություններ:

Ուսումնասիրություններն ու փորձագիտական այցը ցույց տվեցին, որ կրթական ծրագրերի վերանայման համար տարբեր գործոններ են հանդես գալիս՝ դասավանդողների կողմից ներկայացված խնդիրները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ներկայացված կարծիքները, միջազգային փորձը, հավատարմագրման գործընթացը, ամբիոններում ծավալվող քննարկումները, աշխատաշուկայի զարգացման միտումները, դասալսումները: Բուհում իրականացվում են կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման հարցումներ, սակայն դրանց ազդեցությունը կրթական ծրագրերի վերանայման հարցում նկատելի չէ:

Միաժամանակ, փորձագիտական այցից պարզվեց, որ մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման, մշտադիտարկման և բարելավման գործընթացը դեռևս հստակ համակարգված գործընթաց չէ, մասնավորաբար նաև գործատուների ներգրավվածություն և շրջանավարտների՝ աշխատաշուկայում ունեցած արդյունքների ազդեցությունը նկատելի չէ: ԵՄՀ-ն հիմնականում չի հետևում միջազգային ուսանողների հետագծին բուհն ավարտելուց հետո, քանի որ առկա են դժվարություններ, սակայն առանձին դեպքերում դիտարկում են շրջանավարտների՝ իրենց երկիր վերադառնալուց հետո մասնագիտական գործունեություն ծավալելու համար լիցենզիա ստանալը, ինչը երաշխիք է ստացած կրթությունը ընդունելի համարելու համար: Գործատուների ներգրավվածությունը կարևորելով՝ բուհը նրանց ներգրավում է մասնավորաբար դասավանդման, թեզերի ղեկավարման գործընթացներում, ինչի արդյունքում պրակտիկ փորձառություն ունեցող դասավանդողները կիսվում են ժամանակակից մարտահրավերներով, իրենց փորձառությունը փոխանցում ուսանողներին, ինչպես նաև իրենց գործընկեր դասավանդողներին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհում իրականացվել է ՈԱՇ-ին համադելիության քարտեզագրում և աշխատանքներ են իրականացնում ՈՈՇ-ի համադելիության ուղղությամբ: Նաև դրական է աշխատաշուկայի պահանջների և կարիքների կարևորումը բուհի կողմից, սակայն այդ ուղղությամբ բազմակողմանի ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացումը կնպաստի կրթական ծրագրերի շարունակականության ապահովմանը. այս տեսանկյունից կարևոր է նաև հաշվի առնել միջազգային ուսանողների՝ աշխատաշուկայում զբաղեցրած տեղը:

Փորձագիտական խումբը նշում է, որ ԵՄՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերում առկա է ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների մանրամասն նկարագիր, սակայն կարևոր է, որ սա հասանելի լինի ուսանողների (նաև՝ միջազգային) և բոլոր դասախոսների համար: Փորձագիտական խումբը դրական է համարում ՄԿԾ-ների ուղղությամբ կատարված աշխատանքները և

բարեփոխումները, որոնք հանգեցրել են կրթական ծրագրերի նկարագրերի և վերջնարդյունքների հստակեցման: Փորձագիտական խմբի համար գնահատելի են նաև դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման ուղղությամբ կատարված աշխատանքները, որոնք մեծապես բարձրացրել են իրականացվող կրթական ծրագրերի արդյունավետությունը: Սակայն պրակտիկ կարողություններին միտված վերջնարդյունքների լիարժեք ապահովման տեսանկյունից դեռևս առկա են խնդիրներ: Փորձագիտական խումբը նշում է, որ այս գործընթացները կշահեն, եթե բուհում առավել ուշադրություն դարձնեն պրակտիկ կարողություններին միտված հանձնարարականներին, գործածվող դասավանդման, ուսուցման և գնահատման մեթոդներին, պրակտիկայի գործընթացում առկա խնդիրներին:

Դրական է, որ ՄԿԾ-ներում բավականին կամընտրական դասընթացներ են նախատեսել: Միաժամանակ, փորձագիտական խումբն ընդգծում է կամընտրական դասընթացներին ուշադրություն դարձնելու հանգամանքը՝ նկատի ունենալով դրանցով նախատեսված վերջնարդյունքները, ինչպես նաև դրանք ընտրելու հնարավորությունները: Կամընտրական դասընթացների հետ կապված խնդիրների ցուցիչ են նաև գոհունակության հարցումների արդյունքները, որոնք ուշադրության են արժանի և լրացուցիչ հետազոտություններ իրականացնելու անհրաժեշտության են հանգեցնում առավել խորքային դիտարկելու դրանց կապը կրթական ծրագրերի վերջնարդյունքների հետ: Սա կարևոր հանգամանք է ՄԿԾ վերջնարդյունքների ապահովման երաշխիքների տեսանկյունից:

Փորձագիտական խումբը գտնում է, որ միջազգային ուսանողների անգլերենի իմացության խնդիրները կարող են խոչընդոտել ուսումնառության գործընթացը, միաժամանակ նույն հանգամանքը և կաշկանդումը կարող է խոչընդոտել հայազգի ուսանողների արդյունավետ ուսումնառության գործընթացը մագիստրատուրայում, ուստի կարևորում է, որ բուհը ուշադրություն դարձնի այս հանգամանքին՝ հստակ գնահատելով ուսանողների լեզվաիմացության մակարդակը՝ ըստ յուրաքանչյուր կրթական ծրագրի առանձնահատկությունների:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհում կազմակերպվում և իրականացվում են համապատասխան ոլորտի պրակտիկ մասնագետների կողմից վարվող վարպետության և արտագնա դասեր, առկա են նաև գործատուների հետ արդյունավետ համագործակցության այլ արդյունքներ, որոնք նպաստում են կրթական ծրագրերի՝ աշխատաշուկայի արդի պահանջների հետ որոշակիորեն համապատասխանեցման:

Փորձագիտական խմբի համար գնահատելի են ուսանողների գնահատման քաղաքականության բարելավմանը միտված գործընթացները, մասնավորաբար ռուբրիկների սահմանման ուղղությամբ կատարված աշխատանքները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նկատմամբ ներկայացվող պահանջների և գնահատման սահմանված չափանիշների ուղղությամբ կատարված աշխատանքները: Փորձագիտական խումբը կարևորում է, որ բուհը գործուն քայլեր ձեռնարկի հանձնարարականների, գնահատման չափանիշների և վերջնարդյունքների կապը կրթական ծրագրերում արտահայտելու ուղղությամբ, ինչը կնպաստի գնահատման քաղաքականության

ամբողջական իրականացմանը և գնահատման համակարգի թափանցիկության ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում բուհի՝ միջազգային փորձի ուսումնասիրման և ներդրմանն ուղղված ջանքերը: Փորձագիտական խմբի գնահատմամբ այս գործընթացները նաև բուհի կարգախոսի (Մեր ձեռքը դարի զարկերակին է) հիմնավորման կարևոր բաղադրիչ են: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ համեմատական բենչմարքինգ իրականացնելիս ընտրված բուհերը և կրթական ծրագրերը ըստ նպատակների թիախավորելու, առավել խորը և հիմնավոր վերլուծություններ իրականացնելու անհրաժեշտություն կա՝ հաշվի առնելով բուհի կրթական ծրագրերի առանձնահատկությունները և առկա ենթակառուցվածքները:

Բուհը նաև աշխատանքներ է իրականացրել ուսանողների և դասախոսների շարժունության գործընթացների դյուրինացման ուղղությամբ և խրախուսում է ներգրավումն այս ծրագրերում: Փորձագիտական խումբը լիահույս է, որ իրականացվող գործընթացները կհանգեցնեն ուսանողների և դասավանդողների շարժունության ցուցանիշների դինամիկ աճի, քանզի ներկայումս դեռևս աճը նկատելի է դասավանդողների արտահոսքի ցուցանիշներում:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման ուղղությամբ բուհը նկատելի աշխատանքներ է իրականացրել, իսկ նշված գործընթացներն առավել համակագելու, հետազոտություններն առավել համակողմանի դարձնելու և շահակիցների լայն շրջանակ ներգրավելու պարագայում կրթական ծրագրերի վերանայումները կհիմնվեն առավել արժանահավատ տվյալների վրա՝ պատրաստելու աշխատաշուկայի պահանջները բավարարող շրջանավարտներ և բարձրացնելու ԵՄՀ կրթական ծրագրերի տեսանելությունը համանման ծրագրերի շրջանում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՄՀ-ի ՄԿԾ-ները բխում են հաստատության առաքելությունից, համահունչ են ՈԱՇ-ին և աշխատանքներ են իրականացվում ՈՈՇ-ին համապատասխանեցնելու ուղղությամբ, բուհն աշխատանքներ է իրականացնում դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման, գնահատման քաղաքականության հստակեցման ուղղություններով, կարևորում է ակադեմիական ազնվությունը, աշխատանքներ է իրականացնում կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային առումով միջազգային պահանջներին համահնչեցնելու ուղղությամբ՝ միտված շարժունության ապահովմանը, ունի ՄԿԾ-ների մշակման և մշտադիտարկման կարգ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն համապատասխանում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Եվրասիա միջազգային համալսարանում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: Բակալավրիատի առկա համակարգում ուսանելու ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմքով և ՀՀ Կառավարության 2012թ. ապրիլի 26-ի N 597–Ն որոշմամբ հաստատված «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի» համաձայն: Հեռակա համակարգի ընդունելությունը կազմակերպվում է՝ ըստ ԵՄՀ սովորողների ընդունելության կարգի: Բակալավրի ընդունելության քննությունները տարբերակվում են՝ որպես մրցութային և ոչ մրցութային: Մրցութային քննությունների համար փաստաթղթերի հանձնումից հետո կազմակերպվում են ընդունելության քննությունները, և բավարար միավոր հավաքած ուսանողները սկսում են իրենց ուսումնառությունը ԵՄՀ-ում:

ԵՄՀ-ում աճել է մագիստրատուրայի դիմորդների թիվը: Ընդունելությունն իրականացվում է ՀՀ ԿԳՆ 2007թ. դեկտեմբերի 6-ի N 1193-Ն «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի» համաձայն: Ընդունելությունն իրականացվում է մրցույթի հիման վրա, ըստ ընդունված կարգի, ինչպես նաև ԵՄՀ բակալավրիատի ուսանողները կարող են նույն մասնագիտությամբ մագիստրատուրա շարունակել հարցազրույցի հիման վրա՝ հաշվի առնելով բակալավրի ընթացքում ցուցաբերված առաջադիմությունը և արդյունքները:

Միջազգային ուսանողների ընդունելությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N700-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի» և «ԵՄՀ Օտարերկրացիների փաստաթղթերի հավաքագրման և կացության քարտ ձեռք բերելու ընթացակարգի» համաձայն: Միջազգային ուսանողների համար գործում է Նախապատրաստական դասընթացների բաժին, որի դասընթացների ընթացքում ուսանողներին ուսուցանում են դասավանդան լեզուն և մասնագիտական որոշ առարկաներ (պայմանավորված մասնագիտությունների առանձնահատկություններով), որոնք նախապայման են հանդիսանում տվյալ մասնագիտության ընդունելության քննությունները հանձնելու համար: Միջազգային ուսանողների անգլերենի իմացությունը ստուգվում է հարցազրույցի միջոցով, սակայն չկա սահմանված նվազագույն իմացության շեմ: Փորձագիտական այցից և դասալսումներից պարզ դարձավ, որ սա որոշ դեպքերում խոչընդոտներ է ստեղծում ուսանողների համար մասնագիտական առարկաներն ուսումնասիրելու համար:

Դիմորդների համար ընդունելության անհրաժեշտ փաստաթղթերի և քննական առարկաների մասին տեղեկատվությունը հասանելի է կայքում, ինչպես նաև հնարավորություն է ստեղծված անմիջապես կայքի միջոցով ստանալ խորհրդատվություն և լրացնել ընդունելության հայտը:

2018 թվականից ի վեր աճել է համալսարանի ուսանողների թիվը. բակալավրիատի առկա համակարգում 125-ից դարձել է 203, հեռակա համակարգում 167-ից՝ 353 ուսանող, մագիստրատուրայում ուսանողների թիվը հասել է 77-ի: Ավելացել է նաև հետազոտողների թիվը՝ առկա համակարգում՝ 2, հեռակա համակարգում՝ 10:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիմորդների հավաքագրման համար Եվրասիա միջազգային համալսարանի կողմից իրականացվում են մի շարք գործողություններ և կազմակերպվում են տարբեր միջոցառումներ: Այս գործընթացի իրականացման համար համալսարանը համագործակցում է մի շարք միջին մասնագիտական ուսումնական հաստատությանյունների և ավագ դպրոցների հետ: Տվյալ հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում դիմորդների հավաքագրման համար իրականացվում են մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ և տարբեր հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ:

ԵՄՀ-ում սահմանվել են անվճար ուսուցման տեղեր, կրթաթոշակներ և մի շարք զեղչեր ու արտոնություններ՝ դիմորդների ներհոսքն ապահովելու նպատակով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների հավաքագրմանն ուղղված բոլոր գործառույթների համար չկա սահմանված արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմ:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ուսանողների կարիքների վերհանումը ԵՄՀ-ում իրականացվում է տարբեր մարմինների կողմից: Ուսանողները պարբերաբար մասնակցում են Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող հարցումներին, որոնք ուղղված են, ինչպես կրթական ծրագրերին, դասախոսներին և դասապրոցեսին առնչվող խնդիրների բացահայտմանը, այդպես էլ ուսանողներին առնչվող այլ գործընթացների բարելավմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա է սերտ կապ ուսանողների և ամբիոնի վարիչների միջև: Ուսանողները հարցերի կամ խնդիրների դեպքում անմիջապես դիմում են ամբիոնի վարիչներին, որոնք իրենց հերթին հարցի լուծման ընթացք են տալիս: Համալսարանում մեկնարկել է ակադեմիական խորհրդատուների պիլոտային ծրագիր, որի նպատակը ուսանողների կարիքների վերհանումն է և տարբեր հարցերի դեպքում նրանց աջակցելը: Ծրագրի հաջող ավարտի դեպքում պլանավորվում է բոլոր կուրսերում ունենալ ակադեմիական խորհրդատուներ, որոնք ամբիոնի փորձառու դասախոսներն են:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու ամբիոնի նիստերին, որտեղ հնարավորություն են

ունենում բարձրաձայնելու իրենց խնդիրները, այսպես օրինակ քննարկումներ են իրականացվել պրակտիկաների ձևաչափի, գնահատման մեթոդների վերաբերյալ:

Բուհի դիտարկմամբ ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներից է նաև նրանց ներգրավվածությունը Կառավարման խորհրդում: Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հիմնականում խնդիրները լուծվում են ամբիոնների մակարդակում և չեն հասնում Կառավարման խորհուրդ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԵՄՀ-ի ՈԱ կենտրոնում ուսանողները կարող են հանդես գալ՝ որպես որակի գործակալ, որը կրում է կամավոր բնույթ: Համալսարանի ուսանողների միջև բաց առաջարկ է տարածվում կամավորական այս աշխատանքի իրականացման համար: Սա հնարավորություն է տալիս ցանկացած ուսանողի ներգրավված լինել որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող կարիքների վերհանման գործընթացում, ներկայացնել առկա խնդիրները, ինչպես նաև աջակցել կենտրոնին հարցումները ավելի հասանելի դարձնելու բոլոր ուսանողների շրջանում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիքների վերհանման բոլոր մակարդակներում ներգրավված են միջազգային ուսանողներ, որոնք ներկայացված են ինչպես Կառավարման, այնպես էլ Ուսանողական խորհուրդներում: Այսուհանդերձ, փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ այս խորհուրդներում ներգրավված միջազգային ուսանողները դեռևս առաջարկություններով հանդես չեն եկել ուսանողների կրթական կարիքների լուծման և բարելավման նպատակով:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ԵՄՀ-ում ուսանողների կրթական ծրագրերին զուգահեռ, տարբեր ստորաբաժանումների, ինչպես նաև դասախոսների նախաձեռնությամբ հաճախ կազմակերպվում են վարպետաց դասեր, սեմինարներ, խորհրդատվություններ, որոնք ուղղված են ուսանողների հմտությունների ձևավորմանը, մրցունակության և բազմակողմանի զարգացմանը:

ԵՄՀ-ում ուսանողներին խորհրդատվություն տրամադրելու համար ակտիվորեն կիրառվում է Teams հարթակը, որի միջոցով ուսանողներն անմիջական կապի մեջ են լինում դասախոսների հետ, ինչը հեշտացնում է խնդիրների դեպքում դրանց պարզաբանումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները պատրաստակամ են լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների կազմակերպման համար և բաց են ուսանողների առաջարկների դիմաց: Անհասկանալի թեմաների կամ թերացումների դեպքում դասախոսի կողմից իրականացվում է լրացուցիչ դաս բացերը լրացնելու համար:

Բացի այդ, յուրաքանչյուր առարկայի շրջանակներում գոյություն ունեն առարկայական ծրագրերում նախապես ներկայացված խորհրդատվության ժամեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում յուրաքանչյուր ուսումնական տարվա առաջին շաբաթվա ընթացքում հայտարարվում է «Կողմնորոշման օր», որը

նախատեսված է բուհում գործող կարգերի, ուսանողների իրավունքների և պարտականությունների ներկայացման համար։

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ԵՄՀ-ում մշակված է վարչական անձնակազմին և կառավարման մարմիններին դիմելու հստակ կանոնակարգ։ Ենթակառուցվածքների դիտարկման ժամանակ պարզ դարձավ, որ վարչական անձնակազմի սենյակների մուտքի մոտ փակցված են ուսանողների ընդունելության ժամերը։ Ուսումնական հարցերի գրասենյակի շրջանակում գործում է «մեկ պատուհան» ընդունարանը, որը աշխատում է հստակ ժամանակացույցով, որը փակցված է պատուհանի կողքին, և աշխատանքային ժամերին ուսանողներին տրամադրում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, օգնում է լրացնել դիմումներ և օպերատիվ ճշտում ուսանողին հուզող հարցերը։

Համալսարանում ամբիոնի վարիչները պարբերաբար հանդիպումներ են իրականացնում ուսանողների հետ վերջիններիս հուզող խնդիրների և բողոքների լուծման համար։ Հանդիպումները չունեն կանոնակարգված պարբերականություն, դրանք կազմակերպվում են ըստ անհրաժեշտության՝ պայմանավորված ուսանողների առաջարկներով։

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԵՄՀ-ում ուսանողների կարիերային նպաստող գործընթացներում անուղղակիորեն մասնակցում են մի շարք ստորաբաժանումներ, իսկ հիմնական գործառույթն իրականացվում է Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի կողմից։ Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ կենտրոնի կողմից իրականացվում և կազմակերպվում են մի շարք միջոցառումներ, վերապատրաստումներ, սեմինարներ և վարպետաց դասեր, որոնք ուղղված են ուսանողների փափուկ հմտությունների ձևավորմանը և շուկայում մրցունակության բարձրացմանը։ Վերոնշյալ բոլոր միջոցառումների մասին Կարիերայի կենտրոնը նախապես տեղեկացնում է նաև շրջանավարտներին՝ հնարավորություն տալով անվճար մասնակցել դրանց։ Այս գործընթացին օգնում են նաև գործատու-դասախոսները, ովքեր ժամանակ առ ժամանակ իրենք են հանդես գալիս՝ որպես խոսնակներ այս տեսակի միջոցառումների ժամանակ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական գործունեություն ծավալող և միաժամանակ ԵՄՀ-ում սովորող ուսանողները ևս հնարավորություն են ստանում՝ հանդես գալու բանախոսություններով և կիսվելու իրենց պրակտիկ փորձառությամբ։

Բուհի շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող գործընթացներ են դիտարկվում նաև ուսումնական պրակտիկանները, որոնք ուսանող-գործատու շփման առաջնային օղակներից են։

Յուրաքանչյուր տարի կարիերայի կենտրոնի և բուհի այլ բաժինների օգնությամբ կազմակերպվում է «Կարիերայի օր» միջոցառումը, որը թույլ է տալիս ուսանողներին

իրազեկել աշխատաշուկայի արդի պահանջներին՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսանողների մրցունակությունը, ստեղծելու գործատուների հետ անմիջական կապ և հարթակ, որտեղ ուսանողին հասանելի կլինի աշխատաշուկան։

Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ կարիերայի կենտրոնը տվյալներ է հավաքագրում ուսանողների հետագծի վերաբերյալ և ուսումնասիրում ուսանողների մասնագիտական աճի դինամիկան։ Ըստ բուհի ներկայացրած տվյալների՝ 2016-2021թթ. ԵՄՀ շրջանավարտների զբաղվածության ցուցանիշը կազմում է 71%, իսկ մասնագիտական զբաղվածության ցուցանիշը նույն ժամանակահատվածի համար՝ 45%։ Բուհի ներկայացրած տվյալները փաստում են, որ հատկապես բարձր է փոխանակման ծրագրերի մասնակցած ուսանողների մասնագիտական աշխատանքի տեղավորման ցուցանիշը, որը կազմում է 83% (որից 69%՝ մասնագիտական)։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դեռևս խնդրահարույց է միջազգային ուսանողների մասնագիտական հետագծի վերաբերյալ տվյալների պարբերական թարմացման գործընթացը՝ պայմանավորված ուսումնառությունն ավարտելուց հետո նրանց՝ ՀՀ-ից հեռանալով և կոնտակտային տվյալների փոփոխությամբ։ Այս տվյալները դեռևս չեն դրվում կրթական ծրագրերի բարելավումների հիմքում՝ հաշվի առնելով, որ դրանց մասին ամբողջական պատկերացում դեռևս ձևավորված չէ ծրագրերի ղեկավարների շրջանակում։

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում։

ԵՄՀ-ն տարբեր գործողություններով փորձում է աջակցել ուսանողների գիտահետազոտական աշխատանքների մեջ ներգրավվածությանը։ Հետազոտական աշխատանքների խթանման նպատակով մագիստրատուրայի ուսանողներին տրամադրվում է «Եվրասիա» կրթաթոշակ (այն կազմում է ուսման վարձի 10-50%-ը), ինչպես նաև լավագույն հետազոտական աշխատանքը խրախուսվում է «Բանբեր» պարբերականում տպագրությամբ։ 2021-2022 ուսումնական տարվա կտրվածքով ֆարմացիա մասնագիտությամբ ավարտական աշխատանքներից 24-ը թեզիսների տեսքով տպագրության են երաշխավորվել ՀՀ ԳԱԱ կողմից հրատարակվող «Հայաստանի կենսաբանական հանդես» ամսագրում։

Համալսարանում գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ), որը ժամանակ առ ժամանակ իրականացնում է կոնֆերանսներ, գիտաժողովներ, հետազոտություններ, ինչպես նաև իրականացվում են հետազոտությունների մեթոդների վերաբերյալ սեմինարներներ և այլ միջոցառումներ։ Այսպես օրինակ՝ սույն թվականի մարտի 2-ին կազմակերպվել է ուսանողական գիտաժողով՝ «Գլոբալ մարտահրավերները և կայուն զարգացումը» թեմայով, որի ընթացքում համալսարանի տարբեր ֆակուլտետներից ներկայացուցիչներ ելույթ են ունեցել իրենց թեմաներով։

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների պրակտիկան նույնպես կապվում է հետազոտության թեմայի հետ։ Այդուհանդերձ, հետազոտության իրականացման ընթացքը պայմանավորված է գործատու կազմակերպության կողմից ներկայացվող առաջադրանքներով։ Առկա են դեպքեր, երբ պրակտիկ ոլորտից ներգրավված

դասավանդողը նաև ղեկավարում է այն կազմակերպությունը, որտեղ ուսանողը անցում է պրակտիկա, և զուգորդում պրակտիկայի իրականացումը հետազոտության իրականացման հետ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողներին տրվող հետազոտական առաջադրանքների իրականացումը դեռևս ամբողջովին չի փոխկապակցվում բուհի հետազոտոտական ուղղություններին և լիովին չի արտացոլվում կրթական ծրագրերում:

Համալսարանում գործող հետազոտական կենտրոնը իրականացնում է փոքր դրամաշնորհային մրցույթներ, որտեղ խրախուսվում է ուսանողների մասնակցությամբ դիմումների ներկայացումը, որն իր հերթին, նույնպես խթանում է ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում: Այս պահին ծրագրերի թիվը հասնում է 5-ի:

Համալսարանը մագիստրատուրայի կրթական մակարդակում ներդրել է հետազոտական մեթոդների ուսումնասիրությանը նվիրված առարկա, որի շրջանակներում ուսանողները ծանոթացնում են հետազոտության իրականացման մեթոդաբանությանը և գործիքակազմին:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ԵՄՀ-ում որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին գործում է Ուսանողական խորհուրդը: ՈՒԽ-ն կազմվել է մինչ այդ գործող 3 ուսանողական կառույցներից՝ Ուսանողական խորհուրդ, Ուսանողական գիտական ընկերություն և ուսանողների իրավունքների պաշտպան:

Բուհում ՈՒԽ-ն նոր է ձևավորվել և այդ պատճառով դեռևս չունի վերհանած և լուծված խնդիրներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն ուսանողների շրջանում դեռևս ամբողջապես չի ընկալվում՝ որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին: Պարբերաբար, ՈՒԽ նախագահի կողմից կազմակերպվում են հանդիպումներ ուսանողների հետ առցանց և առկա ֆորմատով, որի ընթացքում քննարկվում են համալսարանում առկա խնդիրները: Այդուհանդերձ, փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ ուսանողները պասիվ են ՈՒԽ-ի կողմից կազմակերպվող տվյալ միջոցառումներին ներկայացնելու իրենց կարիքները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ը չունի հստակ սահմանված բյուջե նախատեսված միջոցառումների անցկացման համար, սակայն անհրաժեշտության դեպքում դիմելով համալսարանին՝ ստանում է որոշակի ֆինանսավորում՝ կախված միջոցառման ծավալից և պահանջվող միջոցներից:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց առչվող հարցերով հնարավորություն ունեն դիմելու բոլոր ստորաբաժանումներին, ինչպես նաև Որակի ապահովման կենտրոնին՝ ստանալու աջակցություն ծագած խնդիրները լուծելու համար:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ԵՄՀ ՈԱ կենտրոնի կողմից ուսանողների շրջանում իրականացվում են տարատեսակ հարցումներ, ինչը հանդիսանում է գնահատման հիմնական մեխանիզմը ուսանողներին մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման համար: Ուսանողները կիսամյակի ավարտին հարցումներ են լրացնում կրթական ծրագրերի, դասախոսների, ռեսուրսների վերաբերյալ: Որպես վերհանված խնդիր՝ կարելի է նշել ակադեմիական խորհրդատուների բացակայությունը, որի արդյունքում մեկնարկեց վերջիններիս ներգրավվման պիլոտային ծրագիրը:

Որակի ապահովման կենտրոնը համագործակցում է ուսանողների հետ և նրանց որպես որակի գործակալներ ներգրավում է իր աշխատանքներին՝ աջակցելու հարցումների իրականացմանը, ուսանողների շրջանում ՈԱ գործընթացների մասին տեղեկատվության տարածմանը, քննարկումների կազմակերպմանը և այլն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՈԱ կենտրոնի իրականացված հարցումները չնայած անդրադառնում են ուսումնական գործընթացի կազմակերպման տարբեր փուլերին, սակայն երբեմն չեն արտացոլում խորհրդատվական ծառայությունների արդյունավետության գնահատումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ երբեմն ուսանողները նախընտրում են խնդիրները քննարկել դասավանդող դասախոսների կամ ամբիոնների վարիչների հետ, քան նշել դրանց մասին հարցումներում: Հարցումների՝ որպես ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման մեխանիզմի արդյունավետության վերլուծություն դեռևս բուհում տեղի չի ունեցել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է ԵՄՀ շարունակական ջանքերը ուսանողների համար ստեղծված միջավայրի, մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով: Կարևոր հանգամանք է, որ բուհում շարունակաբար բերելավվում են դիմորդների հավաքագրման մեխանիզմները, ինչը նպաստում է պոտենցիալ ուսանողների թվի ավելացմանը, ինչպես նաև կանոնակարգված են ուսանողների ընդունելության մեխանիզմները՝ ապահովելով թափանցիկություն և հասանելիություն բոլոր դիմորդների համար: Փորձագիտական խումբը կարևորում է, որ բուհը հաշվի առնի միջազգային ուսանողների ընդունելության համար լեզվաիմացության չափանիշների հստակեցումը, ինչը հետագայում հնարավորություն կտա խուսափել լեզվի իմացության հետևանքով ուսանողի կողմից առարկայի թյուրըմբռնումներից և դյուրին կդարձնի վերջինիս ուսումնառությունը ԵՄՀ-ում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված բուհի որդեգրած քաղաքականությունը, ինչը հնարավորություն է տալիս ուսանողների շրջանում իրականացվող հարցումների, քննարկումների, ամբիոն-ուսանող և դասախոս-ուսանող սերտ կապերի միջոցով բացահայտել առկա խնդիրները, առաջարկել լուծումներ: Փորձագիտական խումբը դրական է համարում համալսարանի

կողմից իրականացվող վարպետաց դասերի, սեմինարների և խորհրդատվությունների կազմակերպումը, որոնք ուղղված են արդյունավետ ուսումնառության իրականացմանը: Ինչպես նաև դրական հանգամանք է տարբեր հարթակների միջոցով ուսանողներին աջակցելու և խորհրդատվություն տալու պրոֆեսորադասախոսական անձնակազմի պատրաստակամությունը, որը դարձել է բուհի մշակույթի անբաժան մաս:

Փորձագիտական խումբը կարևորում է այն փաստը, որ բուհում սահմանված են ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ հնարավորություն տալով ուսանողներին իրենց խնդիրները վերհանելու և համապատասխան աջակցություն ստանալու ինչպես ռեկտորից, այնպես էլ վարչական բոլոր օղակներից:

Բուհում Կարիերայի կենտրոնի գործունեությամբ ամրապնդվում է կապը գործատուների հետ՝ հնարավորություն տալով գործատուների կարիքների վերաբերյալ իրազեկման և ուսանողների մասնագիտական գիտելիքների նպատակաուղղված զարգացման: Կարևոր հանգամանք է Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի կողմից շրջանավարտների բանկի ստեղծումը, որը հնարավորություն է ընձեռում հետևելու ուսանողների մասնագիտական հետագծին ԵՄՀ-ում ուսումնառությունն ավարտելուց հետո: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը դիտարկի այս տվյալների կիրառումը նաև ամբիոնների կողմից, ինչը հնարավորություն կտա կրթական ծրագրերի մշտադիտարկումն ավելի համապարփակ ու ընդգրկուն դարձնել: ԵՄՀ-ի կողմից միջազգային ուսանողների հետագծի վերաբերյալ թարմացումների իրականացումը կնպաստի նաև պատկերացում ձևավորելուն նրանց մասնագիտական առաջընթացի վերաբերյալ և հիմք կհանդիսանա հետագայում տվյալ երկրներից ԵՄՀ-ում իրենց կրթությունը ստացող ուսանողների ուսումնառության արդյունավետության բարձրացման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է հետազոտական գործընթացում ուսանողների ներգրավվածության ավելացումը, ուսանողների խրախուսումը հետազոտական աշխատանքների իրականացման գործում: Փորձագիտական խումբը կարևոր հանգամանք է համարում նաև, որ այս աշխատանքները, կազմակերվող միջոցառումները ևս փոխկապակցվեն բուհի սահմանած հետազոտական ուղղություններին, հետազոտական բնույթի առաջադրանքներն արտացոլվեն կրթական ծրագրերում՝ հնարավորություն ընձեռելով ապահովել ԵՄՀ-ի կողմից նախանշված ցուցանիշները:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը հնարավորություններ է ստեղծել ուսանողների իրավունքների պաշտպանության համար, և այս համատեքստում շեշտադրում է նաև Ուսանողական խորհրդի դերի կարևորումը ոչ միայն տարաբնույթ միջոցառումների և հանդիպումների կազմակերպման հարցում, այլ իր առաջնային գործառույթով՝ որպես իրավունքների պաշտպանության մարմին հանդես գալու ուղղությամբ:

Կարևոր է, որ բուհում ներդրված են մեխանիզմներ ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման վերաբերյալ, իսկ հարցումների իրականացման արդյունավետության գնահատումը առկա մեխանիզմների կատարելագործման լրացուցիչ հնարավորություն կընձեռի:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում ուսանողների հավաքագրումն ու ընդունելությունն իրականացվում է հստակ ընթացակարգերով, առկա են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, լրացուցիչ պարապմունքների հնարավորություններ և կարիերային նպաստող ծառայություններ, կանոնակարգված են վարչական անձնակազմին դիմելու գործընթացները, ընդլայնվել են ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու ուղղությունները, գործում են ուսանողներին մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Եվրասիա միջազգային համալսարանում իրականացվող կրթական ծրագրերն ապահովելու նպատակով բուհում գործում են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր: Պրոֆեսորադասախոսական կազմի, վարչական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրումն ու ընտրությունը կանոնակարգվում է՝ համաձայն «Պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների ձևավորման և բեռնվածության հաշվարկի կարգի», որը սահմանում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական հաստիքների ձևավորման սկզբունքներն ու պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության հաշվարկի նորմերը, «Վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության կարգի», որով կարգավորվում են համապատասխանաբար վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության կարգը և պայմանները, ինչպես նաև «Եվրասիա միջազգային համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության կարգի»:

Համաձայն «Պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների ձևավորման և բեռնվածության հաշվարկի կարգի» 2.7-րդ կետի՝ պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնները համալրվում են մրցութային կարգով: Պրոֆեսորադասախոսական կազմի տարբեր տարակարգերի ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպական գործունեության առանձնահատկությունները, մրցութային և պաշտոնի տեղակալման

առանձնահատկությունները սահմանվում են ԵՄՀ գիտական խորհրդի կողմից հաստատված կանոնակարգով և պաշտոնի նկարագրերով։

Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրելու նպատակով ՄՈՒՀ-ը բարձրացրել է դասախոսական կազմի աշխատավարձային ֆոնդը։ Սկսած 2019-2020 ուսումնական տարվանից՝ տարբերակված աշխատավարձ է սահմանվել հիմնական հաստիքային դասախոսների, գիտական աստիճան ունեցողների և անգլերենով դասավանդողների համար։ Տարբերակում է տրվել նաև տեղեկատվական համակարգերի և Ֆարմացիայի ոլորտին առնչվող դասավանդողների համար՝ հաշվի առնելով համապատասխան ոլորտների աշխատաշուկայում գործող մոտեցումները։

ՊԴ կազմի ընտրության և հավաքագրման գործընթացը ՄՈՒՀ-ի դիտարկմամբ առանցքայիններից է, ուստի՝ այն պարբերաբար անցնում է ՊԻԳԲ շրջափուլով։ Պրոֆեսորադասախոսական կազմի, վարչական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրման արդյունավետության բարձրացման տեսանկյունից հարկ է նշել, որ նախորդ հավատարմագրումից ի վեր ՄՌԿ բաժնի կողմից վերանայվել են պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների նկարագրերը, ավելացվել են մասնագիտական պահանջներ, որոնք հիմք են հանդիսանում թափուր հաստիքների հայտարարության համար։ ՄՈՒՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմը, ինչպես նաև վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցներն աշխատանքի են ընդունվում պայմանագրային հիմունքներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի մրցութային կարգով ընտրությունը։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների, ՊԴ կազմի և այլ թափուր պաշտոնների մրցույթների կազմակերպման, անցկացման և աշխատանքային պայմանագրերի կնքման գործընթացների համար պատասխանատու է մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը։ Պրոֆեսորադասախոսական կազմի, վարչական և ուսումնաօժանդակ կազմի թափուր պաշտոնների համալրման նպատակով հրապարակվում են համապատասխան հայտարարություններ, ինչպես սոցիալական ցանցերում ԵՄՀ ունեցած հաշիվների միջոցով, այնպես էլ համապատասխան կայքէջերում։

Այս համատեքստում փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դասախոսներին ներկայացվող պահանջները հայտարարություններում ներկայացված են խիստ ընդհանրական ձևով՝ հստակորեն չնշելով ըստ մասնագիտությունների առանձնացված պահանջները։

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ։

2018թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվությունների հիման վրա՝ ՄՈՒՀ-ը վերանայել է պաշտոնի անձնագրերը՝ հստակեցնելով պրոֆեսորին, դոցենտին, ասիստենտին և դասախոսին ներկայացվող

ընդհանուր պահանջները: Այսպես՝ ԵՄՀ դասախոսի պաշտոնի անձնագրի համաձայն՝ պաշտոնի որակավորման նվազագույն պահանջներն են.

- Կրթություն (մասնագիտական կրթության տարիներին ցուցաբերած բարձր առաջադիմություն, նվազագույնը մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի որակավորում դասավանդվող առարկաների շրջանակներում),
- Աշխատանքային փորձ (մասնագիտական աշխատանքային փորձը ցանկալի է այն ոլորտում, որի գծով դասախոսը պետք է դասավանդի և վարի դասընթացներ):
- Հատուկ գիտելիքներ (համակարգչային գրագիտություն, օտար լեզու/ներ/ի իմացություն, ուսուցման համագործակցային և նորագույն մեթոդների իմացություն)
- Հմտություններ և կարողություններ (մանկավարժական աշխատանքի, ուսուցման համագործակցային և նորագույն մեթոդների կիրառման հմտություններ, դասընթացի մշակման, կառավարման կարողություններ, հետազոտական կարողություններ, ժամանակի արդյունավետ կառավարման, գրավոր և բանավոր գերազանց հաղորդակցման, ինքնուրույն և թիմում աշխատելու հմտություններ):

Պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջներն ամրագրվել են նաև ՄԿԾ-ներում՝ «Դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները» բաժնում: Դասախոսներին ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանվում են ԵՄՀ ՊԴ կազմի պաշտոնի նկարագրերով:

Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումների առանձնահատկություններով պայմանավորված՝ ՄԿԾ-ներում սահմանված են ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ գիտամանկավարժական կադրերին ներկայացվող պահանջներ՝ մասնագիտական, մանկավարժական և գիտահետազոտական: Այս համատեքստում փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայացված պահանջները չափելի չեն, բավական ընդհանրական են, սահմանված չեն հիշյալ պահանջների նվազագույն շեմերը, որոնք հիմք կհանդիսանան համապատասխան կադրերի ներգրավման համար: Օրինակ՝ ներկայացված չեն տվյալներ, թե տվյալ մասնագիտության գծով ներկայացուցիչը քանի տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ պետք է ունենա, ինչպես նաև տվյալ կոնկրետ մասնագիտացման ոլորտում անհրաժեշտ է արդյոք աշխատանքային փորձառություն, արդյոք հավակնորդը պետք է տվյալ մասնագիտացման ոլորտում ունենա գիտական հրապարակումներ, թե ոչ և այլն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄԿԾ-ներում՝ «Դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները» բաժնում պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջներն ամրագրված են, այնուամենայնիվ, փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ առանձին դեպքերում գործնականում երբեմն գրանցվում են նշված պահանջներից շեղումներ (օրինակ՝ «Ֆարմացիա» մասնագիտության ՄԿԾ շրջանակներում առկա են դասավանդող դասախոսներ, օրինակ՝ բիոքիմիայի, ֆարմակոլոգիայի ուղղությամբ, որոնց ուղղությամբ դասախոսի նեղ մասնագիտական կրթությունը տարբերվում է):

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատումն իրականացվում է համաձայն 01.03.2012թ. ԳԽ կողմից ընդունված (վերանայվել է 30.03.2021թ.) «Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգի»: Դասախոսական կազմի գործունեության գնահատման կանոնակարգը սահմանում է ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, դասախոսի աշխատանքի վարձատրման և հավելավճարի կիրառման կարգը: Գնահատումը կատարվում է նախանշված աշխատանքային գործունեության, աշխատանքային պլանների և դրանց կատարման փաստացի արդյունքների համապատասխանության հիման վրա, ինչպես նաև ինքնագնահատման, դասալսումների և ուսանողների կողմից լրացված գնահատման թերթիկների արդյունքներով, ընդ որում՝ ԵՄՀ-ում ներդրված է դասախոսների բազմագործոն գնահատման համակարգ, և հաշվարկվում է կշռված միջին միավոր: Տարեկան կտրվածքով դասախոսների գնահատման արդյունքներն ամփոփվում են երեք ուղղություններով՝ ուսումնամեթոդական աշխատանք (70%), գիտական գործունեություն (20%), հասարակական (արտալսարանային) գործունեություն (10%): Ուսումնամեթոդական աշխատանքի համատեքստում դասախոսը ինքնագնահատում է իրականացնում՝ ներկայացնելով փաստեր (40%), գնահատվում է ամբիոնի վարիչի (35%) և ուսանողների կողմից (25%):

2018թ. ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո վերանայվել է դասախոսների գնահատման գործիքակազմը: Մասնավորապես՝ 2019-2020 ուսումնական տարում ՈԱ կենտրոնի, ՄՌԿ բաժնի և Հետազոտական կենտրոնի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում վերանայվել է դասախոսների ուսումնամեթոդական և գիտական գործունեության ինքնագնահատման գործիքակազմը՝ փոխարինվելով փաստերի հավաքագրմամբ: Ամբիոնի վարիչի գնահատման ռուբրիկում ևս իրականացվել են փոփոխություններ՝ կրկին առավելապես բացառելով սուբյեկտիվությունը և ավելորդ հարցադրումները: Ընդհանուր առմամբ, ամբիոնի վարիչը ուսումնամեթոդական տեսանկյունից դասախոսներին գնահատում է՝ հիմքում ունենալով դասախոսների ընթացիկ դասալսումները, իսկ հասարակական գործունեությունը՝ այնպիսի հիմքերի առկայությամբ, ինչպիսիք են ամբիոնային նիստերի արձանագրությունները, ԵՄՀ կառավարման մարմիններում դասախոսների ներգրավվածության հիմքերը և այլն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2019-2020 ուսումնական տարվանից սկսած գնահատումն ամբողջությամբ իրականացվել է բարելավված գործիքակազմով:

Ուսանողների կողմից դասախոսների գնահատման ձևաչափը հանդիսանում է դասախոսի կողմից ստեղծած դասընթացը և կրթական միջավայրը ուսանողների տեսանկյունից վերլուծելու և գնահատելու միջոց, ինչպես նաև դասախոսի կրթական գործունեության բարելավմանը խոչընդոտող գործոնները բացահայտելու հնարավորություն:

Գնահատումն իրականացվում է դասախոսի և կրթական միջավայրի, ինչպես նաև դասընթացի գնահատման գործիքների կիրառման միջոցով:

Գնահատումը ներառում է չափանիշներ, որոնք հնարավորինս վերհանում են դասախոսի մասնագիտական պատրաստվածության ուսանողական ընկալումը: Այդ չափանիշներն են, օրինակ դասախոսի կողմից առարկայական ծրագրի ներկայացումն ու իրականացումը, դասախոսի կողմից կիրառվող գնահատման մեխանիզմները, մատուցվող նյութի բովանդակությունը,դասավանդման հմտությունը և այլն:

Գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ ամփոփիչ քննություններից հետո: Գնահատման արդյունքները վերլուծության են ենթարկվում և պահպանվում որակի ապահովման կենտրոնում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման անհատական արդյունքները հրապարակվում են տվյալ դասախոսի հետ անհատական զրույցի շրջանակներում, որին մասնակցում են հիմնական վարչական աշխատակիցները, սակայն գնահատման տվյալները ընդհանրացված կարգով կարող են դառնալ խմբային քննարկման առարկա՝ նպատակ ունենալով հզորացնելու դասախոսների մասնագիտական կարողությունները:

Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ ԵՄՀ-ում «Ebuh» համակարգի ներդրմամբ նախատեսվում է նաև գործարկել պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների կողմից իրականացված հետազոտական աշխատանքների միասնական տեղեկատվական միասնական բազա, որով փորձ կարվի հավաքագրել դասախոսների գնահատման տվյալները:

2018թ. ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո վերանայվել է նաև «Դասալսումների իրականացման և արդյունքների քննարկման կարգը»: Ավելացվել են դրույթներ՝ պլանավորված և չպլանավորված, առցանց և դեմ առ դեմ իրականացվող դասալսումների կազմակերպման վերաբերյալ, վերանայվել է գնահատման ձևաչափը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ սույն կարգի ներդրումն ապահովվել է 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից, որին համապատասխան իրականացվել են պլանավորված և չպլանավորված դասալսումներ, անհատական արդյունքները քննարկվում են դասախոսի հետ՝ բարելավման ուղղություններ դուրս բերելու նպատակով, իսկ ընդհանրական տվյալները՝ նաև ամբիոնային նիստերի ընթացքում:

Պլանավորված դասալսումները կազմակերպվում են ամբիոնների կողմից՝ ըստ կիսամյակի սկզբում ամբիոնային նիստում հաստատված ժամանակացույցի: Անհրաժեշտության դեպքում Որակի ապահովման կենտրոնի պատասխանատուն կարող է կատարել համապատասխան դասալսումներ՝ հիմք ընդունելով ուսանողների կողմից դասախոսների գործունեության գնահատման արդյունքները, ամբիոնների կողմից կատարված դասալսումների արդյունքները: ԵՄՀ-ի ռեկտորի, պրոռեկտորների, Որակի ապահովման կենտրոնի ղեկավարի, ամբիոնի վարիչի կամ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավարի նախաձեռնությամբ կարող են կազմակերպվել դասալսումներ հաստատված ժամանակացույցից դուրս՝ առանց դասախոսին նախապես իրազեկելու:

Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին որ «Դասալսումների իրականացման և արդյունքների քննարկման կարգի» հավելված 1-ում ներկայացված դասալսումների գնահատման ձևաչափի շրջանակներում հստակեցված չեն դասալսման մասնակիցների ստրագրությունների, դասալսվող դասավանդողի՝ դասալսման շրջանակներում դասալսում իրականացնողի կողմից կատարված դիտարկումների վերաբերյալ նկատառումներ անելու համար համապատասխան բաժինները:

ԵՄՀ դասախոսների գնահատման համակարգը հիմնված է դասախոսի կատարողականի վրա: Գնահատման արդյուքների ամփոփումն ու վերլուծությունն իրականացնելուց հետո բուհի ռեկտորն այդ արդյունքների հիման վրա ընդունում է վարչական որոշումներ՝ համաձայն որոնց համալսարանը կարող է տրամադրել անվանական խրախուսական դրամական պարգևներ, շարունակել համագործակցությունը՝ առանց պայմանագրային փոփոխությունների կամ վերանայելով վճարման չափը (հնարավոր բարձրացում կամ նվազում), ամբիոնին ներկայացնել դասախոսի վերապատրաստման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկություններ կամ պարզապես դադարեցնել համագործակցությունը դասախոսի հետ:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ԵՄՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորումների բարձրացմանն ուղղված կազմի 01.03.2012թ. ընդունված «Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման կարգը», որը միտված է դասախոսների գիտելիքների, հմտությունների, կարողությունների և մոտեցումների զարգացմանը՝ նպաստելով ուսանողների ուսուցման և ուսումնառության արդյունավետության շարունակական բարելավմանը: Համաձայն ինքնավերլուծության՝ այս գործընթացն անցել է ՊԻԳԲ շրջափուլով՝ վերջինս ներդրվել է 2012-ին, վերանայվել 2015թ.-ին և այժմ նույնպես ՈԱ կենտրոնի կողմից իրականացված արդյունավետության գնահատման հիման վրա՝ գտնվում է բարելավման հերթական շրջափուլում: Հիշատակված կարգի համաձայն՝ դասախոսների վերապատրաստման հիմքում ընկած է ԵՄՀ որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների գնահատումը:

ԵՄՀ-ում իրականացվում են մասնագիտական, մեթոդական, հետազոտական, վարչարարական վերապատրաստումներ: Դասախոսների վերապատրաստումն իրականացվում է խորհրդատվության, մենթորության, փորձի փոխանակման, էլեկտրոնային դասընթացների, գործընկերների հետ անհատական հանդիպումների, կլոր-սեղան քննարկումների, աշխատաժողովների, համաժողովների, սեմինարների, թրեյնինգների միջոցով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մեթոդական վերապատրաստումներն իրականացվում են ՄՌԿ բաժնի համակարգմամբ, իսկ

մասնագիտական վերապատրաստումները՝ ամբիոնների և դասախոսների կողմից՝ կիրառելով ներքին և համագործակցող կազմակերպությունների ներուժը: Սկսած 2018 թ.-ից մեթոդական վերապատրաստումները կազմակերպվել են արտագնա կամ առցանց, քանի որ նախկինում՝ ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվող սեմինարներին և թրեյնինգներին ոչ բոլոր դասախոսների մասնակցությունն էր ստացվում ապահովել: Կազմակերպվում են նաև արտագնա և առցանց վերապատրաստումներ, որոնք միտված են կրթական և առարկայական ծրագրերի զարգացմանը, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների կիրառությանը, խառը (blended) դասընթացների մշակմանը, հետազոտության որակի բարելավմանը, Microsoft Teams գործիքակազմի գործիքակազմին և այլ թիրախային թեմաներին: Համապատասխան վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվում նաև աշխատակիցների անգլերենի մակարդակը բարձրացնելու նպատակով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԵՄՀ մասնագիտական, մեթոդական և հետազոտական վերապատրաստումների կարևոր գործիքներից է նաև ԵՄ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում դասախոսների փոխանակման հնարավորությունը: 2022-2023 ուսումնական տարվա դասախոսական կազմի 83 անդամներից 22-ը (26%) ԵՄՀ միջազգային ծրագրերի շրջանակներում տարբեր ժամանակահատվածներում մասնակցել են միջազգային փոխանակումների՝ ԵՄՀ միջազգային պայմանագրերի հիման վրա: ԵՄՀ-ն խրախուսում է նաև այլ կրթագիտական և մասնագիտական կառույցների կողմից իրականացվող մասնագիտական վերապատրաստումների ծրագրերին ԵՄՀ դասախոսների մասնակցությունը (Էրազմուս+ ազգային գրասենյակ, ակադեմիական փոխճանաչման կենտրոն և այլն):

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասավանդման հմտությունները կատարելագործելու նպատակով ՄՈՒՀ-ում պարբերաբար իրականացվում են համապատասխան սեմինարներ, օրինակ՝ ԵՄՀ-ի հետազոտական կենտրոնը Լեզուների, հաղորդակցման և մանկավարժության ամբիոնի հետ համատեղ կազմակերպել է գիտագործնական սեմինար՝ «Փոխանցելի կոմպետենցիաները ՀՀ լեզվական կրթության մեջ» թեմայով:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

2018թ. ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ի ՊԴ կազմը ենթարկվել է զգալի փոփոխությունների: Բուհը 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դրությամբ ունեցել է 68 դասախոս (այդ թվում՝ 4 գիտությունների դոկտոր/ պրոֆեսոր, 31 գիտությունների թեկնածու/ դոցենտ), մինչդեռ 2018թ. հավատարմագրման ժամանակ բուհի ընդհանուր դասախոսների թիվը 43-ն էր, ինչը նշանակում է, որ հաշվետու 2 տարվա ընթացքում դասախոսների թիվն ավելացել է 58%-ով: Դասախոսական կազմի 70%-ը (48 հոգի) հիմնական հաստիքային աշխատողներներ են (հավատարմագրման ժամանակաշրջանի ընթացքում հիմնական հաստիքային դասախոսները կազմել են ընդհանուր համակազմի 54%-ը):

2022-23 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դրությամբ ԵՄՀ-ն ունի 83 դասախոս (այդ թվում՝ 5 գիտությունների դոկտոր/ պրոֆեսոր, 45 գիտությունների թեկնածու/ դոցենտ), 2017-2018 ուսումնական տարվա բուհի ընդհանուր դասախոսների թիվը 43-ն էր (այդ թվում՝ 2 գիտությունների դոկտոր/ պրոֆեսոր, 22 գիտությունների թեկնածու, որից 9-ը դոցենտ)։

Վերջին տարիների ընթացքում համալսարանին հաջողվել է պահպանել իր կադրային ներուժը՝ 2022-2023 ուստարում պրոֆեսորադասախոսական կազմի շուրջ 47%-ը (39 հոգի)՝ ԵՄՀ-ում աշխատում է արդեն ավելի քան 3 տարի, իսկ շուրջ 23%-ը (19-ը)՝ ավելի քան 5 տարի։ Պրոֆեսորադասախոսական կազմի 55%-ը (46 հոգի) ԵՄՀ-ում աշխատում են 1-3 տարի, որից 61%-ը (28 հոգի) հիմնական հաստիքային աշխատողներ են, 46%-ը (21 հոգի)՝ գիտությունների թեկնածուներ են: Կադրերի հոսունության գործակիցը (աշխատանքի ընդունվածների և աշխատանքից ազատվածների հարաբերությունը) համալսարանում վերջին 3 տարիների ընթացքում կազմել է համապատասխանաբար 2.0, 1.8 և 2.3:

2022-2023 ուսումնական տարում ԵՄՀ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի 28%-ը (23 հոգի) եղել է մինչև 40 տարեկան։

Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ ՄՌԿ բաժնի կողմից վարվում է կադրերի բանկ, որը հնարավորություն է տալիս կարիքի առաջացման դեպքում ուսումնական գործընթացին ներգրավվել համապատասխան մասնագետների՝ երաշխավորելով դասավանդման գործընթացի անխափան բնույթը:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծության, տրված փաստաթղթերի և փորձագիտական այցի շրջանակներում հայտնի դարձած տեղեկությունները հիմք են տալիս արձանագրելու, որ գիտական որակավորման բարձրացման խթանման նպատակով համալսարանում սահմանվում է աշխատավարձերի տարբերակում՝ կախված գիտական աստիճանից և կոչումից, ընդ որում՝ միջազգային փոխանակումներին մասնակցության համար նույնպես նախապատվությունը տրվում է գիտական աստիճան ունեցող դասախոսներին։ Դասախոսական կազմի գիտական գործունեությունը և վերապատրաստումների մասնակցությունը կարևորվում է նաև դասախոսների տարեկան գնահատման շրջանակներում՝ տրամադրելով համապատասխան միավորներ և պարգևավճարներ:

Այս առնչությամբ հարկ է նշել, որ հիմք ընդունելով ԵՄՀ ռեկտորի N1-01/21Ն հրամանը (Գիտահետազոտական աշխ. խրախուսման նպատակով պարգևատրման սահմանաչափերի հաստատում)՝ 2021 թվականից համալսարանում սահմանվել են գիտահետազոտական աշխատանքների խրախուսման նպատակով պարգևատրման սահմանաչափեր՝ խրախուսելով որպես ԵՄՀ դասախոս Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում, ինչպես նաև Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ճանաչված ամսագրերում հոդվածի հրապարակումը։

ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովմանն է միտված նաև այն, որ դասախոսական կազմի որակավորումների

բարձրացման նպատակով հիմնադիրների խորհրդի որոշման համաձայն՝ գիտական աստիճան չունեցող դասախոսների համար ԵՄՀ-ն տալիս է անվճար կամ մասնակի վճարումով ուսումը ասպիրանտուրայում շարունակելու հնարավորություն:

Համալսարանն աջակցում է սկսնակ դասավանդողների աճին և կատարելագործմանը՝ անհատական և կոլեկտիվ մենթորության միջոցով: Սկսնակ դասախոսների մենթորությունը սովորաբար իրականացնում են ամբիոնների վարիչները, ամբիոնի փորձառու դասախոսները, վերջիններիս կողմից կազմակերպվում են վարպետության դասեր, գիտագործնական սեմինարներ և փորձի փոխանակման այլ միջոցառումներ: Ոչ ֆորմալ մենթորության շրջանակներում սկսնակ դասավանդողներին աջակցություն է տրամադրում դասավանդման մեթոդների լավարկման, առարկայական ծրագրերի մշակման, հետազոտական մեթոդների յուրացման և այլ թիրախային ուղղություններով:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

2018թ. ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո ԵՄՀ վարչական և ուսումնաօժանդակ կազմն ընդլայնվել է: Այսպես. 2022-2023 ուսումնական տարվա դրությամբ ԵՄՀ վարչական և ուսումնաօժանդակ կազմը ներառում է 43 հաստիք (2017-2018 ուսումնական տարվա դրությամբ ադմինիստրատիվ հաստիքների թիվը եղել է 36):

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների գործառույթները սահմանվում են համապատասխան պաշտոնի նկարագրերով, որոնք նույնպես վերանայվել և համապատասխանեցվել են ռազմավարական նպատակներին:

ՄՈՒՀ-ի կողմից պարբերաբար կազմակերպվում են վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի վերապատրաստումներ, որոնք միտված են վերջիններիս գործունեության որակի բարձրացմանը (թվային հմտությունների զարգացման, բիզնես/ պաշտոնական նամակագրության, անգլերենի բարելավման և այլ ռազմավարությամբ թիրախային համարվող ընթացիկ վերապատրաստումներ):

Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ ամբիոնի վարիչներն ունեն համապատասխան համակարգողներ, որոնք օժանդակում են աշխատանքների կատարմանը: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կառուցվածքային առանձին բաժինների աշխատակիցների համահնչեցում տեղի չի ունեցել, քանզի յուրաքանչյուր բաժնում տվյալ հաստիքը, որն իրականացնում է այդ գործառույթը, տարբեր անվանումներ ունի (համակարգող, օգնական, ծրագրի պատասխանատու):

Դատողություններ: Փորձագիտական խումբն արձանագրում է, որ ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ՄՈՒՀ-ին ունենալ անհրաժեշտ դասախոսական կազմ կրթական ծրագրերի իրականացման համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը պետք է հետևողական լինի ինչպես ՄԿԾ-նում դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջների հստակ ձևակերպման, այնպես էլ գործնականում տվյալ պահանջների պահպանում ապահովելու առումով: Փորձագիտական խումբը կարևորում է նաև հայտարարություններում դասախոսներին ներկայացվող պահանջների մանրամասնումը՝ դասախոսների համալրման գործընթացն ավելի թափանցիկ և հասանելի դարձնելու նպատակով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵՄՀ հանձնառությունը՝ ուսանողների կողմից գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերումն ապահովելու կապակցությամբ: Այս առումով ողջունելի է ՄՈՒՀ-ի որդեգրած քաղաքականությունը՝ դասախոսների ընտրության հարցում կարևորել ոչ միայն համապատասխան ոլորտի գիտական աստիճանի/ կոչման առկայությունը, այլև դասընթացի կապը տվյալ դասախոսի գործնական փորձառության հետ:

Փորձագիտական խումբը հատկանշական է համարում բուհի մոտեցումը ՊԴ կազմը ոլորտային գործատու դասավանդողներով համալրելու ուղղությամբ, ինչը յուրաքանչյուր կրթական ծրագրով ուսանողների տեսական գիտելիքները գործնական հմտություններով հարստացնելու լրացուցիչ հնարավորություն է:

Փորձագիտական խումբը դրական է համարում է ՄՈՒՀ-ի մոտեցումները դասախոսների գնահատման գործիքակազմի վերանայման ուղղությամբ, քանի որ ներդրված բազմագործոն գործիքակազմը հնարավորություն է ընձեռում գնահատման գործընթացում երաշխավորել օբյեկտիվությունը, հավաստիությունը, թափանցիկությունը և համակարգվածությունը:

Փորձագիտական խումբը ողջունում է ԵՄՀ-ում «Ebuh» համակարգի ներդրման գործընթացները, որով նախատեսվում է նաև գործարկել պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների կողմից իրականացված հետազոտական աշխատանքների միասնական տեղեկատվական միասնական բազան, ինչը կնպաստի դասախոսների կողմից ընթացիկ հետազոտությունների, վերապատրաստումների հավաքագրման ու գնահատման գործընթացի օպտիմալացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ դասալսումների գնահատման ձևաչափում դասալսվող դասախոսների դիտարկումների ներառումը հնարավորություն կընձեռի գործընթացը կազմակերպելիս հաշվի առնել նաև դասալսվող դասախոսի նկատառումները հետագա բարելավումների պլանավորումն առավել արդյունավետ դարձնելու տեսանկյունից:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ում գործող ՊԴ կազմի պարբերական վերապատրաստման ընթացակարգերը հնարավորություն են ընձեռում դասավանդման որակի բարելավման նպատակով կազմակերպել վերապատրաստումներ՝ ՊԴ կազմի գնահատումներից բխող կարիքների հիման վրա: Այնուամենայնիվ, իրականացվող վերապատրաստումների պլանավորման սկզբունքները հստակեցման կարիք ունեն՝ նպաստելու ՊԴ կազմի գործունեության արդյունավետության բարձրացմանը և մասնագիտական ու մանկավարժական որակների շարունակական կատարելագործմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում 2018թ. ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո ԵՄՀ-ում ՊԴ կազմի կայունության ապահովման նպատակով կազմի երիտասարդացման, գիտագործնական հմտություն ունեցող կադրերի ներգրավման քաղաքականությունը, ինչը հնարավորություն է ընձեռում անխոչընդոտ իրականացնել համապատասխան կրթական ծրագրերը՝ նպաստելով դրանցով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Դասախոսական կազմի որակավորումների բարձրացմանը, կայունության ապահովմանը, ինչպես նաև երիտասարդացմանն է նպատակուղղված ԵՄՀ նախաձեռնությունը, որով ԵՄՀ-ն գիտական աստիճան չունեցող դասախոսների համար հնարավորություն է տալիս անվճար կամ մասնակի վճարումով ուսումը շարունակել ասպիրանտուրայում: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵՄՀ-ն խրախուսվում է նաև ասպիրանտների և երիտասարդ հետազոտողների ներգրավումը դասախոսական կազմում (ընդհանուր ՊԴ կազմի 9%-ը (7 հոգի) ասպիրանտ/ հայցորդ են)՝ նպաստելու դասախոսական կազմի կայունության ամրապնդմանը և անխոչընդոտ սերդնափոխությանը:

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ սկսնակ դասավանդողների աճին և կատարելագործմանն նպատակով համալսարանն իրականացնում է անհատական և կոլեկտիվ մենթորություն, ինչը ևս դրական քայլ է ՊԴ կազմի երիտասարդացման և կայունության երաշխավորման համատեքստում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ուսանողների շրջանակներում հարցումների միջոցով վերջիններիս պարբերաբար առաջարկվում է գնահատել իրենց ամբիոնների, ինչպես նաև վարչական մյուս օղակների աշխատանքը: Այս գործընթացը թույլ է տալիս ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքում դուրս բերել ցածր գնահատված բաժինների և ամբիոնների խնդիրները, վերլուծել պատճառները և դրանց բարելավելու նպատակով համապատասխան միջոցառումներ իրականացնել:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը գործուն քայլեր է ձեռնարկել ԵՄՀ-ում գործող կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականության և ընթացակարգերի սահմանման հարցում, որոշակիորեն հստակեցրել է ՊԴ կազմի համար մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, վերանայել է ՊԴ կազմի գնահատման կառուցակարգերը, բարելավել է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն բավարարում է 5-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1.ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ԵՄՀ 2019-2025թթ. Ռազմավարական ծրագրի համաձայն՝ ռազմավարական նպատակներից է Բուհի զարգացմանն ուղղված կիրառական և գիտական հետազոտությունների խթանումը, որը կապակցված է ռազմավարական առաջնահերթություններից ուսուցման, աճի և զարգացման հետ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհում ստեղծվել է «Հետազոտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը, որն առանձնացվել է միջազգային կապերի կենտրոնից: Ավելին, բուհում մշակվել է ԵՄՀ Հետազոտությունների և զարգացման ռազմավարական ծրագիր: Բուհը դիրքավորում է իրեն որպես առավելապես դասավանդող բուհ, սակայն, չունենալով մեծ հավակնություններ հետազոտության ոլորտում, այնուամենայնիվ կարևորում է հետազոտությունը: Սա վկայում է այն մասին, որ բուհը փորձում է ամրապնդել կապը հետազոտության և կրթության միջև:

Բուհը, հիմք ընդունելով ՄԱԿ-ի 2030 Կայուն զարգացման օրակարգի 9 նպատակները, նախատեսում է տրամադրել համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսներ նշված ԿԶ նպատակներով հետազոտությունների իրակացման համար: Կարևորելով հետազոտությունը բուհում՝ գիտական աշխատանքների համակարգումն անցել է Ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի համակարգման ներքո:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Հետազոտական կենտրոնի ստեղծումից ի վեր՝ այն ունի միայն ղեկավար և նախատեսված գործառույթների իրականացման համար այլ աշխատակիցներով կենտրոնը համալրված չէ: Համադրելով նախատեսված գործառութային շրջանակը և բուհի կողմից սահմանված նպատակները՝ տեսանելի է, որ մարդկային ռեսուրսները և տրամադրվող ռեսուրսները բավական քիչ են նպատակների իրագործելիության ապահովման համար:

6.2.ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտության ոլորտում բուհի հետաքրքրություններն ու հավակնությունները ներկայացված են ՌԾ նպատակ 2-ում՝ Բուհի զարգացմանն ուղղված կիրառական և գիտական հետազոտությունների խթանում, որտեղ առանձնացվել են հետևյալ կետերը.

- Բուհի զարգացմանն ուղղված հետազոտությունների խթանում,
- Հետազոտական միջավայրի և ենթակառուցվածքների ապահովում,
- Հետազոտությունների որակի ապահովում և խթանում,
- Հետազոտական գործունեության միջազգայնացման խթանում:

Վերը նշված նպատակների համար սահմանվել են համապատասխան ԳԱՑ-եր.

- Գիտական աստիճան կամ կոչում ունեցող աշխատակիցների տոկոս (տարեկան առնվազն 50%),
- Նպատակային ներքին դրամաշնորհային ծրագրերի քանակ (տարեկան առնվազն 3),
- Գիտաժողովների և համաժողովների քանակ (տարեկան առնվազն 3),
- Միջազգային ամսագրերում հրապարակումների աճի դինամիկա (տարեկան առնվազն 10%),
- Հետազոտական ծրագրերի և հրապարակումների քանակ,
- Հետազոտությանն ուղղված ֆինանսական միջոցների տոկոս (մինչև 2021 թ. առնվազն 10%):

Ուսումնասիրելով բուհի կողմից առանձնացված նպատակները և համադրելով դրանք սահմանված ԳԱՑ-երին՝ տեսանելի է, որ նշված որոշ ուղղություններով բուհը արձանագրել է հաջողություններ, մասնավորապես կազմակերպել և իրականացրել է գիտաժողովներ, աճել է ԵՄՀ դասախոսների կողմից միջազգային և տեղական գիտաժողովների մասնակցությունը, տրամադրվել են ներքին դրամաշնորհային ծրագրեր և այլն: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տարբեր հրապարակումներում ԵՄՀ դասախոսները ներկայացված են ոչ որպես բուհի ներկայացուցիչներ, այլ որպես այլ բուհերի դասավանդողներ կամ գիտական կազմակերպության ներկայացուցիչներ: Ուսումնասիրելով հետազոտությունների համար նախատեսված ֆինանսական ռեսուրսների տրամադրումը՝ տեսանելի է, որ դրանք բավական սահմանափակ են առաջադրված նպատակների հաղթահարման տեսանկյունից: Բուհի ռազմավարական ծրագրով նախատեսվում է մեծացնել բուհի հետազոտությանն ուղղված բյուջեն՝ հասցնելով ընդհանուր ծախսերի մինչև 8%-ը: Այդուհանդերձ, բուհի կողմից դեռևս գնահատում չի իրականացվել՝ դիտարկելու արդյոք այդ ցուցանիշի ապահովումը իրագործելի կդարձնի բուհի սահմանած նպատակների ձեռքբերումը:

ԵՄՀ-ում որպես կարճաժամկետ պլանավորում ներկայացված է հետազոտական կենտրոնի և համապատասխան տարբեր ամբիոնների տարեկան պլանները: Որպես միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում առկա է ԵՄՀ 2023-2030 թթ. ԵՄՀ Հետազոտությունների և զարգացման Ռազմավարական ծրագիրը: Ըստ այս ծրագրի՝ սահմանված են համապատասխան գործողությունների ժամանակացույցերը և պատասխանատուները, ինչպես նաև ԳԱՑ-երը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Հետազոտական կենտրոնի պլանավորումը, համապատասխան ռազմավարությունները, որոնք վերաբերում են գիտական աշխատանքներին և դրանց փոխկապակցվածությունը կրթության հետ ամբիոններում, պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության շրջանակներում հստակ կապակցված չեն միմյանց և կատարվող հետազոտական աշխատանքները որոշակիորեն չեն արտացոլում բուհում ընդունված ՌԾ ԳԱՑ-երին հասնելու ուղիները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ դասախոսական կազմի կողմից իրականացված հետազոտությունները հաճախ բխում են իրենց մասնագիտական հետաքրքրություններից և չեն պայմանավորում բուհի կողմից ստանձնած ուղղությունները,

հետևաբար նաև դրանց կապակցումը բուհի նախանշած նպատակներին։

6.3.ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ԵՄՀ-ում առկա են գիտական աշխատանքների իրականացման վերաբերյալ քաղաքականություն և ընթացակարգային փաստաթղթեր. մասնավորապես 2021թ. մշակվել և Կառավարման խորհրդի կողմից ընդունվել է «Գիտահետազոտական գործունեության խրախուսման քաղաքականությունը» և «Հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման կարգը», որոնցով ֆինանսական խրախուսում են ստանում այն դասախոսները, որոնք տպագրում են հոդվածներ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ազդեցության գործակից ունեցող ամսագրերում։ Հարկ է նշել, որ գիտահետազոտական աշխատանքների խրախուսման նպատակով պարգևատրման սահմանաչափերը տատանվում են 20.000-ից դրամից 200.000 դրամի շրջակայքում՝ կախված հրապարակման տեսակից (առավել մեծ պարգևատրումը տրամադրվում է Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակությունների դեպքում)։

Փորձագիտական դիտարկումների արդյունքում պարզ դարձավ նաև, որ ԵՄՀ-ի կողմից խրախուսվող հոդվածներում (տպագրված 2022 թ.) հեղինակները չէին նշել ԵՄՀ-ի դասախոս լինելու հանգամանքը։

ԵՄՀ-ում իրականցվում է ներքին դրամաշնորհների տրամադրման մրցույթ՝ ՄԱԿ-ի ԿԶՆ համապատասխան։ Դրամաշնորհների ծավալները փոքր են, հետևաբար փորձագիտական ուսումնասիրությունները ևս ցույց տվեցին, որ դրանք դեռևս չեն հանգեցրել լուրջ գիտական արդյունքների և տպագրությունների բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում։

Վերանայվել է «ՊԴ կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգը», «ՊԴ կազմի հաստիքների ձևավորման և բեռնվածության հաշվարկի կարգը», հստակեցվել է դասախոսների ծանրաբեռնվածության և ըստ գիտական ակտիվության աշխատավարձի վճարումը։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թեև 2021թ.-ին եղել է ԵՄՀ գիտահետազոտական աշխատանքների խրախուսման նպատակով պարգևատրման սահմանաչափերը հաստատելու մասին ռեկտորի հրամանը, սակայն «Scopus» գիտատեղեկատվական համակարգում ԵՄՀ անունով առկա է ընդամենը երեք հրապարակում (2012, 2021, 2023 թթ.)։ Ավելին, ԵՄՀ-ում առկա «Բանբեր» ամսագիրը, որտեղ հիմնականում տպագրվում է ԵՄՀ դասախոսական անձնակազմը և խրախուսվում, չի բերում գիտական աշխատանքների որակի բարձրացմանը և սահմանված նպատակներին ու ուղղություններին համահունչ հետազոտությունների իրականացմանը, չնայած առկա են տարբեր ընթացակարգեր և քաղաքականություններ։

Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ տարբեր գիտական կամ հետազոտական դրամաշնորհների դիմելիությունը շատ ցածր մակարդակի վրա է՝ երկու կամ երեք

դրամաշնորհի հայտ վերջին երկու տարիներին: Այս ցուցանիշը ցածր է այն հավակնությունների և ԳԱՑ-երի տեսանկյունից, ինչին բուհը ձգտում է:

Փորձագիտական այցի ընթացքում գիտական դրամաշնորհների դիմելիության հետ կապված ԵՄՀ շահակիցների կողմից նշվեց նաև Գիտության կոմիտեի կողմից տարբեր ծրագրերին դիմելու բազային ֆինանսավորման հնարավորության բացակայությունը, որը շատ դեպքերում անհնարին է դարձնում իրենց կողմից դրամաշնորհներին դիմելու հավանականությունը:

6.4.ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Հետազոտական գործունեության միջազգայնացման նպատակով բուհը ձեռնարկել է մի շարք միջոցառումներ և գործողություններ: Մասնավորապես, դասախոսների կարողությունների զարգացման նպատակով Էրազմուս+ ծրագրի միջոցով 27 դասախոս մասնակցել է տարբեր փոխանակային ծրագրերի: Բուհը համակարգում է Էրազմուս+ ARMDOCT ազգային ծրագիրը, որի նպատակն է հիմնել դոկտորական դպրոցներ ՀՀ-ում և բարելավել բարձրագույն կրթության երրորդ մակարդակը: Կազմակերպվել են տարբեր միջազգային գիտաժողովներ և աշխատաժողովներ, որոնց մասնակցել են նաև տարբեր երկրներից զեկուցողներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ԵՄՀ որոշ դասախոսներ սովորում են համատեղ PhD ծրագրով Իսպանիայի Կոպուլտենսա համալսարանում, և հետազոտական աշխատանքների մի մասն իրականացնում են այնտեղ: Ավելին, համագործակցելով ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտների, ինչպես նաև տարբեր բուհերի հետ՝ բուհը փորձում է ներգրավել մասնագետներ, որոնք կբարձրացնեն և միջազգային մակարդակի կհասցնեն հետազոտությունները բուհում:

Այնուամենայնիվ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրամաշնորհների մեծ մասն ուղղված է կրթական բաղադրիչին, իսկ հետազոտական դրամաշնորհները ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան, բացակայում են: Այս հանգամանքով է պայմանավորված նաև միջազգային գիտատեղեկատվական համակարգերում տպագրությունների բացակայությունը:

Փորձագիտական խումբը հարկ է համարում նաև նշել, որ ԵՄՀ-ին դեռևս չի հաջողվել իրականացնել որևէ տեղական կամ միջազգային հետազոտական դրամաշնորհային ծրագիր:

6.5.ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ԵՄՀ ուսումնական և հետազոտական գործընթացների կապը բխում է բուհի ՌԾ դրույթներից: Բուհը նախաձեռնել և իրականացնում է տարբեր գործողություններ՝ կրթական ծրագրերի վերանայում, դասախոսների խրախուսում հոդվածների տպագրության համար, փոքր դրամաշնորհների տրամադրում: 2019թ.-ին վերանայվել են ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջները, ընթացակարգը և մեթոդական ցուցումները: Բուհը փորձում է ներգրավել ուսանողներին արտաքին

շահակիցների հետ համագործակցության արդյունքում հետազոտական աշխատանքների և պրակտիկաների իրականացման միջոցով՝ նպաստելու ուսումնական և հետազոտական գործընթացի փոխկապակցմանը: Այդուհանդերձ, փորձագիտական այցի և մասնագիտական քննարկում-զրույցների ընթացքում պարզվեց, որ կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչը լավ արտահայտված չէ, և ուսանողներին հետազոտահենք կրթություն տրամադրելու մեխանիզմները դեռևս ինստիտուցիոնալ բնույթ չեն կրում՝ հիմնականում հետազոտական բաղադրիչն արտացոլելով ավարտական աշխատանքների իրականացմամբ: Միջազգային կրկնակի դիպլոմի շնորհում ապահովող ծրագրերի շրջանակներում ևս ուսանողներին տրվում են հետազոտական հանձնարարականներ, սակայն դրանք ոչ միշտ են կապակցվում կրթական վերջնարդյունքներին: Այսպիսով, ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում հիմնականում արտահայտվում է ավարտական աշխատանքների և էսսեների միջոցով:

Բուհը ներկայումս ավելի շատ իրականացնում է դասախոսական անձնակազմի կարողությունների զարգացման ուղղությամբ աշխատանքներ, մասնավորապես Ժան Մոնե ծրագրի միջոցով Իրավագիտության ուղղությամբ, սակայն դեռևս կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի արտացոլումը հստակորեն չի երևում:

Փորձագիտական այցի ընթաքում պարզվեց, որ ընդհանուր առմամբ հստակ պատկերացում չկա բուհի տարբեր օղակներում հետազոտական բաղադրիչի ներդրումը կրթական ծրագրերում կամ հետազոտահենք կրթության կազմակերպումն ինչպես պետք է իրականացվի:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհն ունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն՝ երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորմամբ: Առկա են ԳԱՑ-եր ինչպես ՌԾ-ում, այնպես էլ նոր մշակված 2023-2030 թթ. Հետազոտությունների և զարգացման Ռազմավարական ծրագրի համար, ինչը որոշակի հիմքեր է ստեղծում գործընթացների պլանավորման և այնուհետև դրանց արդյունավետության գնահատման համար: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է բուհի կողմից սահմանված նպատակների և տրամադրվող ռեսուրսների գնահատումը՝ նպատակների իրագործելիությունն առավել չափելի և գնահատելի դարձնելու համար: Այս տեսանկյունից կարևոր է, որ բուհը նաև ուշադրություն դարձնի նպատակների սահմանմանը, որոնք փորձագիտական խմբի գնահատմամբ բավական հավակնոտ են (հետազոտական միջավայրի և ենթակառուցվածքների ապահովում, հետազոտությունների որակի ապահովում և խթանում, հետազոտական գործունեության միջազգայնացման խթանում)՝ համադրելով նախատեսված գործողությունների, տրամադրվող ռեսուրսների ու սահմանված ժամկետների հետ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում հետազոտության ոլորտի ռազմավարության առկայությունը, որը ճշգրտվում է միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերով և նպաստում հետազոտական գործընթացների կանոնակարգվածությանը: Դրական է, որ ստեղծվել է հետազոտական կենտրոն, որը պետք է համակարգի բուհում

իրականացվող հետազոտական գործընթացները: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը խիստ կարևորում է հետազոտական կենտրոնի դերի և առաքելության հստակեցումը: Փորձագիտական խումբը նաև գտնում է, որ մարդկային և ֆինանսական ռեսուրսներով համալրումը բուհի կողմից հրատապ լուծման անհրաժեշտություն ունի՝ նպաստելու հետազոտական ոլորտում բուհի որդեգրած նպատակների իրականացմանը:

Դրական է, որ բուհը քայլեր է ձեռնարկել ներքին դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար, սակայն դրանք դեռևս հստակ արդյունքներ չեն տվել միգազգային գիտատեղեկատվական շտեմարաններում տպագրությունների մասով: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դասախոսները տպագրվում են տեղական ամսագրերում, սակայն սեփական ամսագրում տպագրվելը խրախուսելու տեսանկյունից ունի որոշակի բացասական միտումներ, քանի որ բուհը ձգտում է հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը և հետագայում դիմելու տարբեր գիտական դրամաշնորհների: Ավելին, մտահոգիչ է այն միտումը, որ ԵՄՀ դասախոսները ստացել են դրամական պարգևատրումներ հոդվածների տպագրության համար, որտեղ նշված է ոչ թե ԵՄՀ, այլ մեկ ուրիշ բուհ կամ գիտական կազմակերպություն:

Փորձագիտական խումբը միևնույն ժամանակ դրական է համարում բուհի կողմից հետազոտահենք կրթության ձգտման միտումները, սակայն կրթական ծրագրերում դրանց արտացոլումը դեռևս հստակեցված չէ: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է հետազոտության և ուսումնառության գործընթացների փոխկապակցման ինստիտուցիոնալ մոտեցումների որդեգրումը, ըստ կրթական ծրագրերի նպատակների դրանց արտահատումը, ինչը կնպաստի ուսանողների մոտ հետազոտական կարողությունների ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՄՀ գիտահետազոտական աշխատանքների իրականացման տեսանկյունից առկա են բազմաթիվ խնդիրներ՝ մասնավորապես կրթության մեջ հետազոտական բաղադրիչի թերի ներդրման, տարբեր միջազգային շտեմարաններում հոդվածների սակավության, դասախոսական անձնակազմի՝ դրամաշնորհներին դիմելու սակավության հանգամանքները, ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման մեխանիզմների անկատարությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ԵՄՀ-ն տեղակայված է մեկ մասնաշենքում: Բուհի կրթական ծրագրերի իրականացման համար առկա են ինչպես լսարաններ, այնպես էլ գործնական կամ լաբորատոր աշխատանքների իրականացման համար լաբորատորիաներ: «Ֆարմացիա» մասնագիտությամբ կրթական ծրագրի իրականացման համար բուհը համագործակցում է ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտների (Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն, Հրաչյա Բունիաթյանի անվան կենսաքիմիայի և Լևոն Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտներ) հետ և պայմանագրային հիմունքներով օգտագործում է ինստիտուտների ենթակառուցվածքները: Կրթական միջավայրի ընդլայնման անհրաժեշտությունից ելնելով՝ նախորդ հավատարմագրումից հետո Ֆարմացիայի ամբիոնին կից ձևավորվել է 7 լաբորատորիա (քիմիայի, ֆիզիկայի, անատոմիայի և ֆիզիոլոգիայի, մանրէաբանության, ֆարմակոգնոզիայի և բուսաբանության, դեղերի տեխնոլոգիայի և հյուսվածքաբանության), վերանորոգվել և տեխնիկապես հագեցվել է ևս 5 լսարան, 5 առարկայական կաբինետներ (մեդիա լաբորատորիա, համակարգչային լսարան, լինգաֆոնային լսարան, դեղատուն, դատարան), բարելավվել են մարզադահլիճն ու մարզադաշտը: Համալսարանում առկա են նաև համակարգչային լսարաններ, մեծ և փոքր քննարկումների դահլիճներ:

Լսարանների վերանորոգումն ու վերազինումը հիմնականում իրականցվել է Էրազմուս+ դրամաշնորհների շնորհիվ: Բուհը նույնպես իր սեփական միջոցների հաշվին ձեռք է բերել ըստ անհրաժեշտության լաբորատոր սարքավորումներ և վերազինել լսարանները: Այնուամենայնիվ, ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ «Ֆարմացիա» կրթական ծրագրի իրականացման համար լաբորատոր պայմաններն ունեն բարելավման կարիք՝ կրթական ծրագրերի վերջնարդյունքների լիարժեք ապահովման համար:

ԵՄՀ-ն հանդիսանում է նաև Էրազմուս+ T-Green ծրագրի համակարգողը, որի շրջանակներում նույնպես նախատեսվում է ռեսուրսային բազայի համալրում:

ԵՄՀ-ում առկա է գրադարան և ընթերցասրահ: Հիմնական դասագրքերից շատերը հասանելի են էլեկտրոնային տարբերակով: Բուհը համագործակցում է Հայաստանի Ազգային գրադարանի հետ, Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի անդամ է, որով համալսարանը մի շարք փակ գրադարանների մուտք է ապահովում: Ռեսուրսների և ենթակառուցվածքների դիտարկումից պարզ դարձավ, որ գրադարանային ռեսուրսները և ընթերցասրահը ըստ բուհի ներկայացուցիչների բավարար չէին, և դրա համար բուհն արդեն վերլուծել է իր կարիքները և հնարավորությունները ու ձեռնարկել է անհրաժեշտ միջոցները. նոր գրադարանը և ընթերցասրահը կառուցման փուլում են:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ դասախոսների շատ քիչ մասն է օգտվում գրադարանից և գրադարանի համալրումը ժամանակի պահանջներին համահունչ չի իրականացվում: Ուսանողներն անհրաժեշտություն ունեն մասնագիտական գրականության, որի սակավությունը տեսանելի է շահակիցների համար:

2020 թ. հեռավար ուսուցման կազմակերպման նպատակով ԵՄՀ-ն կիրառում է Microsoft Teams հարթակը, վերջինս ներառում է հեռավար ուսուցման կազմակերպման համապատասխան գործիքակազմ:

Բուհում առկա է նաև հանրակացարան, որտեղ կարող են բնակվել ուսանողներ, սակայն սենյակների թիվը բավական քիչ է: Բուհում առկա է ճաշարան, որն ունի առանձնացված տարածք:

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ բուհը ցանկանում է նաև ներդնել նոր մասնագիտություններ, օրինակ՝ Ստոմատոլոգիա, ինչը բխում է նաև բուհի ՌԾ-ից, սակայն պլանավորումը, թե ինչ ռեսուրսներ են պետք ծրագրի ներդրման համար, դեռևս ամբողջական չէ: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ բուհը, գիտակցելով ռեսուրսների վերազինման և նորերի ձեռքբերման անհրաժեշտությունը, շահել է տարբեր դրամաշնորհներ և համագործակցելով տարբեր արտաքին շահակիցների և կազմակերպությունների հետ՝ ներգրավում է միջոցներ:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ըստ բուհի բյուջեի ուսումնասիրության՝ 2022 թ. այն ձևավորվել է գրեթե 90%-ով ուսանողների վարձավճարներից: Բյուջեի մոտ կեսը անձնակազմի համար նախատեսված ծախսերն են, և անձնակազմին տրվող ծախսերից մոտ 30% միայն տրվում է ՊԴ անձնակազմին, իսկ մոտ 45%-ը վարչական անձնակազմին: Լաբորատոր սարքավորումների և ուսումնական նյութերի վրա ծախսվում է բյուջեի 1%-ը, և համապատասխանաբար ֆինանսական պլանավորում՝ ըստ կրթական ծրագրերի և մեկ ուսանողի հաշվարկով գումարի անհրաժեշտության, առկա չէ:

Ըստ բուհի ներկայացրած հիմնավորումների՝ ֆինանսական ռեսուրսների պլանավորումը և հատկացումներն իրականացվում են և բխում են Ռազմավարական ծրագրից ու դրա գործողությունների պլանից: Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հաճախ խզված է կապը հատկացվող ռեսուրսների բաշխման և ռազմավարական նպատակների միջև՝ հատկապես Հետազոտության ուղղությամբ բուհի սահմանած նպատակների ապահովման տեսանկունից:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բուհի կառավարման խորհրդի անդամները ներգրավված են չեն բուհի համար ֆինանսական կամ այլ ռեսուրսներն ընդլայնելու ուղղությամբ:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ամբիոնները և համապատասխան այլ ստորաբաժանումները ներկայացնում են տարեկան պլանավորման ծախսերը՝ կրթական

ծրագրերի անհրաժեշտությունից ելնելով, բայց դրանց ներկայացումը համակարգված և հստակ մեթոդաբանություն չի կրում: Ըստ բուհի բյուջեի՝ ռեսուրսատար լաբորատոր նյութերի և սարքավորումների ձեռք բերման համար բուհը հատկացնում է բավական սակավ միջոցներ «Դեղագործություն» կրթական ծրագրի պատշաճ իրականացման համար: Բուհը, ըստ անհրաժեշտության, տրամադրում է մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, սակայն փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին, որ ուսումնական կամ սպասարկող լաբորանտների թիվը քիչ է: Ֆարմացիայի ամբիոնում առկա է ըստ հաստիքացուցակի միայն մեկ լաբորանտի հաստիք: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումներից պարզ դարձավ, որ ամբիոնում տեսնում են անհրաժեշտությունը լաբորանտների հաստիքների ավելացման հաջորդ ուսումնական տարվա համար, ինչպես նաև կարևորում են անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների ու քիմիական նյութերի՝ մեկ ուսանողի հաշվարկով պլանավորումը՝ հստակ հաշվարկի մեթոդաբանությամբ և ծախսային հիմնավորումներով:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ֆինանսական կայության ապահովումը ԵՄՀ 2019-2025թթ. ռազմավարական առաջնահերթություններից է: Ինչպես արդեն նշվել է, բուհի բյուջեի գրեթե 90%-ը ձևավորվում է ուսանողների վարձավճարներից, մասնավորապես օտարերկրյա քաղաքացիներին տրված ծառայություններից: Վերջին տարիներին բուհի ֆինանսական հոսքերն ավելացել են արտասահմանցի ուսանողների հաշվին, սակայն վարձավճարներից բացի այլ եկամուտներ գրեթե չեն առաջանում, և ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացիա գրեթե առկա չէ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ բուհը ներկայումս վերանորոգում է բուհի տարածքի մի մասը՝ վարձակալության հանձնելու և այլընտրանքային ֆինանսական ռեսուրսներ գեներացնելու նպատակով:

Կրթական ծրագրերի նպատակների իրականացման համար բուհը հատկացնում է աշխատավարձին միջոցներ, պարբերաբար ավելացնում դասախոսական կազմին հատկավող վճարները, ինչպես նաև տալիս լրավճարներ գիտական գործունեության համար՝ այդ կերպ ևս փորձելով ապահովել կրթական ծրագրերի իրականացման կայունությունը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ միջազգային ուսանողների շարունակաբար աճի միտում ունենալով՝ ՊԴ անձակազմի անգլերենի իմացության մակարդակի բարձրացման համար բուհն իրականացնում է տարբեր ծրագրեր, ինչպես նաև նպաստում կարողությունների զարգացմանը փոխանակման ծրագրերի միջոցով:

Կրթական ծրագրերի իրականացման համար մյուս կարևորագույն ռեսուրսը ենթակառուցվածքներն են, որտեղ բուհը փորձում է ներգրավել արտաքին աղբյուրներ՝ մասնավորապես Էրազմուս+ ծրագրերը, որոնց միջոցով վերանորոգվել և վերազինվել են տարբեր լսարաններ, ինչպես նաև մեկնարկել են նոր ծրագրեր, ինչը վկայում է շարունակականության ապահովման և ռեսուրսների պարբերաբար վերազինման ուղղությամբ բուհի նախաձեռնողականության մասին: Բուհը նույնպես իր ֆինանսական

կարողությունների շրջանակում ներդրումներ է կատարում, վերազինում համակարգչային լսարանները և կառուցում նոր գրադարան։

Կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է ամբիոնների կողմից ներկայացված հայտերի հիման վրա, ապա քննարկվում է պրոռեկտորների և ռեկտորի հետ, և առաջնահերթություններից ելնելով՝ կազմվում է բյուջեի նախագիծ, որը ներկայացվում է Կառավարման խորհրդին՝ հաստատման։

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ընդհանուր առմամբ բուհում առկա է լսարանային և գրադարանային ֆոնդ, կան լաբորատորիաներ, սակայն կրթական ծրագրերի՝ մասնավորապես Ֆարմացիայի իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ հստակ պլանավորում առկա չէ։ Անհրաժեշտ սարքավորումներն ու քիմիական նյութերը ձեռք են բերվում բուհի՝ տվյալ տարվա ֆինանսական հնարավորություններից ելնելով, ինչի գնահատում դեռևս տեղի չի ունեցել՝ նվազագույն պայմանների ապահովման անհրաժեշտության տեսանկյունից։

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ավարտական աշխատանքներն իրականացվում են համագործակցող ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում և օգտագործվում են այդ ինստիտուտների ենթակառուցվածքները։ Մյուս կրթական ծրագրերի դեպքում ռեսուրսային բազան հնարավորություն ընձեռում է իրականացնել այդ կրթական ծրագրերի նպատակները՝ հաշվի առնելով նաև, որ դրանց՝ հիմնականում հումանիտար-հասարակագիտական ուղղվածությունը։

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Բուհում տեղեկատվության փոխանցման և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու համար գործում են Փաստաթղթերի կառավարման կարգը և Գործավարության կարգը։ ՈԱ կենտրոնի կողմից ստեղծվել և կառավարվում է փաստաթղթերի գրանցամատյանը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում գործում է մեկ պատուհանի սկզբունքը առաջացած հարցերին արագ արձագանքելու, դիմումներին արագ ընթացք տալու և փաստաթղթաշրջանառության գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով։

Ներքին գրավոր հաղորդակցությունը կարգավորվում է ներքին իրավական ակտերով։ Ըստ սահմանված դեպքերի՝ դասախոսների, ուսանողների դիմումներն ուղղվում են ռեկտորին, պրոռեկտորներին, դեկաններին, ովքեր էլ տնօրինում են դրանց հետ կապված աշխատանքների հետագա ընթացքը։

Ներկայումս բուհում ներդրված է Ebuh համակարգը, որը գործարկման փուլում է։ Այն նպատակ ունի թվայնացնելու ողջ ուսումնական գործընթացը և հասանելի դարձնելու

ուսանողի ամբողջական շարժը: Բուհում առկա է միասնական էլփոստի համակարգ: Համալսարանում գրադարանի կազմում առկա է նաև արխիվ:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ բուհը կարևորում է նաև կայքի պարբերաբար թարմացումը՝ շահակիցներին փաստաթղթային հենքը հասանելի դարձնելու համար:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Առողջական վիճակի մշտադիտարկման և անհրաժեշտության դեպքում առաջին բուժօգնության տրամադրման նպատակով համալսարանը համագործակցում է մասնաշենքում տեղակայված Վալիդուս բժշկական կենտրոնի հետ՝ ընկերության հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում:

Անվտանգության պահպանման համար բուհում կա պահակային ծառայություն, հակահրդեհային ազդանշանային համակարգ, մասնաշենքի տեսահսկման համակարգ:

Փորձագիտական ուսումնասիրությունները և հաստատության ռեսուրսների դիտարկումը ցույց տվեցին, որ լաբորատորիաներում օդափոխման համակարգը բավարար չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ լաբորատորիաներում անվտանգության կանոնների մասին տեղեկատվությունը փակցված չէ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասապրոցեսի ընթացքում, սակայն, այս կանոնները ներկայացվում են ուսանողներին համապատասխան գործնական առաջադրանքները կատարելու համար: «Ֆարմացիա» կրթական ծրագրի համար նախատեսված լաբորատորիաներում ներկայացվող անվտանգության կանոները ոչ ամողջովին են պահպանված (ինչպես օրինակ, հակահրդեհային համակարգի՝ կրակմարիչների առկայություն լաբորատորիայի ներսում):

Բուհը ներգրավված է եղել «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» (ASPIRE) ծրագրում: Բուհը վերապատրաստել է աշխատակիցների հատուկ կարիքներով անձանց հետ աշխատելու ուղղությամբ, ինչպես նաև ապահովել վերջիններիս համար սովորելու և աշխատելու հարմարավետ պայմաններ: Բուհն ունի նաև վերելակ և հարմարեցված սանհանգույցներ՝ հատուկ կարիքներով ուսանողների համար:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Բուհում ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով պարբերաբար Որակի կենտրոնի կողմից կատարվում են հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում: Տեղի են ունենում նաև հանդիպումներ ՊԴ կազմի և ուսանողների հետ, ու ստացված տվյալների հիման վրա իրականացվում են բարելավումներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ռեսուրսների բարելավումը բուհի մշտական ուշադրության կենտրոնում է, և այդ նպատակով պարբերաբար հատկացվում

են միջոցներ ենթակառուցվածքների բարելավման և նոր ռեսուրսներ ձեռք բերելու համատեքստում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ առկա ռեսուրսները և կրթական միջավայրը թույլ են տալիս իրականացնելու բուհում առկա կրթական ծրագրերը: Այնուամենայնիվ, չնայած առկա կրթական ռեսուրսներին՝ որոշ լաբորատորիաներ վերազինման և նոր սարքավորումների կարիք ունեն՝ ապահովելու «Ֆարմացիա» կրթական ծրագրով ավելի որակյալ կադրերի պատրաստումը, ինչպես նաև նոր խթաններ ստեղծելու դիմորդների ներգրավման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ և ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հետ համագործակցությունն ու այդ ինստիտուտների ենթակառուցվածքների օգտագործումը նշանակալի դեր ունեն կրթական ծրագրերում առկա վերջնարդյունքների ապահովման գործում: Այս տեսանկյունից հատկանշական է բուհի կողմից այս համագործակցությունների արդյունավետության գնահատումը շարունակականության տեսանկյունից ռիսկերը բացահայտելու և կայունության ապահովման նպատակով:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ հանգամանք է, որ բուհի եկամուտների մոտ 90%-ը ստացվում է ուսանողների վարձավճարներից, ինչը ցույց է տալիս, որ բուհը պետք է ուշադրություն դարձնի ֆինանսների դիվերսիֆիկացիային և նոր տեսակի ռեսուրսների ներգրավմանը: Այս համատեքստում փորձագիտական խումբը դրական հանգամանք է համարում միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը, որոնց միջոցով ռեսուրսների համալրում է կատարվել բուհում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի կառավարման խորհրդի անդամների ներգրավումը ֆինանսական կամ այլ ռեսուրսներն ընդլայնելու ուղղությամբ կնպաստի բուհի կարողությունների և ռեսուրսների զարգացմանը:

Ֆինանսների արդյունավետ տնօրինման, կրթական ծրագրերի նպատակների իրականացման և դրանց շարունականության երաշխավորման համար, փորձագիտական խմբի գնահատմամբ, բուհը կարիք ունի հստակ հաշվարկելու յուրաքանչյուր կրթական ծրագրով մեկ ուսանողի համար նախատեսված միջոցները և ռեսուրսները, ինչը կնպաստի հետագա պլանավորումն ու ռեսուրսների հատկացումն առավել արդյունավետ դարձնելուն:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵՄՀ միտումները փաստաթղթավորման գործընթացներն էլեկտրոնայնացնելու ուղղությամբ, ինչը մեծապես նպաստում է այս գործընթացների կանոնակարգմանը: Այս տեսանկյունից կարևոր հանգամանք է նաև բուհի կայքում տեղեկատվության տրամադրումը, ինչը ապահովում է հիմնական տեղեկատվության հասանելիությունը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը ուշադրություն դարձնի անվտանգության պահպանմանը միտված աշխատանքների իրականացմանը, հատկապես շեշտադրում է լաբորատորիաներում անտանգությանն ուղղված կանոնների փակցնումը, համապատասխան օդափոխման և համահիդեհային համակարգերով լաբորատորիաների վերազինումն ու արդիականացումը կրթական անվտանգ միջավայրի ապահովման համար:

Հատկանշական է բուհի կողմից ենթակառուցվածքների ստեղծումը հատուկ կարիքներ ունեցող անձանց ուսումնառությանը նպաստելու համար:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ կարևոր է նաև իրականացվող բարելավումների շարունակական գնահատումը, ինչը նպաստում է շահակիցների կարիքների վերհանմանը և բարելավման գործողությունների մշակմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո ԵՄՀ-ում արդիականացվել են որոշ լաբորատորիաներ, բավականին թարմացվել է ռեսուրսային բազան, և այն կրում է շարունակական բնույթ, ընդհանուր առմամբ առկա է կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտ միջավայր, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները շարունակական են, ուսանողների և անձնակազմի համար առկա է գործունեության համապատասխան միջավայր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

2022 թ. ընդունված կանոնադրության և 2019-2025 թթ. Ռազմավարական ծրագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության որոշակի համակարգ: Կանոնադրությամբ, ի թիվս այլնի, ամրագրված է, որ համալսարանը պարտավոր է հրապարակել իր գործունեության մասին հաշվետվություններ, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրել և հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին:

Կառավարման Խորհուրդը լսում և գնահատում է ռեկտորի հաշվետվությունը՝ համալսարանի տարեկան գործունեության մասին, ռազմավարական պլանի, որակի ապահովման և այլ ծրագրային փաստաթղթերի իրականացման մասին հաշվետվությունները, ինչպես նաև ՄՈՒՀ-ի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվի կատարողականի մասին հաշվետվությունները:

Համալսարանի ռեկտորը, հիմք ընդունելով ստորաբաժանումների, ռազմավարական ծրագրի և այլ ծրագրային փաստաթղթերի ցուցանիշների հաշվետվությունները, կազմում և Կառավարման խորհրդին ներկայացնում է իր տարեկան հաշվետվությունը՝ ըստ ՌԾ նպատակների:

Համալսարանում Գործում են նաև նաև ամբիոնների հաշվետվողականության հստակ մեխանիզմներ, այն է՝ ամբիոնի վարիչը համալսարանի գիտական խորհրդին է ներկայացնում տարեկան հաշվետվություններ:

Հաշվետվողականության սահմանված կարգի մասին է վկայում նաև ԵՄՀ կայքում ռեկտորի, եկամուտների և ծախսերի նախահաշիվների և կատարողականների հրապարակումը:

Փորձագիտական խումբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գիտական խորհրդի և կառավարման խորհրդի գործունեության /հաշվետվություններ, վերլուծություններ, կայացվող որոշումներ/ վերաբերյալ տեղեկատվության մասով հրապարակումները սակավաթիվ են:

Փորձագիտական խմբի կողմից հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք երբեմն չեն արտացոլում կատարված գործընթացների համապատասխանությունը գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներին:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

Թափանցիկությունը և հասանելիությունը, ըստ ԵՄՀ կանոնադրության, ՄՈՒՀ-ի կողմից դիտարկվում են իբրև գործունեության սկզբունք: Համալսարանը փորձում է երաշխավորել համապատասխան ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը, մասնավորապես՝ ՄՈՒՀ-ն ունի սոցիալական ցանցերում ակտիվ հարթակներ, որոնց միջոցով լայնորեն տարածում է ԵՄՀ ընթացող գործընթացների, այդ թվում՝ ընդունելության, գիտակրթական և այլ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը: Համալսարանում առկա գործընթացների վերաբերյալ թափանցիկության ապահովման նպատակով տեղեկատվությունը հասանելի է նաև ԵՄՀ պաշտոնական կայքէջում: ԵՄՀ կայքէջը եռալեզու է. տեղեկատվությունը շահակիցներին հասանելի է դառնում հայերենով, ռուսերենով և անգլերենով: Փորձագիտական խումբը փաստում է, որ թեև ՄՈՒՀ-ի կայքը հասանելի է անգլերեն և ռուսերեն լեզուներով, այնուամենայնիվ, առանձին ոլորտների ամբողջական տեղեկատվություն կայքէջի օտարալեզու հատվածում տեղադրված չէ:

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների՝ շահակիցների բավարարվածությունը բարձրացնելու, միջազգային չափանիշներին համապատասխան կայքէջ ունենալու նպատակով ԵՄՀ Հանրային կապերի և մարքեթինգի բաժինը մեկնարկել է նոր կայքէջի ստեղծման աշխատանքները: Վերջինս ներառական է լինելու (inclusive website)՝ հնարավորություն տալով հատուկ կարիքներով շահակիցներին հեշտությամբ օգտվելու կայքից:

ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը նաև ԵՄՀ նորաստեղծ ՄեդիաԼաբի միջոցով, որը հնարավոր է դարձնում ինչպես ԵՄՀ դասախոսների, այնպես էլ ուսանողների «հաջողության պատմությունների»

լուսաբանումը: Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական այցի ժամանակ կայացած հանդիպումների՝ ՄեդիաԼաբի միջոցով կրթական ծրագրերի վերաբերյալ հոլովակները և այլ գովազդային նյութերը մշակվում են նաև ժեստերի լեզվի թարգմանության ապահովմամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափանցիկության և հրապարակայնության սկզբունքները իբրև ուղենիշ դիտարկելով՝ ՄՈՒՀ-ում պարբերաբար կազմակերպվում են «Բաց դռների օրեր» և «Կարիերայի օրեր», որոնց մասնակցում են նաև պոտենցիալ գործատուները:

Փորձագիտական խմբի կողմից ռեսուրսների դիտարկման ժամանակ ակնառու էին ԵՄՀ միջանցքներում և պատերին տեղադրված ՄՈՒՀ-ի գործունեությունը լուսաբանող ցուցատախտակները, որոնք ևս փաստում են ՄՈՒՀ-ի գործունեության հրապարակայնության մասին: Փորձագիտական հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ ներքին շահակիցները ևս բավարարված էին ՄՈՒՀ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության թափանցիկությունից և հասանելիությունից:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակության հետ կապերի շարունակական զարգացման քաղաքականությունն իր գործունեության հիմքում ունենալով՝ ԵՄՀ-ում գործում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ՝ հաշվի առնելով արտաքին շահակիցների առանձնահատկությունները: Հասարակայնության և արտաքին շահակիցների հետ կապերի ապահովման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ Հանրային կապերի և մարքեթինգի բաժինը, Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնը, Միջազգային կապերի կենտրոնը, Որակի ապահովման կենտրոնը և ամբիոնները:

Համալսարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն (info@eiu.am) ԵՄՀ-ին դիմելու պաշտոնական տարբերակներից մեկն է: Բացի այդ, ԵՄՀ-ն հասարակության տարբեր ներկայացուցիչների հետ որպես հետադարձ կապի գործիք ակտիվորեն կիրառում է նաև «Facebook», «Instagram» սոցիալական ցանցերի էջերի հաղորդագրությունների (Messenger) գործիքը, իսկ տեղական և օտարերկրացի դիմորդների համար գործում է «WhatsApp» ցանցով կապ հաստատելու, ինչպես նաև հաղորդագրություններ ուղարկելու հնարավորություն: Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ ստացված հարցերը և նամակներն անհրաժեշտության դեպքում ուղորդվում են համապատասխան պատասխանատու անձանց, որոնք ապահովում են տեղեկատվության տրամադրումը:

Իբրև հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն գործիքակազմ՝ ՄՈՒՀ-ը կազմակերպում է «Բաց դռների օրեր», որոնց շրջանակներում ԵՄՀ գործունեության մասին համապատասխան տեղեկատվությունը հասանելի է դառնում դիմորդներին, իսկ «Կարիերայի օրերի» շրջանակներում սերտանում են ՄՈՒՀ- ուսանող-գործատու կապերը:

Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ ԵՄՀ ռեկտորը և ստորաբաժանումների ղեկավարները, ըստ ժամանակացույցի, քաղաքացիների ընդունելություն են իրականացնում:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Համալսարանի կանոնադրությամբ և 2019-2025 թթ. Ռազմավարական ծրագրով որպես առանցքային առաջնահերթություն համալսարանի կողմից սահմանված է գիտելիքների տարածման հիմնարար նպատակը: Ըստ ԵՄՀ 2019-2025թթ. Ռազմավարական ծրագրի՝ սոցիալական պատասխանատվությունը ՄՈՒՀ-ը դիտարկում է իբրև ԵՄՀ արժեք՝ սահմանելով. «Մենք աշխատում ենք մեր փորձառությունը ծառայեցնել բուհի ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանը՝ տրամադրած կրթության և իրականացրած հետազոտությունների համար հաշվետու լինելով պետությանն ու հասարակությանը»:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որպես աջակցություն արցախցի ուսանողների, ովքեր պատերազմական իրավիճակով պայմանավորված հնարավորություն չունեին մասնակցելու բակալավրիատի և մագիստրատուրայի դասերին այն բուհերում, որտեղ սովորում են, ԵՄՀ-ն ընձեռել է հնարավորություն՝ անվճար միանալու բուհի ընթացիկ առցանց դասընթացներին:

Աջակցելով միջին մասնագիտական հաստատությունների, մարզերի ուսանողներին և հաշմանդամություն ունեցող անձանց՝ ԵՄՀ-ն Covid-19 համավարակով պայմանավորված արտակարգ դրության ընթացքում՝ հասանելի է դարձրել ավելի քան 40 անվճար առցանց դասընթաց: Վերջինիս վերաբերյալ հայտարարություն է տարածվել ԵՄՀ պաշտոնական էջում, ինչպես նաև նախաձեռնությունը լուսաբանվել է տարբեր լրատվամիջոցների կողմից: Շուրջ 60 երիտասարդ հնարավորություն է ստացել մասնակցել դասընթացներին, որոնք վարել են ինչպես բուհի դասախոսները, այնպես էլ հրավիրյալ մասնագետներ:

Դպրոցների աշակերտների համար պարբերաբար կազմակերպվում են նաև տարբեր թեմատիկ մրցույթներ, որոնց արդյունքում հաղթող աշակերտներին տրվել են դրամական պարգևներ, ինչպես նաև հատուկ մրցանակներ:

Քոլեջների հետ համագործակցության հնարավորությունների ստեղծմանն ու ամրապնդմանն է միտված նաև ԵՄՀ «Քոլեջների աջակցման ծրագիր»-ը, որը նույնպես ամենամյա նախաձեռնություն է և միտված է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների մասնագիտական և ընդհանուր գիտելիքների զարգացմանը: Քոլեջներին է ուղարկվում ծրագրի շրջանակներում ԵՄՀ մասնագիտական ամբիոնների կողմից իրականացվող անվճար դասընթացների ցանկը, այնուհետև կազմակերպվում համապատասխան դասընթացները քոլեջների ուսանողների համար:

ԵՄՀ-ն, ստանալով Էրազմուս+ Ժան Մոնե ամբիոն ստեղծելու հնարավորություն, պարբերաբար կազմակերպում է ամառային և ձմեռային դպրոցներ, սեմինարներ, որոնց մասնակցելու հնարավորություն են ստանում հանրապետության տարբեր բուհերի ուսանողներ: Դպրոցների շրջանակներում կազմակերպվող արտագնա սեմինարները հովանավորվում են ծրագրի շրջանակներում:

ԵՄՀ դասընթացների կենտրոնի կողմից սահմանված պարբերականությամբ իրականացվում են Պատանի դիվանագետի, Պատանի իրավագետի, Պատանի բիզնեսմենի դպրոց-ները, ինչպես նաև ամառային դպրոց, ծրագրավորման և այլ դասընթացներ դպրոցների աշակերտների համար: 2011թ.-ից ի վեր յուրաքանչյուր տարի իրականացվում է «Քայլ առաջ» ծրագիրը, որը միտված է աշակերտների փափուկ հմտությունների զարգացմանը: Ծրագրերի շրջանակներում իրականացվում են դասընթացներ հաղորդակցության հմտությունների, թիմային աշխատանքի, ժամանակի կառավարման կարողության և այլ փափուկ հմտությունների զարգացմանը միտված:

Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ ԵՄՀ-ն անվճար դասընթացներ է կազմակերպում թոշակառուների համար, որոնց շրջանակներում վերջիններիս սովորեցնում են սմարթֆոններից օգտվելու հմտություններ:

ՄՈՒՀ-ը պարբերաբար իրականացնում է նաև անվճար վերապատրաստման դասընթացներ բուհերի և միջին մասնագիտական հաստատությունների դասախոսների, ինչպես նաև դպրոցների ուսուցիչների համար՝ փոխանցելով ուսուցման և ուսումնառության համագործակցային մեթոդների շուրջ կուտակված փորձը: Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի (ECML) հետ համատեղ առցանց վերապատրաստվել են Երևան քաղաքի և մարզերի դպրոցների ավելի քան 30 ուսուցիչներ՝ «Լեզվի իրազեկման զարգացումը դպրոցներում» թեմայով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհում գործող ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգը, որի միջոցով բոլոր մակարդակներում պատրաստվում են համապատասխան հաշվետվություններ, որոնք առանձին դեպքերում հրապարակման միջոցով հասանելի է դառնում հասարակությանը:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ ԵՄՀ-ում հաշվետվողականության սահմանված մեխանիզմներով արձանագրվում են ինչպես դրական փաստերը, այնպես էլ առկա բացթողումները՝ ապահովելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հաշվետվողականությունը՝ պետության և հասարակության առջև: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբն արձանագրում է, որ հաշվետվություններն ամբողջովին չեն արտացոլում համապատասխան ստորաբաժանումների գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներին համապատասխանությունը՝ նպաստելու կառավարման գործընթացների արդյունավետության գնահատմանը և ձևավորելու գնահատման արդյունքների հիման վրա կազմվող պլանավորումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի կողմից առկա տեղեկատվության ամբողջական արտացոլումն օտար լեզուներով կնպաստի միջազգային ուսանողներին և դիմորդներին՝ համալսարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրմանը:

Փորձագիտական խումը դրական է գնահատում նաև ՄԿԾ-ների վերաբերյալ որոշակի տեղակատվության հրապարակումը ԵՄՀ կայքէջում, ինչը հնարավորություն է տալիս դիմորդներին, ուսանողներին իրազեկված լինել համապատասխան կրթական գործընթացների մասին:

Այս համատեքստում փորձագիտական խումբն արձանագրում է, որ Գիտական խորհրդի և Կառավարման խորհրդի գործունեության /հաշվետվություններ, վերլուծություններ, կայացվող որոշումներ/ վերաբերյալ տեղեկատվության մասով հրապարակումները սակավաթիվ են: Հաշվի առնելով այս մարմինների գործունեության կարևորությունը և կայացվող որոշումների բովանդակությունը՝ առանձին դեպքերում դրանք ևս կարող են հրապարակվել, ինչը կնպաստի սույն խորհուրդների գործունեության թափանցիկության երաշխավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵՄՀ գործուն քայլերը՝ հետադարձ կապերի ստեղծման մեխանիզմների զարգացման կապակցությամբ, ինչպես նաև ԵՄՀ հանձնառությունը՝ շարունակաբար իրականացնել հասարակությանը գիտելիքների փոխանցումը երաշխավորող համապատասխան միջոցառումներ, ինչը վկայում է ՄՈՒՀ-ի՝ բարձր հասարակական պատասխանատվության մասին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա է հաշվետվողականության արտաքին և ներքին համապատասխան համակարգ, ԵՄՀ-ն փորձում է իրականացվող գործընթացները հասանելի դարձնել հասարակությանը՝ համապատասխան հարթակների միջոցով, գործում են հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, բուհը շարունակաբար քայլեր է իրականացնում դրանք բարելավելու ուղղությամբ, առկա են հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման կառուցակարգեր, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՄՀ-ն միջազգայնացումն ու արտաքին կապերի զարգացումը կարևորել է իր 2019-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով՝ շեշտադրելով համագործակցության ընդլայնումը: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ HARMONY ծրագրի շրջանակներում ԵՄՀ-ն մշակել է միջազգայնացման առանձին ռազմավարություն, ըստ որի՝ միջազգայնացումը պետք է ներքին համայնքի յուրաքանչյուր անդամի գործունեության անքակտելի մասը դառնա, ինչը կապահովի հաստատության «միջազգային ԴՆԹ-ի» զարգացումը: Ընդգծելով կառավարման, դասավանդման և ուսումնական ծրագրերի, ուսանողների և աշխատակիցների, ինչպես նաև հետազոտությունների միջազգայնացման կարևորությունը՝

ԵՄՀ-ն Միջազգայնացման ռազմավարական ծրագրի համար սահմանել է 5 բաղադրիչ, այդ թվում.

1. Կառավարման և աշխատակազմի միջազգայնացում,
2. Արտագնա և ներգնա ուսանողական շարժունակության խթանում և միջազգային ուսանողների թվի աճ,
3. Ուսումնական պլանների և կրթական միջազգայնացում,
4. Հետազոտության միջազգայնացում և միջազգային համագործակցության ընդլայնում,
5. ԵՄՀ միջազգային տեսանելիության բարձրացում:

Ընթացիկ տարում ԵՄՀ-ն Իտալիայի Տերամոյի համալսարանի հետ մշակել և ԵՄ ֆինանսավորմանն է ներկայացրել «Sustainability and Internationalization capacities to promote modernisation of Newcomers Higher Education in Neighbourhood East Countries» կարողությունների զարգացման ծրագիրը, որի նպատակն է աջակցել բուհերին մշակել միջազգայնացման ռազմավարություններ, ներդնել նոր ուսուցման մեթոդներ (թվային տեխնոլոգիաների օգնությամբ), բարձրացնել հիբրիդային կրթության արդյունավետությունը, մշակել կայուն զարգացումը խթանող մոդուլներ, ինչպես նաև իրականացնել պիլոտային փոխանակման ծրագրեր կոնսորցիումի անդամ բուհերի միջև:

ԵՄՀ-ն ուսանողների և դասախոսների փոխանակում է իրականացնում սկսած 2012 թ.-ից և ընդլայնում է իր միջազգային համագործակցությունը՝ առաջնորդվելով միջպետական կանոնակարգերով: ԵՄՀ-ում փոխանակումների գործընթացը կանոնակարգող փաստաթղթային հենքը մշակվել և ներդրվել է սկսած 2019 թ.-ի հունիսից՝ «Ուսանողների ակադեմիական շարժունության և արդյունքների ճանաչման քաղաքականության» հաստատմամբ:

ԵՄՀ-ն մշակել և ներդրել է «Միջազգային շարժունության կազմակերպման կարգ»-ը, որի համաձայն իրականացվում է ուսանողների և աշխատակիցների ընտրությունն ու հետագա շարժունության կազմակերպումը, ինչպես նաև մշակվել և ներդրվել է «Կրեդիտային շարժունության արյունքների ճանաչման ընթացակարգը»: Ներդրված քաղաքականության և համապատասխան ընթացակարգերի հիման վրա ԵՄՀ կողմից ճանաչվում և ուսանողի Դիպլոմի հավելվածում արտացոլվում են ինչպես փոխանակումների, այնպես էլ զանգվածային բաց առցանց դասընթացների (MOOCs) արդյունքները, եթե դրանք նախապես համաձայնեցվել են ամբիոնի հետ և բխում են ուսանողի հիմնական կրթական ծրագրի նպատակներից և վերջնարդյունքներից:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման նպատակով համալսարանում գործում է Միջազգային կապերի բաժինը, որի գործունեությունը կանոնակարգվում է Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի բաժնի գործունեության կարգով: Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ Միջազգային կապերի բաժինն ունի իր աշխատանքային տարածքը՝ կահավորված բոլոր համապատասխան

հարմարություններով: Բաժինն ունի ղեկավար և միջազգային ուսանողների հարցերով զբաղվող աշխատակից: Կենտրոնի գործունեության որակի գնահատումն իրականացվում է ներքին և արտաքին մեխանիզմների միջոցով: Բուհի ներկայացուցիչները արտաքին գնահատման մեխանիզմ են դիտարկում յուրաքանչյուր նախագծի պայմանագրի հիման վրա՝ հիմնականում դոնորների և Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից կատարվող գնահատումները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կատարված աշխատանքները, լինելով հիմնականում ուղղված ուսանողներին, դասախոսներին և աշխատակիցներին, գնահատվում են վերջիններիս կողմից ՈԱ կենտրոնի կողմից կազմակերպվող գնահատումների միջոցով: Փորձագիտական խումբն արձանագրում է, որ ԵՄՀ ներքին շահակիցները բարձր են գնահատում ԵՄՀ միջազգայնացմանն ուղղված քայլերը: Ըստ ՈԱ կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունների՝ ուսանողների 71%-ը և աշխատակիցների 84%-ը գտնում է, որ բուհը ստեղծում է բավարար հնարավորություններ միջազգային ծրագրերի մասնակցության համար, ուսանողների 69%-ը և աշխատակիցների 90%-ը փաստում է, որ տարածվում է տեղեկատվություն միջազգային առկա ծրագրերի համար: Ուսանողների 53%-ը և աշխատակիցների 80%-ը համարում է, որ միջազգային փոխանակման ընտրության չափանիշները հստակ են և օբյեկտիվ: Հիմք ընդունելով իրականացված վերլուծությունը և հաշվի առնելով, որ ուսանողների մի մասը փոխանակման ծրագրերին ընտրության չափանիշների ընկալման խնդիր ունեն՝ Միջազգային կապերի կենտրոնի կողմից պլանավորվել են տեղեկատվական օրեր, որոնց շրջանակներում կրկին կներկայացվեն ընտրության չափանիշները և գնահատման սկզբունքները:

ԵՄՀ-ում միջազգայնացման գործառույթը նաև տարրալուծված է և խրախուսվում են տարբեր ստորաբաժանումների և առանձին անձանց կողմից նախաձեռնությունները, ընդ որում՝ նման նախաձեռնությամբ հանդես եկած աշխատակիցն էլ, ըստ էության, ղեկավարում է տվյալ նախագիծը: Խոշոր ռազմավարական նախագծերի համար ռեկտորի հրամանով ձևավորվում են համապատասխան աշխատանքային խմբեր (օր.՝ ARMDOCT, T-GREEN, միջազգային կրկնակի դիպլոմի ծրագրեր և այլն):

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ԵՄՀ ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Եվրասիա միջազգային համալսարանը համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հաստատությունների և կառույցների հետ՝ նախորդ հավատարմագրումից հետո ընդլայնելով փոխգործակցության շրջանակը: Համալսարանի միջազգայնացումն իրականացվում է մի քանի ուղղություններով՝ ԵՄՀ գործունեության հիմնական ոլորտների միջազգայնացում, աշխատակազմի միջազգայնացում, արտագնա և ներգնա ուսանողական շարժունակության խթանում, միջազգային ուսանողների թվի աճ:

Ներկայումս բուհը ներգրավված է կարողությունների զարգացման երկու նախագծում, որոնցից մեկը՝ ԵՄՀ համակարգմամբ, իսկ մյուսը՝ ԵՄՀ համահամակարգմամբ: Համալսարանը համակարգում է Ժան Մոնե մոդուլի և Ժան Մոնե ամբիոնի ստեղծման աշխատանքները,

«Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան (ARMDOCT), Էրազմուս+ ՀԳ2» ծրագիրը, համահամակարգմամբ՝ «Մագիստրոսական կրթության փոխարկեպումը՝ հանուն կանաչ և կայուն ապագայի (T-GREEN), Էրազմուս+ ՀԳ2» ծրագիրը՝ Ճարտարապետության և շինարարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ միասին և այլն:

ԵՄՀ միջազգայնացմանն է միտված նաև Էստոնիայի Արտաքին գործերի նախարարության հովանավորությամբ և INNOVE հիմնադրամի կողմից իրականացող «Էստոնիայի կրթական լավագույն փորձի փոխանակում» ծրագիրը, ընդ որում՝ Ծրագրի շրջանակներում բուհի պատվիրակությունն այցելել է Էստոնիա, ուսումնասիրել տեղի լավագույն փորձը՝ կրթության և կառավարման համատեքստում:

Համալսարանը շարունակաբար ուսումնասիրում է ԵՄ գործընկեր համալսարանների կրթական ծրագրերը՝ ապահովելու կրթական ծրագրերի համադրելիությունն ու ներդաշնակեցումը, ինչպես նաև խթանելու անձնակազմի և ուսանողների շարժունությունը:

Աշխատակազմի միջազգայնացմանն են միտված վարչական և դասախոսական կազմի արտագնա փոխանակումները, որոնք հնարավորություն են տալիս համալսարանի համապատասխան աշխատակիցներին պարբերաբար վերապատրաստվել եվրոպական բուհերում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թեև 2019-2021թթ. շարժունության ցուցանիշները կտրուկ նվազել են՝ պայմանավորված Covid-19-ի տարածմամբ, այնուամենայնիվ, ըստ ՄՈՒՀ-ի ներկայացրած տվյալների, ընդհանուր գործող փոխանակումների պայմանագրերի թիվը ԵՄՀ-ում հասնում է 17-ի:

Որպես աշխատակազմի միջազգայնացման ուղղված միջոցառում՝ համալսարանը դիտարկում է նաև օտարերկրացի դասախոսական և վարչական անձնակազմի ներգրավումը: Այսպես՝ ԵՄՀ կառուցվածքային որոշ ստորաբաժանումների ղեկավարներ օտարերկրացի են, ովքեր իրենց երկրների փորձն են ներդնում ԵՄՀ-ում (օր.՝ միջազգային բաժնի ղեկավար, Իրավագիտության ամբիոնի վարիչ): Բացի այդ, ԵՄՀ-ն ԱՄՆ կրթության և հետազոտությունների կենտրոնի տրամադրված ֆինանսավորմամբ 2022-23 ուսումնական տարվա համար այցելու դասախոսի կրթաթոշակով հյուրընկալել է գիտությունների թեկնածուի աստիճան և դասավանդման փորձ ու միջազգային որակավորում ունեցող ՌԴ քաղաքացի հանդիսացող դասախոսի, որը որպես հիմնական աշխատակից հրամանագրվել է ԵՄՀ լեզուների, հաղորդակցության և մանկավարժության ամբիոնում:

Արտագնա և ներգնա ուսանողական շարժունակության խթանման շրջանակներում ՄՈՒՀ-ի կողմից իրականացվում են ուսանողների փոխանակումների ծրագրեր: ԵՄՀ-ն կնքել է Էրազմուս+ ծրագրի շրջանակներում պրակտիկայի կազմակերպման պայմանագիր, որի շրջանակներում յուրաքանչյուր կիսամյակ առնվազն վեց ուսանող մասնակցում է միջազգային փոխանակման:

2020 թվականին ՈԱ կենտրոնի կողմից իրականացվել է հետազոտություն՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասնակցած ԵՄՀ ուսանողների շրջանում: Հարցումային հետազոտությանը մասնակցել է շարժունությանը մասնակցած ուսանողների 92%-ը:

Հետազոտության արդյունքում, գրանցվել է փոխանակման ծրագրերի մասնակիցների աշխատանքի տեղավորման բավականին բարձր ցուցանիշ (83%), ինչպես նաև մասնագիտական զբաղվածության բարձր ցուցանիշ (69%)՝ ի համեմատություն փոխակման չմասնակցած ուսանողների:

Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ ԵՄՀ-ն՝ իբրև ՄՈՒՀ-ի միջազգայնացման առանցքային ուղղություն, դիտարկում է միջազգային ուսանողների ներգրավվումը: 2022-2023 ուսումնական տարում միջազգային ուսանողների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 46%-ով, իսկ 2018-2019 ուստարվա համեմատ՝ 300%-ով: 2022-2023 ուստարվա դրությամբ ԵՄՀ-ում սովորում է թվով 151 օտարերկրացի ուսանող՝ Իրաքից (34%), Սիեռա Լեոնեից (22%), Նիգերիայից (16%), Իրանից (8%), Գանայից (8%) և այլ երկրներից:

Փորձագիտական այցի շրջանակներում հայտնի դարձավ, որ ՄՈՒՀ-ը ուսանողների գիտահետազոտական և նախաավարտական պրակտիկաները կազմակերպելու նպատակով համագործակցում է տարբեր պետական և այլ կառույցների հետ (դպրոցներ, վարժարաններ, ՀՀ քննչական կոմիտե, փաստաբանական գրասենյակներ, գիտահետազոտական ինստիտուտներ, բանկեր և այլն): Գործատուների հետ կապերը սերտացնելու և ուսանողների գործնական հմտությունները զարգացնելու նպատակով գործարվել է ավարտական աշխատանքների համաղեկավարների ինստիտուտը, որը դեռևս լայն տարածում չի գտել:

«ԵՄ և գործընկեր երկրների բարձրագույն կրթության, հետազոտության և նորարարության բնագավառների միջազգայնացման ներդաշնակության զարգացման ծրագիր է (HARMONY), Էրազմուս+ ՀԳ2» ծրագիրը՝ Սևիլիայի համալսարանի հետ միասին, իրականացվել է 2016-2019թթ., իսկ, «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը (ASPIRE), Տեմպուս IV» ծրագիրը՝ Իլյա պետական համալսարանի հետ միասին՝ 2012-2015թթ.:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԵՄՀ 2019-2025թթ. Ռազմավարական ծրագրի «Մարդկային կապիտալի զարգացում» Նպատակ 1-ի շրջանակներում՝ ԵՄՀ-ն սահմանել է, որ աշխատակազմի առնվազն 50%-ը մինչև 2022 թվականը պետք է B1 մակարդակով տիրապետի անգլերենին: Համալսարանի աշխատակիցների, այդ թվում՝ վարչական, ուսումնաօժանդակ և դասախոսական կազմի անգլերենի իմացության համապատասխան մակարդակ ապահովելու նպատակով ԵՄՀ ԳԽ 10.04.2020թ. նիստին որոշվել է կազմակերպել անգլերենի անվճար դասընթացներ: Համաձայն ինքնավերլուծության շրջանակներում ներկայացված տվյալների՝ վարչական աշխատակիցների 68%-ը և դասախոսական կազմի 46%-ը տիրապետում են անգլերենին՝ առնվազն B1 մակարդակով:

Բացի այդ, խրախուսվում է նաև անգլերենով դասավանդումը: Համաձայն ԵՄՀ ԳԽ 02.07.2019թ. նիստին կայացրած որոշման՝ դասախոսական կազմը ստանում է 40%-ի չափով բարձր ժամավճար՝ հայալեզու խմբում անգլերենով դասավանդելու համար և 60%-ով բարձր ժամավճար՝ օտարերկրյա խմբում դասավանդելու համար (նախկին 30%-ի փոխարեն):

ՄՈՒՀ-ում կազմակերպվում է նաև ուսանողների օտար լեզուների ուսուցում: 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակից դրանց դասավանդումն իրականացվել է ըստ մակարդակների խմբերի ձևավորմամբ: Յուրաքանչյուր ուստարվա սկզբին Լեզուների, մանկավարժության և հաղորդակցության ամբիոնը կազմակերպում է նոր ուսանողների անգլերենի մակարդակը ստուգող՝ Քեմբրիջի համալսարանի հրատարակրության դիագնոստիկ թեստ (Placement Test), որը բաղկացած է գրավոր և բանավոր բաղադրիչներից: Թեստին մասնակցում են համալսարանի բոլոր ամբիոնների ուսանողները: Արդյունքներն ամփոփելուց հետո ուսանողները բաժանվում են խմբերի: Անգլերենի դասընթացները, ըստ ուսպլանի, նախատեսված է անցկացնել 4 կիսամյակ: Համաձայն ԵՄՀ ինքնավերլուծության՝ այս մոտեցումն իր ազդեցությունն է ունեցել ուսանողների լեզվական հմտությունների զարգացման վրա, մասնավորապես՝ 2022-2023 ուսումնական տարվա գնահատման արդյունքներով բուհի ուսանողների 57%-ը տիրապետում է անգլերենին՝ առնվազն A2 մակարդակով:

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ օտարերկրա ուսանողների մակարդակում առկա է լեզվահմացության խնդիր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ երբեմն առկա են լինում անգլերեն մասնագիտական նյութերի ուսումնասիրման և յուրացման խնդիրներ՝ պայմանավորված օտար լեզուների ոչ բավարար մակարդակի տիրապետելով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը, ինչը հիմքեր է ստեղծում հաստատության միջազգայնացման համար: Վերջին տարիներին իրականացված միջազգային ծրագրերը, հաստատված գործընկերային կապերը մեծապես նպաստել են ԵՄՀ տեսանելիության բարձրացմանը՝ հնարավորություն ընձեռելով նաև ուսանողներին և դասախոսներին ծանոթանալու համանման այլ կրթական հաստատությունների փորձառությանը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում բուհի շարունակական ջանքերը՝ միտված միջազգային ծրագրերի միջոցով բուհի ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ 2019-2025թթ. Ռազմավարության համատեքստում բուհը միջազգայնացման նպատակներին հասնելու համար ձևավորել է համապատասխան ենթակառուցվածք՝ Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնից առանձնացնելով Միջազգային կապերի կենտրոնը: Այս համատեքստում կարևոր է, որ նշված ստորաբաժանումը, ըստ էության, շարունակում է գործել Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի գործունեության կարգով սահմանված կառուցակարգերով: Կանոնակարգերի տարանջատումը բուհին հնարավորություն կտա առավել հստակ սահմանելու կենտրոնի գործառույթները և պատասխանատվության շրջանակը:

Փորձագիտական խումբը կարևորում է ԵՄՀ-ի կողմից միջազգայնացմանն ուղղված համապատասխան ռեսուրսների տրամադրումը, ինչը մեծապես նպաստում է միջազգայնացման գործընթացների ակտիվացմանը և փոխգործակցության հաստատմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող համագործակցային միջոցառումները օտարերկրյա բուհերի հետ կրթական ծրագրերի համահնչեցման նպատակով, ինչը որոշակիորեն բարձրացնում է նաև շարժունության ցուցանիշները: Այս գործընթացների արդյունավետության համակողմանի գնահատումը, շարժունության խրախուսման մեխանիզմների ընդլայնումը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ շարժունության ցուցանիշների կայուն դինամիկան ապահովելու տեսանկյունից: ՄՈՒՀ-ի համագործակցային հարաբերությունների ընդգրկուն լինելը, ներառելով տեղական և միջազգային հաստատություններ, պետական և մասնավոր կառույցներ, ևս նպաստում է ՄՈՒՀ-ի տեսանելիության բարձրացմանն ու համագործակցության դաշտի ընդարձակմանը՝ հնարավորությունն ընձեռելով զարգացնելու ուսանողների կարողությունները տարաբնույթ պրակտիկաների միջոցով:

Միջազգայնացման գործընթացների արդյունավետությունը բարձացնելու տեսանկյունից կարևոր հանգամանք է, որ բուհը ինչպես 2018թ. հավատարմագրման գործընթացում, այնպես էլ այժմ նախատեսում է նաև կրթական ծրագրերում անգլերենով դասավանդվող դասընթացների թվի տարեցտարի ընդլայնում, ուստի՝ այս նպատակով շարունակաբար ընդլայնվում է նաև կրթական ծրագրերում անգլերենով առաջարկվող դասընթացների թիվը: Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևորում է բուհի կողմից լեզվաիմացության պահանջների նվազագույն շեմի սահմանման անհրաժեշտությունը, ինչը իրապես կրթական ծրագրերի բարեհաջող իրականացման առանցքային գրավական է:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը սահմանել է միջազգայնացման և արտաքին կապերի հաստատման քաղաքականություն և մոտեցումներ, շարունակաբար զարգացնում է համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների ու կառույցների հետ, խրախուսում է անձնակազմի և ուսանողների շարժունությունը, բուհի կողմից քայլեր են ձեռնարկվում օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն բավարարում է 9-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար***:*

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՄՀ-ում գործում է Որակի ապահովման կենտրոն, որի կանոնադրությունը վերջին անգամ որոշակի խմբագրման է ենթարկվել 2013 թ.-ին: ԵՄՀ որակի ապահովման գործընթացները կանոնակարգվում են որակի ապահովման քաղաքականությամբ, ինչպես

նաև բուհը 2014 թ.-ին հաստատել է ԵՄՀ Որակի ապահովման ուղեցույցը, որը 2016 և 2019 թթ.-ին լրամշակել են՝ նկատի ունենալով նախորդ ինստիտուցիանալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում տրված խորհրդատվությունները, կառավարման օղակում ավելացրել են ամբիոնների որակի ամբիոնային մասնագետներ, որակի գործակալ ուսանողներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ամբիոնային մասնագետների և որակի գործակալ ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում հստակ արտահայտված չէ:

2019-2025 թթ.-ի ՌԾ-ում առկա են գործողություններ՝ ուղղված որակի ապահովման գործընթացներին, որոնցում ներգրավված է ՈԱԿ-ը: Մասնավորաբար՝ 1.ներդրված որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատում, ընթացիկ մոնիթորինգ, աուդիտ, 2.կրթական բովանդակության կառավարման համակարգի կատարելագործում և որակի ապահովում, 3. Կրթական ծրագրերի մշտադիտարկում և այլն:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ նախորդ հավատարմագրումից հետո ընդլայնել են իրականացվող հետազոտությունները, մասնավորաբար տվյալներ են հավաքագրում բուհում ընթացող գործընթացների վերաբերյալ, իսկ 2022 թ.-ին իրականացրել են որոշակի որակական հետազոտություններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱԿ-ի համար հասանելի են բոլոր գործընթացները՝ դիտարկման և մշտադիտարկման համար: ՈԱԿ-ը զեկույցներ է ներկայացնում Գիտական և Կառավարման խորհուրդներում՝ նշելով որակի ապահովման գործընթացների արդյունքում դուրս բերված խնդիրները:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնը գործում է ըստ կանոնադրության, որում սահմանված են գործառույթները: Առկա են ՈԱԿ-ի ղեկավարի, մասնագետի, ամբիոնային մասնագետի պաշտոնների նկարագրեր, որոնք հաստատվել են 2016 թ.-ին և որոնցում նշվում են ներկայացվող պահանջները, գործառույթները, պարտականությունները, իրավունքներն ու պատասխանատվությունները: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՈԱԿ-ում առկա է ստորաբաժանման ղեկավարի և մասնագետի հաստիքները, և այցի ընթացքում միայն ղեկավարի հաստիքն էր զբաղեցված: ՈԱԿ-ի համար նախատեսված է աշխատանքային սենյակ՝ համապատասխան տեխնիկական և այլ ռեսուրսերով ապահովված: Փորձագիտական այցից պարզվեց, որ որակի ապահովման գործընթացներով, հետազոտություններով գլխավորապես ՈԱԿ-ն է զբաղվում և նրա համար հասանելի են բոլոր գործընթացները, այդուհանդերձ հստակ տեսանելի չէ որակի ապահովման ամբիոնային մասնագետների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՈԱԿ-ն ունի տարեկան աշխատանքային պլաններ, որոնց համապատասխան իրականացնում է իր գործունեությունը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ պլաններում կան միջոցառումներ, որոնք նախատեսված են ՌԾ-ով, սակայն չի նշվում թե այդ միջոցառման

իրականացման հարցում ՈԱԿ-ը կոնկրետ ինչ գործողություններ պետք է իրականացնի, որն է ՈԱԿ-ի դերը (մասնավորաբար՝ 1. պրակտիկաների նպատակային կազմակերպում, 2. ռեսուրսների, տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների շարունակական բարելավում և այլն)։ Կան նաև այլ միջոցառումներ, որոնց դեպքում ևս հստակ չի երևում ՈԱԿ-ի կողմից կատարվող գործողությունը, որպես պատասանատուներ բացի ՈԱԿ-ից հանդես են գալիս նաև այլք։ Առկա չէ միջոցառումների համար նախատեսված բյուջե։

ՈԱԿ-ը ներգրավված է տարբեր միջազգային ծրագրերում։ ԵՄՀ-ն 2021 թ.-ին ներգրավվել է ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ֆինանսավորվող «Որակի ներքին ապահովման կարողությունների զարգացում ՀՀ բուհերում» ծրագրում։ Ծրագրի շրջանակներում ԵՄՀ-ի ավելի քան 10 աշխատակից վերապատրաստվել է և հետագայում ներգրավվել որակի ապահովման ներքին աշխատանքներում։ Ըստ անհրաժեշտության որակի ապահովման գործընթացների իրականացման համար կազմվում են տարբեր աշխատանքային խմբեր։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ որակի ապահովման գործընթացների համար առանձին բյուջե չի նախատեսվում, բյուջեով նախատեսված է ՈԱԿ աշխատակիցների աշխատավարձ, նաև ինքնավերլուծության իրականացման ժամանակ է որոշ բյուջե հատկացվել։

ԵՄՀ-ի աշխատակիցներից մեկը ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի անդամ է, ևս մեկական աշխատակից և ուսանող ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներում ընդգրկված են եղել որպես փորձագետներ։

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում։

ԵՄՀ-ն ներքին և արտաքին շահակիցներին որակի ապահովման գործընթացներում ներգրավում է մի շարք մեխանիզմների միջոցով։ ԵՄՀ ՈԱԿ-ն իրականացնում է հարցումներ ուսանողների շրջանում (դասախոսների գնահատման հարցումներ և համալսարանում իրականացվող գործընթացների, մատուցվող ծառայությունների արդյունավետության, թույլ և ուժեղ կողմերի գնահատման հարցումներ, հեռավար ուսուցման գնահատման հարցումներ), աշխատակիցների շրջանում (համալսարանում իրականացվող գործընթացների, մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման հարցումներ, թույլ և ուժեղ կողմերի ներկայացում, հեռավար ուսուցման գնահատման հարցումներ, շարժունության ծրագրերի գնահատման հարցումներ)։ Ուսանողներն ու դասախոսները ներգրավված են նաև կառավարման օղակներում և ներգրավվում են տարբեր աշխատանքային խմբերում (մասնավորաբար՝ ինքնավերլուծության իրականացման, ՄԿԾ-ների մշակման և բարելավման, փաստաթղթերի գնահատման և այլ նպատակներով)։ Փորձագիտական այցից պարզվեց, որ ուսանողների՝ կառավարման օղակներում ներգրավվածությունը չի հանգեցրել նրանց՝ այդկերպ որակի ապահովման գործընթացներում ներգրավվածության, նախաձեռնողականությամբ հանդես չեն եկել։

ԵՄՀ-ն համագործակցում է ՀՀ գործատուների հանրապետական միության հետ, դիտարկում են միության կողմից իրականացված հետազոտությունները, սակայն ԵՄՀ-ի հետ համագործակցող գործատուների շրջանում ՈԱԿ-ն առանձին ուսումնասիրություններ չունի: Գործատուներ են ներգրավված դասավանդման գործընթացում, կառավարման մարմիններում, ամփոփիչ ատեստավորման հանձնախմբերում:

ԵՄՀ-ի կողմից իրականացված միջոցառումների, գիտաժողովների մասնակիցների շրջանում ևս իրականացվում են հարցումներ՝ գնահատելու դրանց արդյունավետությունը:

Փորձագիտական այցից պարզվեց, որ շրջանավարտները ներգրավված չեն համալսարանի որակի ապահովման գործընթացներում:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Ըստ 2014 թ.-ին հաստատված ԵՄՀ-ի որակի ապահովման ուղեցույցի՝ նախատեսված է Որակի կառավարման համակարգի վերանայման չորս պարբերաշրջան. 4-5 տարին մեկ՝ ըստ ՌԾ վերանայման և հավատարմագրման, տարեկան՝ մշտադիտարկման և ներքին աուդիտի իրականացման միջոցով, եռամսյակային և ամսական՝ ընթացիկ հարցերի քննարկմամբ: Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ ՈԱԿ-ը այս փուլում կարևոր ձեռքբերում է համարում, որ հաշվետու է կառավարման խորհրդին՝ դրանով իսկ ապառվելով որակի ապահովման գործընթացների անկախություն: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ դեռևս նկատելի չէ կառավարման խորհրդի լիարժեք և մոտիվացված իրազեկվածությունը և ներկայացված խնդիրների լուծման ուղղությամբ նախաձեռնողականությունը:

Ըստ ինքնավերլուծության՝ Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման ժամանակ բենչմարքինգ իրականացվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում գործող համագործակից բուհերի հետ, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ դրանք փաստաթղթավորված հստակ վերլուծություններ չեն:

ՈԱԿ-ի կողմից 2022 թ.-ին կազմվել է որակի կառավարման համակարգի կիրառման արդյունավետության գնահատում (նեքին ստուգման հաշվետվություն) փաստաթուղթը: Այստեղ ներկայացված են կառավարական և ծառայությունների մատուցման գործընթացների գնահատման արդյունքները: Մասնավորաբար, նշվում է, որ ՈԱ ուղեցույցի 6-րդ բաժինը (որակի պլանավորում, վերահսկողություն և վերանայում) ամբողջությամբ գործում է և շեղումներ չկան: ՈԱ քաղաքականության վերաբերյալ նշվում է, որ ըստ այդ փաստաթղթի նախատեսվել է ամենամյա վերանայում, սակայն վերանայման հաճախականությունը չի պահպանվել, քանի որ դրույթները պահպանել են արդիականությունը: Այս փաստաթուղթը 2012 թ.-ին հաստատվելուց հետո չի վերանայվել: Փորձագիտական այցից պարզվեց, որ այս հաշվետվությունը կազմելիս ՈԱԿ-ը ներգրավում է համապատասխան շահակիցների, սակայն այդ գործընթացի պլանավորումն ու իրականացումը հստակ արտահայտված չէ և կարող է իրավիճակային բնույթ կրել:

ԵՄՀ աշխատակիցները և ղեկավար կազմը կարևորում են ինստիտուցիոնալ հավատարմագման գործընթացը: ԵՄՀ-ն մինչ այս արդեն 2 անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց է անցել, որոնցից յուրաքանչյուրը համալսարանի գործընթացների վրա էական ազդեցություն է ունեցել ինչպես փաստաթղթերի մշակման, ներդրման, այնպես էլ տվյալների հավաքագրման, հետազոտությունների և վերլուծությունների իրականացման տեսանկյունից:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ տարբեր գործընթացներ գտնվում են պլանավորման, իրականացման կամ գնահատման փուլերում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առկա է աղճատում այս փուլերի միջև, մասնավորաբար՝ ռազմավարական պլանավորման և կրթական ծրագրերի իրականացման գործընթացներում: Միաժամանակ, գնահատումից բարելավում անցումը երբեմն հստակ արտահայտված չէ նշյալ գործընթացներում:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ԵՄՀ-ն ունի որակի ապահովման գործընթացներին ուղղված մշակված փաստաթղթեր, որոնք մշակելիս որպես հիմք ընդունվել են Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) և ՈԱԱԿ-ի պահանջներն ու հավատարմագրման չափանիշները, Որակի ապահովման եվրոպական չափանիշներն ու ուղենիշները (ESG):

ԵՄՀ-ն ինստիտուցիոնալ հավատարմագման ինքնավերլուծության իրականացման երեք փորձ ունի: Ինքնավերլուծություն իրականացնող հանձնախմբում ներգրավված են միայն ներքին շահակիցներ: Փորձագիտական այցից պարզվեց, որ ինքնավերլուծություն իրականացնող խմբում ներգրավվել են ինչպես նախկինում արդեն ինքնավերլուծության իրականացման փորձ ունեցողներ, այնպես էլ առանց նման փորձի անձինք: Սակայն նման փորձ չունեցող անձինք ներգավված են եղել ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ֆինանսավորվող «Որակի ներքին ապահովման կարողությունների զարգացում ՀՀ բուհերում» ծրագրի շրջանակներում կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ նախորդիվ ինքնավերլուծության իրականացման փորձի հիման վրա, այժմ իմանալով, թե ինչպիսի տվյալներ են անհրաժեշտ լինելու, կանխավ են հավաքում դրանք՝ այդպիսով գործընթացն առավել համակարգված կազմակերպելով:

Ստորաբաժանումների, ռեկտորի և ըստ ՌԾ-ի հաշվետվությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք չեն պարունակում ինքնավերլուծության իրականացման համար բավարար տվյալներ: Ինքնավերլուծության միջոցով բուհի գործընթացներն ուսումնասիրելիս պարզվեց, որ դրանում ըստ չափորոշիչների որոշ հավելյալ տվյալների անհրաժեշտություն կա (մասնավորաբար՝ մի շարք տվյալներ և վերլուծություններ միայն 1 տարվա համար են, ինչը թույլ չի տալիս դինամիկան դիտարկել): Փորձագիտական այցից պարզվեց, որ ինքնավերլուծության խմբում չընդգրկված շահակիցները իրազեկ չէին ինքնավերլուծության բովանդակության վերաբերյալ: Միաժամանակ, SWOT վերլուծության

հատկապես թույլ կողմերի և վտանգների կապը ինքնավերլուծության տեքստի հետ նկատելի չէ։

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԵՄՀ գործընթացների որակի մասին տեղեկատվության թափանցիկությունն ապահովվում է պաշտոնական կայքի միջոցով, որտեղ առկա են կանոնակարգեր, ընթացակարգեր և ուղեցույցներ, եկամուտների և ծախսերի նախահաշիվներն ու կատարողականները, ռեկտորի հաշվետվությունները։

Համալսարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը տարածվում է նաև սոցիալական ցանցերում՝ համալսարանի պաշտոնական էջերի միջոցով։ Այսուհանդերձ, կայքում առկա չեն ԿԽ և ԳԽ արձանագրություններ, առկա չեն վերլուծություններ։ Կայքում առկա փաստաթղթերը, հաշվետվությունները անգլերենով ներկայացված չեն։

Փորձագիտական այցից պարզվեց, որ ՈԱԿ-ը ներքին շահակիցներին հետազոտությունների արդյունքները հասանելի դարձնելու համար վերլուծությունները տրամադրում է ստորաբաժանումներին և զեկուցում կառավարման խորհրդում։ Դրանք չեն հրապարակվում կայքում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԵՄՀ-ում կարևորվում են որակի ապահովման գործընթացները թե՛ ղեկավար կազմի, թե՛ աշխատակիցների և ուսանողների կողմից։ Դրա մասին են վկայում մասնավորաբար այն հանգամանքները, որ, ՈԱԿ-ի համար հասանելի են բոլոր գործընթացները և կենտրոնը մասնակցում է բոլոր գործընթացների գնահատմանը, կարող է դիտարկել ցանկացած գործընթաց։ Սա նպաստում է ՈԱԿ-ի առավել անկախությանը, ինչը կարող է հանգեցնել օբյեկտիվ տվյալների հավաքագրման ապահովմանն ու նպաստել դրանց հիման վրա տվյալահենք որոշումների կայացմանը։ Կարևոր է, որ դեռևս 2013 թ.-ից բուհն ունի որակի ապահովման գործընթացների վերաբերյալ փաստաթղթեր, որոնք նաև բարելավել են, կարևոր կլինի շարունակել նման մոտեցումը։ Սակայն անհրաժեշտ է առավել հետևողականորեն դիտարկել փաստաթղթերով նախատեսված դրույթների իրականացման հանգամանքը, մասնավորաբար՝ ապահովել որակի ամբիոնային մասնագետների, որակի գործակալ ուսանողների առավել համակարգված գործունեություն, ինչը կարող է նպաստել որակի ապահովման գործընթացների ապակենտրոնացման։

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև, որ ՈԱԿ-ը հետազոտություններն ընդլայնելու ուղղությամբ աշխատանքներ է իրականացրել, ինչպես նաև փորձագիտական խումբը կարևորում է, որ ՈԱԿ-ի և այլ օղակների կողմից՝ համակողմանի տվյալների հենքով խորը վերլուծությունների իրականացման և դրանց հիման վրա առավել գլոբալ համալսարանական խնդիրների վերհանման ուղղությամբ աշխատանքներ ծավալվեն՝

ներգրավելով ներքին և արտաքին և շահակիցների. սա թույլ կտա բուհի համընթաց զարգացման երաշխիքներ ստեղծել:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ համալսարանն ունի փորձագիտական աշխատանքի փորձառություն ունեցող դասավանդողներ և ուսանողներ, և անընդհատ աշխատանքներ են տարվում աշխատակիցների՝ որակի ապահովման ուղղությամբ կարողությունների զարգացման համար, սակայն փորձագիտական խումբը անհրաժեշտություն է տեսնում գնահատելու ՈԱԿ-ի մարդկային ռեսուրսները համալրման տեսանկյունից՝ պլանավորված գործողությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ համալսարանն ունի ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ որակի ապահովման գործընթացներին միտված, նաև, որ առկա են ՈԱԿ-ի աշխատանքային պլաններ, սակայն անհրաժեշտություն կա հստակեցնելու նախատեսված գործընթացների իրականացման հարցում ՈԱԿ-ի և այլ օղակների դերը, ապահովել հստակ պլանավորում, ինչը կնպաստի պատասխանատվությունների հստակեցմանը և գործընթացների արդյունավետ իրականացմանը:

Փորձագիտական խմբի համար գնահատելի են, որ բուհում առկա են մի շարք մեխանիզմներ (հարցումներ, քննարկումներ, հանձնախմբեր, կառավարման օղակներ), որոնք թույլ են տալիս ներքին և արտաքին շահակիցներին ներգրավվելու որակի ապահովման գործընթացներում, սակայն փորձագիտական խումբը կարևորում է, որ արտաքին շահակիցների ներգրավվածությունն այդ գործընթացներում առավել մոտիվացված և նախաձեռնողական արտահայտվածություն ունենա, ինչը կհանգեցնի նրանց կարիքների հիման վրա բուհի գործունեության ուղղությունների նախանշմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ԵՄՀ որակի ապահովման համակարգի վերանայման համար ազդակներ են դիտարկվում միջազգային և հանրապետական համագործակից բուհերում զարգացումները, արտաքին (ինստիտուցիոնալ հավատարմագրում) գնահատումները՝ հանգեցնելով բուհի տարբեր ոլորտների զարգացման: Այսուհանդերձ, որակի ապահովման համակարգի վերանայման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով փորձագիտական խումբը շեշտադրում է միջազգային և ազգային փորձի ուսումնասիրման առավել հստակ և նպատակային իրականացումը, այնուհետ ԵՄՀ առանձնահատկությունների, հնարավորությունների և նպատակների հետ համադրումը՝ համապատասխան եզրահանգումներ իրականացնելով և այդ հենքով պարբերական վերափոխումներ ձեռնարկելով:

Որակի ապահովման համակարգի բարելավման համար կարևոր է նաև համալսարանի տարբեր գործընթացների համար որակի կառավարման հիմնական սկզբունքի ամբողջական շրջափուլով իրականացումը, շրջափուլերի փոխկապակցվածության ապահովումը: Այս ուղղությամբ փորձագիտական խմբի համար տեսանելի են որոշ աշխատանքներ, սակայն շրջափուլերը դեռևս միմյանց հետ լիարժեք չեն փոխկապակցվում, ինչը կարող է խոչընդոտել որակի ապահովման համակարգի արդյունավետ զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում բուհի փորձը ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության իրականացման հարցում, և նկատելի է փորձի հետքով գրանցված առաջընթացը, ինչպես նաև փորձագիտական խումբը կարևորում է ընթացիկ հաշվետվությունների շրջանակում ինքնավերլուծության համար բավարար տեղեկատվության հավաքագումն ու վերլուծումը՝ ըստ տարիների, ինչը կարող է առավել նպաստավոր լինել բուհի զարգացման համար՝ որպես համակողմանի վերլուծություն: Միաժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է, որ վերլուծություն իրականացնելիս հնարավորինս ապահովվի SWOT վերլուծության փոխկապակցումը և հիմնավորվածությունը, քանի որ այդ պարագայում գուցե հանգամանքները վերագնահատվեն:

Փորձագիտական խումբը համարում է, որ բավականին աշխատանք է իրականացված բուհի գործընթացների որակի մասին տեղեկատվության տարածման ուղղությամբ, այս տեսանկյունից կարևոր են նաև կայքի բարեփոխման ձեռնարկված աշխատանքները՝ համապատասխան գնահատումների հենքով: Սակայն փորձագիտական խմբի դիտարկմամբ անհաժեշտություն կա, որ բուհը իր գործունեության առավել թափանցիկության ապահովման նպատակով արտաքին շահակիցների համար ապահովի հաշվետվությունների, վերլուծությունների հասանելիություն ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՄՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, կարևորում է որակի ապահովման գործընթացները և դրանց կառավարման համար հատկացնում է նյութական և մարդկային ռեսուրսներ, քայլեր է ձեռնարկել ապահովելու ներքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում, ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների և միջազգային ծրագրերի ազդեցությունը որակի ապահովման համակարգի վերափոխման վրա, բուհի գործունեության թափանցիկության ապահովմանն ուղղված քայլերը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Եվրասիա միջազգային համալսարանը բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար**.

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Կարեն Թոչունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

18-ը սեպտեմբերի, 2023 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Կարեն Թոչունյան՝ 2011թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետը: Շարունակել է կրթությունը ԵՊՀ ասպիրանտուրայում և 2013թ.-ին ստացել կենսաբանական գիտությունների թեկնածուի, իսկ 2017-ին՝ կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2015թ.-ից եղել է ԵՊՀ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, 2019-ից՝ դոցենտ, 2021-ից՝ պրոֆեսոր: 2015-2021թթ. եղել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրեն, ապա 2023թ.՝ կենսաբանության ԳՀ ինստիտուտի մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ղեկավար: Հեղինակ է ավելի քան 80 գիտական աշխատությունների:

Արմենուհի Սարգսյան՝ 2006 թ.-ին ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի դոցենտ: 2017-2018 թթ.-ին եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018 թ.-ից Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրենն է: 2018 թ.-ից ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է: 1 ուսումնամեթոդան ձեռնարկի և շուրջ 70 գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

Աիդա Թադևոսյան՝ 2012թ.-ին ավարտել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան, 2015 թվականին՝ ասպիրանտուրան: 2018թ.-ին շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2019թ.-ին՝ ՀՀ դատական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան: 2014թ.-ից Հայաստանի Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի դասախոս է: Ներկայումս ՀՀ Սահմանադրական դատարանի Իրավախորհրդատվական վարչության Փորձագիտական-վերլուծական բաժնի պետն է: Մի շարք գիտական հրապարակումների հեղինակ է:

Հանս-Յուրգեն Դուխշտայն՝ Մասնագիտացել է Դեղագործության և Բժշկական քիմիայի ոլորտներում: Համբուրգի համալսարանի պրոֆեսոր է: Հետազոտության շրջանակում են ռեակտիվ թթվածինը և ազոտի տեսակները, կենսաքիմիան, հակաօքսիդանտները:

Սերգեյ Աբրահամյան՝ 2017-2022 թվականներին սովորել է Հայաստանի Եվրոպական համալսարանի Կառավարման և տնտեսագիտության ֆակուլտետում: Այժմ նույն համալսարանի «Կառավարում» կրթական ծրագրի մագիտրանտ է: Հանդիսանում է Միջազգային բիզնես դպրոցի Արտաքին կապերի և կորպորատիվ համագործակցությունների գծով պատասխանատու: Ավարտել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի Ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

13.06.2023-16.06.2023

	13.06.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	09:30	10:20	50 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:35	11:35	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:45	12:30	45 րոպե
4	Հանդիպում ռազմավարական ուղղություններով նախագծերի ղեկավարների հետ	12:40	13:30	50 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	14:40	15:30	50 րոպե
7	Հանդիպում գործատուների հետ	15:40	16:40	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:00	70 րոպե

	14.06.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում համալսարանի կառավարման խորհրդի հետ	09:30	10:20	50 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	10:30	11:30	60 րոպե
3	Համալսարանի ռեսուրսների և ենթակառուցվածքների դիտարկում	11:50	12:50	70 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ուսանողների (8-10 հոգի) հետ	15:20	16:20	60 րոպե

7	Հանդիպում ստորաբաժանումների (Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի, հանրային կապերի և մարքեթինգի բաժին, միջազգային կապերի բաժին, հետազոտական կենտրոն, Բանբեր, ասպիրանտուրայի բաժին, գրադարան, օժանդակ ծառայությունների բաժին, ֆինանսների կառավարման բաժին, նախապատրաստական բաժին) ղեկավարների հետ	16:30	18:00	90 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	19:00	60 րոպե

	15.06.2023թ.			***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում «Կառավարում» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Իրավագիտություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Ֆարմացիա» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում «Կառավարում» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Իրավագիտություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Ֆարմացիա» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե

3	Հանդիպում «Կառավարում» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Իրավագիտություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Ֆարմացիա» կրթական ծրագրի ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ			14:20	15:00	40 րոպե
6	Բաց հանդիպում			15:10	16:10	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:20	18:00	100 րոպե

	16.06.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	11:00	13:00	120 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:10	16:10	120 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	17:20	60 րոպե
6	Հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Աշխատաշուկայի արդի պահանջների վերաբերյալ ԵՄՀ ուսումնասիրություն	1
2.	ՌԾ տարեկան գործողությունների ծրագրեր	1
3.	Ռազմավարական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություն 2021-2023 թթ.	1
4.	Ռեկտորի տարեկան հաշվետվությունը՝ ըստ ռազմավարական նպատակների և ցուցանիշների 2021-2022թթ.	1
5.	Էթիկայի հանձնաժողովի արձանագրություններ	2
6.	ԵՄՀ խորհուրդներում ներգրավվելու ընտրության չափանիշներ	2
7.	Ստորաբաժանումների տարեկան պլաններ	2
8.	Ռազմավարական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ 2020-2021, 2021-2022 թթ. համար	2
9.	Պրակտիկաների իրականացման ընթացակարգն ու մեթոդաբանությունը վերանայելու հիմքեր	3
10.	Դիպլոմային աշխատանքներ՝ բարձր և ցածր միավորի արժանացած	3
11.	Դասախոսների կողմից կիրառվող դասավանդման և ուսուցման մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով յուրաքանչյուր կիսամյակի ավարտին իրականացված վերլուծությունների ցանկ	3
12.	Հաշվետվությունների օրինակներ Գնահատման ձևաթեթերի օրինակներ	3
13.	Ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվությունները վերջին երեք տարիների համար՝ ըստ ներկայացված 3 ՄԿԾ-ների	3
14.	Դասախոսների արտահոսքի ցուցանիշների վերաբերյալ տվյալներ	3
15.	Ուսանողների հավաքագրման ռազմավարության հաշվետվություն	4

16.	Միջազգային ուսանողների ցանկ՝ ըստ մասնագիտությունների և երկրների	4
17.	Շրջանավարտների բազա	4
18.	«Դիմորդ» բաժինի վերաբերյալ վիճակագրական հիմքեր	4
19.	Պլան ուսումնական հաստատություններ այցերի իրականացման համար	4
20.	Ուսանողների կրթական կարիքներին վերաբերվող տվյալներ	4
21.	Դասախոսների գնահատման արդյունքներին առնչվող հիմքեր	4
22.	«Կողմնորոշման օր»-ին առնչվող հիմքեր	4
23.	Ավարտական և հետազոտական աշխատանքների ընթացքում խորհրդատվական ծառայություններին վերաբերվող հիմքեր	4
24.	Ակադեմիական խորհրդատուի գործառույթները սահմանող պաշտոնի նկարագիր	4
25.	Ընդունարանի կանոնակարգ	4
26.	Ուսանողների դուրս մնալու ցուցանիշներ՝ ըստ կուրսերի	4
27.	Գիտաժողովների մասնակցության ցուցանիշներ՝ ըստ վերջին 5 տարիների	4
28.	Ավարտական աշխատաքնների և թեզերի օրինակներ՝ կազմված նոր ձևաչափով	4
29.	Կրթաթոշակի համար նախատեսված բյուջե և ընտրության չափանիշներ	4
30.	Դասախոսների գահատման չափանիշներ	4
31.	ՊԴ և վարչական կազմի աշխատանքային պայմանագրի օրինակներ	5
32.	Վարիչի օգնականի պաշտոնի նկարագիր, ծրագրի պատասխանատուի պաշտոնի նկարագիր	5
33.	Մատյաններ /ընտրված ծրագրերի համար՝ յուրաքանչյուր կուրսից մեկական/	5
34.	Մագիստրոսական թեզեր /վերջին երեք տարվա համար յուրաքանչյուր կրթական ծրագրի համար երկուական/	5
35.	Դասալսումների մատյաններ /ամբիոններից՝ մեկական/	5

36.	Դասախոսների պորտֆոլիոներ /յուրաքանչյուր ամբիոնից՝ հնգական/	5
37.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	5
38.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը	5
39.	Ամբիոնների հաստիքացուցակը՝ աշխատավարձերով	5
40.	Ուսումնական ծանրաբեռնվածության նորմատիվները	5
41.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	5
42.	Վերապատրաստման փաթեթներ	5
43.	Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ցանկեր	5
44.	Գիտական սեմինարների անցկացման գրաֆիկ	5
45.	Երիտասարդ կադրերի պատրաստման պլան	5
46.	Պրակտիկ դասախոսների աշխատավայրերի ցանկ՝ ըստ դասախոսների	5
47.	Աշխատակազմի համապարփակ հարցման վերլուծության հիմքեր	5
48.	Գիտական որակավորման բարձրացման խթանման նպատակով աշխատավարձերի շերտավորման հիմքեր	5
49.	Հետազոտական կենտրոնի ղեկավարի հաստիքի պաշտոնի նկարագիր	6
50.	Հետազոտական կենտրոնի պլան	6
51.	Ռազմավարական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ	6
52.	Վերջին հինգ տարիների միջազգային տպագրությունների ցանկ	6
53.	«Հետազոտական մեթոդներ» առարկայի նկարագիր	6

54.	Դրամաշնորհներից մուտքեր վերջին 5 տարիների համար	7
55.	Կայքի դիտելիության տվյալներ	8
56.	2021-2022 թթ. ուստարվա կայքի վերլուծություն	8
57.	Երևանի և մարզային դպրոցների աշակերտների, քոլեջների և այլ բուհերի ուսանողների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող կամ այլ խոցելի խմբում գտնվող երիտասարդների համար իրականացված ծրագրերի հիմքեր	8
58.	Էրազմուս+ Ժան Մոնե ծրագրի միջոցով դպրոցների շրջանակներում կազմակերպվող արտագնա սեմինարների հիմքեր	8
59.	«Քոլեջների աջակցման ծրագիր»-ին առնչվող հիմքեր	8
60.	Միջազգային կենտրոնի աշխատակցի պաշտոնի նկարագիր	9
61.	Ուսանողների /Բ-145, Մ-22/ համապարփակ հարցման վերլուծություն (2023թ.)	10
62.	Աշխատակազմի /ՊԴ, վարչական, ՈւՕ/ համապարփակ հարցման վերլուծություն (2023թ.)	10
63.	Միջոցառումների գնահատման օրինակներ	10
64.	Բարելավված ընթացակարգերի օրինակներ և դրանց հիմքեր	10
65.	Դասընթացի և կրթական ծրագրի գնահատումների օրինակներ	10
66.	Որակի ապահովման քաղաքականությունների և ընթացակարգերի համեմատական վերլուծություն	10
67.	Որակի ապահովման պլան	10
68.	Գործատուների կարիքների վերաբերյալ վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. համակարգչային լսարաններ,
3. լաբորատորիաներ,
4. ստորաբաժանումներ,
5. գրադարան-ընթերցասրահ,
6. դատական նիստերի դահլիճ,
7. իրավաբական կլինիկա,
8. հանդիսությունների սրահ,
9. հյուրատուն։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵՄՀ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ

ԳԽ-Գիտական խորհուրդ

ԵՄՀ-Եվրասիա միջազգային համալսարան

ԿԽ- Կառավարման խորհուրդ

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱԿ- Որակի ապահովման կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՊԴ կազմ-պրոֆեսորադասախոսական կազմ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ